

**ՎԱՍՆ
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ**

4 / 2008

Բուն Հայոց 4501 ամի

**FOR THE SAKE OF
JUSTICE**

4 / 2008

Core Armenian 4501

(67)

**Գլխավոր խմբագրի՝
ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**Խմբագրի՝
ԳՈՌ ՍԱՐԳՍՅԱՆ**

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՅԱՆ

ՌԴ Սոցիալական եւ արհեստագիտական գիտությունների ակադեմիայի թղթաբանական ակադեմիկոս

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՄԵԼՍ ՍԱՆԹՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր

ԱՐՄԵՆ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր

ՌԱՖԱԵԼ ՊԱՊԱՅԱՆ

Փորձագետ

**Խմբագրաբան
ՍՈՖԻԱ ԲԱԲԱՅԱՆ
ՍԹԻՎ ԲԼՈՒՄ
ՍՏՅՈՒՄԲՏ ՄՈՒՐ**

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ՝
ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ**

**Editor-in-Chief
GEVORG MANOUKIAN**

**Editor
GOR SARGSIAN**

Scientific Editorial Board

RUBEN AVAGYAN

Doctor of Law, Professor

HOVHANNES HOVSEPYAN

Doctor of Law, Professor

MANUK MKRTCHYAN

Associate Member of the RF Academy of Sociological Sciences

GEVORK POGHOSYAN

Doctor of Philosophy

MELS SANTOYAN

Doctor of Philology, Professor

GARIK KERYAN

Doctor of Political Science

ARMEN MAZMANYAN

Doctor of Law

RAFAYEL PAPAYAN

Expert

**Editors
SOFIA BABAYAN
STEVE BLOOM
STUART MOIR
Designed by
Ani MANUKYAN**

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբ., 2
Հեռ. (+374 322) 2-29-67, Հեռ./Ֆաքս (+374 322) 4-47-81
Էլ. փոստ vasn@acrpc.am
URL: <http://www.acrpc.am>

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, RA
Tel. (+374 322) 2-29-67, Tel./Fax (+374 322) 4-47-81
E-mail: vasn@acrpc.am
URL: <http://www.acrpc.am>

ՀԻՄՆԱԳԻՐՎԵԼ Է 1989թ.
FOUNDED IN 1989

Գրանցված է ՀՀ Արդարադատության
մախարարությունում:
Գրանցման վկայական՝ թիվ 1016

Հիմնադիր և հրատարակիչ՝ **Հայկական
սահմանադրական իրավապաշտպան կենտրոն**

Ստորագրված է տպագրության՝ 2010. 02.15
Ծավալը՝ 4 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 300
Տպագրվել է «ՄԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

IN THIS ISSUE

Ոչ պետական կազմակերպությունների «Զինաթափում՝ հանուն խաղաղության և զարգացման» հռչակագիրը..... 4

Declaration of Non-governmental organisations “Disarmament for the Sake of Peace and Development”..... 4

ԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՏՕ-ի ընդլայնման տրամաբանությունը դաշինքի փոխակերպման գործընթացի համատեքստում..... 8

ARA SAHAKYAN The Logic of NATO’s Enlargement in the Process of Alliance Transformation Context..... 8

ԴԱՎԻԹ ԶԱՄԱՅԱՆ Միջմշակութային ընկալումների առանձնահատկությունները հայաստանյան իրականության պայմաններում..... 17

DAVID DJAMALYAN Peculiarities of Intercultural Perceptions in Context of Armenian Reality..... 17

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԶԼՈՒՄՅԱՆ Հարություն Բյուրդյանի նկարագրած Իսրայել Օրին..... 24

GOURGEN MEJLUMYAN Haroutyun Kyurdian’s Description of Israyel Ori..... 24

ՅՈՒՐԻԿ ԴՈՒՅԱՆ Հայաստանի Հանրապետությունում մահմեդական խռովարարների խաղաղեցումը (1920թ.)..... 31

YURIK GHULYAN The Appeasement of Moslem Rebellious in Republic of Armeni (in 1920)..... 31

ՎԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռուս-ադրբեջանական հարաբերությունները 1990-2004թթ. 39

VANIK HOVHANNISYAN Russian-Azerbaijani Relations in 1990-2004..... 39

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱԳԵՏՅԱՆ Բանկային համակարգի ցուցանիշների փոփոխման միտումները վերջին տարիներին..... 47

HASMIK NAHAPETYAN Trends of Changes in The Banking System Indicators of The Republic of Armenia during the Last Years 47

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԶԼՈՒՄՅԱՆ «Որոգայթ փառաց» գիրքը որպես 18-րդ դարավերջի Մադրասի հայ համայնքի սպասումների արտացոլում ապագա ազատագրված Հայաստանի վերաբերյալ..... 57

GOURGEN MEJLUMYAN “Vorogayt Parats” Book As a Reflection of The Expectations of Madras’s Armenian Community at the end of 18th Century Regarding a Future Free Armenia..... 57

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԶԻՆԱԹ-ԱՓՈՒՄ` ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳ-ԱՅՄԱՆ» ՀՈ-ՉԱԿԱԳԻՐԸ

Ընդունվել է 2009թ.-ի սեպտեմբերի 11-ին ՅՏՎ/ՈՊԿ 62-րդ ամենամյա համաժողովի կողմից Սեխիկոյում:

Հռչակագիրը 2009թ. սեպտեմբերի 18-ին Մեքսիկայի մշտական ներկայացուցիչ, դեսպան Քլոդ Յելլերի կողմից ուղարկվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին:

Նախաբան

Մենք` ավելի քան 55 երկրների շուրջ 340 ՈՊԿ-ների 1300 ներկայացուցիչներս,

Վճռելով փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքներից և խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարձրացումը, ինչպես դա պատկերավոր ձևակերպված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ,

Տագնապելով, որ սովորական զինատեսակների կիրառմամբ օրական 1000 մարդ սպանվում և 3000-ից ավելին ծանր վիրավորվում են,

Ոգեշնչված խաղաղության և արդարության Հաագայի 21-րդ դարի օրակարգով (տես A/54/98 հավելված), որը բռնությունից խաղաղության մշակույթի անցման 50 կետից բաղկացած ծրագիր է, և հավատարիմ պատերազմներին վերջ դնելու հանձնառությանը,

Դեկլարվելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի` միջուկային զինաթափման վերաբերյալ 2008թ.-ի հոկտեմբերի 24-ի 5 կետից

բաղկացած առաջարկով,

Հանձն առնելով նպաստել մշակութային, կրոնական և էթնիկական տարբերությունների նկատմամբ հարգանքի ապահովմանը, որը խաղաղության և անվտանգության հասնելու բանալի է,

Ընդունելով, որ անվտանգությունը, խաղաղությունը, զինաթափումը, Մարդու իրավունքները, սեռային հավասարությունը և զարգացումը սերտորեն կապակցված են տեղական-ազգային, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում,

Ընդունելով, որ Հազարամյակի զարգացման նպատակների նվաճման համար առաջընթացն այս բոլոր ոլորտներում խիստ էական է, ինչը նաև առնչվում է կլիմայական փոփոխությունների և Մարդու իրավունքների օրակարգերով ՅՏՎ/ՈՊԿ ընթացիկ տարվա հանդիպումների հետ,

Հանդիպելով ՄԱԿ-ի ՅՏՎ/ՈՊԿ ամենամյա 62-րդ համաժողովում 2009թ.-ի սեպտեմբերի 9-ից 11-ը Սեխիկո քաղաքում,

Հորդորում ենք ձեռնարկել հետևյալ գործողությունները`

Կառավարություններին և միջազգային կազմակերպություններին

Միջուկային զինաթափում

1. Միջուկային զենքի չտարածման պայմանագրի (ՄՁՊ) վերանայման համաժողովում վերահաստատել և խստացնել

միջուկային զենքի տարածումը կանխարգելելու և միջուկային զենքից զերծ աշխարհի հասնելու պարտավորությունները:

2. Շտապ բանակցություններ սկսել միջուկային զենքի համընդհանուր արգելման և ոչնչացման համաձայնագրի վերաբերյալ հստակ համաձայնեցված ժամանակացույցով:

3. Հասնել միջուկային փորձարկումների համընդհանուր արգելման վերաբերյալ պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ստորագրություններին և վավերացումներին առանց հետագա ձգձգումների և վերապահումների:

4. Ավարտին հասցնել բանակցություններն այն պայմանագրի վերաբերյալ, որն արգելում է միջուկային զենքի արտադրության համար տրոհվող նյութերի արտադրությունը, միջուկային զենքի արտադրության համար օգտագործվող բոլոր նյութերը վերցնել հսկողության տակ և խրախուսել առկա պաշարների նվազեցումը:

5. Ամրապնդել ստեղծված միջուկազերծ գոտիները, նպաստել այդ գոտիների անդամների միջև համագործակցությանը, ստեղծել նոր միջուկազերծ գոտիներ՝ նպատակ ունենալով մոտ ապագայում հասնել համընդհանուր միջուկազերծ գոտու:

6. Անվտանգության խորհրդի 2009թ.-ի սեպտեմբերի 24-ի նիստում որոշում կայացնել՝ ներկայացնելու զինաթափման պլաններ, ինչպես դա նախատեսված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ, և բարեփոխել խորհուրդը՝ այն ավելի ներկայացուցչական և այդպիսով ավելի ունակ դարձնելու զինաթափման և չտարածման պարտավորությունների խախտումներին արձագանքելու համար:

7. Հոկտեմբերի 27-ը հայտարարել Միջուկազերծ աշխարհի միջազգային օր:

8. Դիմել Արդարադատության միջազգային

դատարանին՝ խնդրելով նոր առաջարկություններ ներկայացնել միջուկային զենքի չտարածման պայմանագրի 6-րդ կետով նախատեսված բանակցությունների «բարեխղճության» վերաբերյալ պարտավորությունից բխող գործողությունների վերաբերյալ:

9. Միանալ և օժանդակել Միջազգային անսպառ էներգիայի նոր կազմակերպությանը և էկոլոգիապես կայուն էներգիայի ստացման համար կատարել ներդրումներ, որով աստիճանաբար հնարավոր կլինի հրաժարվել միջուկային զենքի՝ որպես վառելիքի օգտագործումից՝ հոգուտ շրջակա միջավայրի անվնաս պահպանման:

Սովորական զինատեսակներ և համընդհանուր զինաթափում

10. Կրճատել զինված ուժերն ու կանոնակարգել օրենքների կիրառումը և զենքերի առևտուրը, հատկապես սովորական զինատեսակների առևտուրը:

11. Կանխել սովորական զինատեսակների տարածումը քաղաքացիական բնակչության շրջանում՝ այդպիսի զենքերի վաճառքի, գրանցման, տիրապետման ու օգտագործման թույլտվության պետական խիստ կարգավորմամբ:

12. Աջակցել ուժեղ և արդյունավետ համընդհանուր առևտրային պայմանագրի մշակմանը՝ կարգավորելով սովորական զինատեսակների միջազգային առևտուրը: Պայմանագիրը պետք է տարածվի սովորական բոլոր զինատեսակների միջազգային բոլոր փոխադրումների վրա: Պայմանագիրը պետք է արգելի նաև զենքերի միջազգային փոխադրումները այնտեղ, որտեղ առկա է էական վտանգ, որ փոխադրումները կխախտեն Մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը:

13. Իրագործել հրազենի, ռազմամթերքի և մնան նյութերի հսկողության մասին արձանագրությունը Հարավաֆրիկյան Համայնքային զարգացման տարածաշրջանում ու սովորական և փոքր տրամաչափի զինատեսակների գործողությունների ծրագիրը և խստացնել սովորական զինատեսակների գրանցումը Միավորված ազգերի կազմակերպությունում:

14. Ներքին իրավախախտումների վերաբերյալ ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել սովորական զինատեսակներով կատարվող բռնությունները կանխարգելելու օրենքներին:

15. Հասնել Ականների արգելման պայմանագրի և Ռազմամթերքի պահուստների համաձայնագրի իրագործմանն ու համընդհանուր պահպանմանը:

16. Արգելել բնակավայրերում պայթուցիկ նյութերի օգտագործումը:

17. ՄԱԿ-ի համընդհանուր և լիակատար զինաթափման նպատակին համապատասխան՝ ձեռնարկել սովորական հիմնական զինատեսակների (տանկեր, հրետանի, ինքնաթիռներ) զինաթափումը:

18. Սպառազինությունների ծախսերն ուղղել արդյունավետ և պատասխանատու սոցիալական ոլորտներ, որը կօգնի նվազեցնել աշխարհում հարուստ-աղքատ բաժանումը՝ իր հերթին մեծացնելով անվտանգությունը:

19. Գումարել Ջինաթափման Հատուկ 4-րդ միստ:

20. Հռչակել Ջինաթափման միջազգային տասնամյակ (2010-2020):

21. Բանակցություններ սկսել տեղերում որևէ զենքի տեղակայումը կամ օգտագործումը կանխարգելելու պայմանագրի վերաբերյալ:

22. Հիմնել համաշխարհային կոսմոդրոմ, որը զինաթափում սկսելու հնարավորություն կտա բոլոր երկրներին:

23. Բանակցություններ սկսել հրթիռային և

հակահրթիռային համակարգերի վերաբերյալ համընդհանուր պայմանագրի վերաբերյալ:

24. Սահմանել ստուգման կարգ Կենսաբանական զենքերի համաձայնագրի համար (ԿՁՀ), հասնել ԿՁՀ-ի և Քիմիական զենքերի համաձայնագրի համընդհանուր պահպանմանն ու իրագործմանը:

25. Հիմնել Ջինաթափման և զարգացման տեխնոլոգիաների գնահատման համաշխարհային գործակալություն:

26. Արձագանքել համաշխարհային տնտեսական ճգնաժամին՝ հատուկ ուշադրություն դարձնելով զբաղվածության ավելացմանը և հատկապես այնպիսի խոցելի խմբերին, ինչպիսիք են երիտասարդները, կանայք, երեխաները և բնիկները:

27. Նպաստել մինչև 2015թ. զինված բռնությունների կանխարգելման ու նվազեցման կարևորագույն նպատակի մշակմանը, որը հնարավորություն կնախատեսի անվտանգության թեմաները ներառել Հազարամյակի զարգացման նպատակների հետագա հնարավոր զարգացման փաստաթղթերում:

28. Լիովին իրագործել Անվտանգության խորհրդի 1325 (2000)-ի որոշումը, մասնավորապես, ապահովել կանանց մասնակցությունը որոշումների կայացման և հակամարտությունների կանխման, կառավարման ու կարգավորման բոլոր մակարդակներում:

29. Լիովին իրագործել Անվտանգության խորհրդի 1820 (2008)՝ զինված հակամարտությունների ընթացքում սեռական ոտնձգությունների կանխարգելման մասին որոշումը:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով ՄԱԿ-ի ամբողջ համակարգին

1. ՄԱԿ-ի Սովորական զինատեսակների

գրանցամատյանը վերափոխել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՄԱԿ-ի գործակալությունների միջև համընդհանուր իրական դիտարկումների միջոցի՝ զենքերի ամբողջ առևտուրն ու կիրառությունը դիտորդելու համար:

2. Խրախուսել զարգացող և թերզագացած երկրների քաղաքացիական հասարակության ավելի լայն մասնակցությունը ՄԱԿ-ի խաղաղության և զինաթափման վերաբերյալ ֆորումներում, այնպես որ նրանց տեղական և տարածաշրջանային հեռանկարները ներառվեն քննարկումներում:

3. Նոր գործընկերներ ներգրավել ռազմավարական համընդհանուր ցանցերից, որպես կարևոր քայլ խաղաղության ուսուցումը, բռնության կանխարգելումը, հակամարտությունների կարգավորումը և զարգացումը ապահովելու համար:

Ոչ պետական կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը

1. Միավորվել և զարգացնել ոչ պետական միջազգային կազմակերպությունների ցանցերը՝ ապահովելով խաղաղությունը, անվտանգությունը, զինաթափումը և զարգացումը, աջակցել սույն համաժողովից բխող միջոցառումներին ֆորումների գումարմանը:

2. Ուժեղացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողություններն ամբողջ Հարավում գործընկերության, տեղեկատվությունների փոխանակման և միջոցների հայթայթման միջոցով:

3. Հետազոտություններն ուղղել ռազմական սպառնալիքների զարգացումների ազդեցությունների վրա և զարգացնել զինաթափման լավագույն փորձերը:

4. Նպաստել խաղաղության, հակամարտությունների կարգավորման, Մարդու իրավունքների (քաղաքացիական, քաղաքական,

տնտեսական, սոցիալական, մշակութային և շրջակա միջավայրի) կրթությանը և սեռային հավասարությանը՝ որպես կարևոր պայման արդարացի խաղաղության և մարդկային անվտանգության բարելավմանը հասնելու համար:

Որպես անփոփոմ

Սույն հռչակագրի նպատակը պարզ է. փրկել մարդկային կյանքեր, նվազեցնել անարդարությունները և միջուկային զենքերի կիրառման դեպքում կանխել քաղաքակրթության ոչնչացումը: Խաղաղության և անվտանգության առավելություններն անհամեմատ գերազանցում են զենքի առևտրի խոստացող կարճաժամկետ տնտեսական օգուտներին:

Մենք պահանջում ենք բոլոր ազգերից, կազմակերպություններից և կառավարություններից՝ ընդունել և զորակցել ամբողջ աշխարհի հազարավոր ոչ պետական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ջանքերին, որոնք համայնքային մակարդակներում նպաստում են խաղաղությանն ու զինաթափմանը և որոնք մեր միջազգային շարժումների արմատներն են:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Մեքսիկայի ժողովրդին և կառավարությանը Լատինական Ամերիկայում մեր նմանատիպ առաջին հանդիպման կազմակերպման, ջերմ ու բարեկամական հյուրընկալության համար:

**ԱՐԱ ԶԱՆԻԲԵԿԻ
ՍԱՀԱԿՅԱՆ**
*Ռուս-հայկական համալսարանի
դասախոս*

**ՆԱՏՕ-Ի ԸՆԴԼԱՅՆՄԱՆ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՇԻՆՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Աշխարհաքաղաքական վերածափումների արդի իրողությունները փաստում են, որ ՆԱՏՕ-ն, հանդիսանալով ժամանակակից ռազմաքաղաքական հզորագույն դաշինք, այսօր ներքին վերագնահատման կարիք ու անհրաժեշտություն ունի: Դա առաջին հերթին կապված է նրա ընդլայնման և վերածանալի քաղաքականության հետ, որը նա որդեգրեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:

Դաշինքում տիրող մերօրյա փոխակերպման իրողությունները առավել համապարփակ պատկերացնելու և հետագա ընդլայնման տրամաբանությունը ընկալելու համար առանձնակի կարևորություն է իրենից ներկայացնում Դաշինքի՝ այսպես կոչված «առաջին» ընդլայնումը, որ տեղի ունեցավ 1999թ.-ի ՆԱՏՕ-ի հիսունամյակին նվիրված խորհրդանշական գագաթաժողովի ժամանակ, երբ արևելաեվրոպական երբեմնի հակառակորդ երկրներից երեքը՝ Լեհաստանը, Չեխիան ու Յունգարիան իրենց անվտանգությունը վստահեցին ՆԱՏՕ-ին: Սակայն ընդլայնման հիմքով փոխակերպման գործընթացը դյուրին գործընթաց չէր, և բավարար ըմբռնելու համար այն դինամիկան, որը Դաշինքը ապրեց մինչ առաջին՝ մոր որակի ընդլայնումը, հարկավոր է նախ հասկանալ պատմաքաղաքական այն տրամաբանությունը, որով Դաշինքն անցավ իր սկզբնավորման օրվանից մինչ ինստիտուցիոնալ իր զարգացման հիսունամյա սահ-

մանագիծը:

«Ոչ ոք չգիտե, թե Խորհրդային Ռուսաստանը և միջազգային կոմունիստական կազմակերպությունն ի՞նչ է մտադիր անել մոտ ապագայում, կամ ո՞րն է նրա էքսպանսիայի սահմանագիծը... Բալթիկայից մինչև Ադրիատիկ ձգվում է «երկաթե վարագույրը»...»¹, - 1946թ. մարտի 14-ին ԱՄՆ Ֆուլտոն քաղաքում հայտարարեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը: Նրա «ֆուլտոնյան ճառին» հետևեց ամերիկյան վարչակազմի «զսպման» քաղաքականությունը, որի իրականացման գործուն մեխանիզմը դարձավ «Մարշալի պլանը»²: Ստեղծված իրավիճակում ԽՍՀՄ-ը լավ էր գիտակցում, որ եվրոպայում ԱՄՆ-ի հովանավորությամբ ձևավորվող տնտեսական գործընթացների տրամաբանությունը առաջիկա առնվազն մի քանի տասնամյակում պայմանավորելու է եվրոպական պետությունների քաղաքական նախասիրությունների ողջ միջակայքը: Դրան գործնականում նպաստեցին քաղաքական այն զարգացումները, որոնք տեղի ունեցան ետպատերազմական Եվրոպայում և նրա շուրջ. մասնավորապես, 1947-49թթ.-ի ընթացքում կտրուկ սրվեցին հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Նորվեգիայի, Յունաստանի և Թուրքիայի միջև, 1948թ.-ին իշխանափոխություն տեղի ունեցավ Չեխոսլովակիայում, 1948թ. ապրիլին ԽՍՀՄ-ի

¹Տես՝ <http://history.tuad.nsk.ru/Author/Engl/C/Churchill/Articles/fulton.html>.
²Այն հետպատերազմյան Եվրոպայի տնտեսության (որին հետագայում միացավ նաև Թուրքիան) վերականգնման ու զարգացման ծրագիր էր:

կողմից սկսվեց Բեռլինի շրջափակումը: Վերջինը մի քայլ էր, որը շրջադարձային եղավ նախկին դաշնակիցների հարաբերությունների հետագա սրման առումով: Ստեղծված այսօրինակ պայմաններում, երբ կտրուկ սրվել էին ինչպես Եվրոպայի անվտանգության, այնպես էլ միջազգային անվտանգության հարցերում նախկին դաշնակիցների հարաբերությունները քաղաքական, ռազմական, գաղափարախոսական և տնտեսական ոլորտներում, 1948թ.-ին Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Լյուքսեմբուրգի, Նիդեռլանդների և Ֆրանսիայի միջև կնքվեց «Բրյուսելյան համաձայնագիրը», որն առաջին գործնական քայլն էր Եվրոպական անվտանգության միացյալ համակարգի, իսկ հետագայում նաև Արևմտաեվրոպական միության և Զյուսիսատլանտյան դաշինքի ձևավորման գործում:

Անվտանգության երաշխիքների և փոխադարձ պարտավորությունների հիմքի վրա միացյալ դաշինք ստեղծելու նպատակով Բրյուսելյան համաձայնագրին հաջորդեցին «ատլանտյան» և «եվրոպական» դաշնակիցների հետագա բանակցությունները, որոնց արդեն մասնակցեցին Դանիան, Իսլանդիան, Իտալիան, Նորվեգիան: Բանակցությունները ավարտվեցին 1949թ. ապրիլի 4-ին Վաշինգտոնյան պայմանագրի կնքմամբ, որը գործարկման մեջ դրեց անդրատլանտյան հավաքական անվտանգության համակարգը, որին այդ ժամանակ արդեն անդամակցում էին 12 երկրներ³: Վաշինգտոնյան պայմանագիրը դարձավ Զյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության ձևավորման հիմնարար փաստաթուղթը՝ իրենով պայմանավորելով ետպատերազմ-

յան Եվրոպայի քաղաքական և ռազմական անվտանգության ապագան:

Ի պատասխան «Մարշալի պլանի»՝ 1949թ. ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ Արևելյան Եվրոպայում ձևավորվեց «Տնտեսական փոխօգնության խորհուրդը», որը ԽՍՀՄ և «ժողովրդական դեմոկրատիայի երկրների»՝ Բուլղարիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Ռումինիայի, ԳԴՀ-ի և Չեխոսլովակիայի միջև տնտեսական շփումների յուրօրինակ կառույց էր, որի հիմքի վրա, սակայն, արդեն ՆԱՏՕ-ի ձևավորումից հետո, 1955թ.-ին ԽՍՀՄ-ի, Ալբանիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Լեհաստանի, ԳԴՀ-ի, Ռումինիայի և Չեխոսլովակիայի միջև կնքվեց «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության վարչական պայմանագիրը»: Պայմանագիր, որը Բրյուսելյան պայմանագրի խորհրդային պատասխանն էր, և գիտական գրականության մեջ հայտնի է «Վարչական պակտ» անվանումով: Հետագայում՝ արդեն 1955թ.-ին, Բարեկամության պայմանագիր կնքվեց նաև Խորհրդային Միության և Հարավսլավիայի միջև, որը նույն գործընթացի շարունակությունն էր և մրցակցության Եվրոպական թատերաբեմին նոր որակի հաստատութենական հակադրման բնորոշիչներ հաղորդեց:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ 1950-ականների սկզբում Եվրոպան բաժանվեց երկու՝ Արևմտաեվրոպական և Արևելաեվրոպական քաղաքակրթական ճամբարների՝ այդ կերպ մոտ 40 տարի վերածվելով «բլոկային քաղաքականության» հիմնական թատերաբեմի: Ետպատերազմյան աշխարհում ՆԱՏՕ-ի և

³1952թ. Դաշինքին անդամակցեցին Հունաստանն ու Թուրքիան, 1955թ.-ին՝ ԳՖՀ-ն (1990թ. Գերմանիայի վերամիավորման արդյունքում արդեն միացյալ ԳՖՀ-ն), 1982թ. ՆԱՏՕ-ին անդամակցեց Իսպանիան, 1999թ.-ին՝ Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը, 2004թ.-ին Բուլղարիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Ռումինիան, Սլովենիան, Սլովակիան, 2009թ.-ին՝ Ալբանիան և Մակեդոնիան: Նշենք նաև, որ 1967թ.-ին ՆԱՏՕ-ի Միջուկային դիրեկտորատի շրջանակներում ստեղծված ճգնաժամի արդյունքում ՆԱՏՕ-ի Ռազմական խորհրդից դուրս եկավ Ֆրանսիան, որը սակայն 2009թ.-ին վերադարձավ ՆԱՏՕ-ի ռազմական կառուցակազմ: Այսօր Դաշինքի անդամ երկրների թիվը 28 է:

«Վարչապետի պակտի» ձևավորումը հանգեցրեց ռազմաքաղաքական և գաղափարախոսական «սառը պատերազմ» անվանումը կրող մի հակադրության, որը շարունակվեց մինչև հակադրության բեռներից մեկի կազմալուծումը՝ օրակարգային դարձնելով մեկ նույնքան կարևոր հարց. թե ինչ ճակատագիր է ունենալու Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպությունը:

Պատմականորեն ՆԱՏՕ-ի առաքելությունը եղել է Եվրոպական անվտանգության ապահովումը, որը սառը պատերազմի տարիներին դրսևորվում էր ավելի շուտ զսպման մեխանիզմների կիրառմամբ, մինչդեռ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետպատերազմյան Եվրոպայում Դաշինքի անվտանգության ապահովման գործառույթը դարձավ էապես ընդգրկուն և առավել իրատեսական: ՆԱՏՕ-ի գործունեության հիմնարար սկզբունքը ինքնիշխան պետությունների կողմից ռազմական (և ոչ միայն) ոլորտում համագործակցության և փոխօգնության պարտավորությունն է, որն ապահովվելու է դաշինքի անդամ երկրների հավաքական անվտանգությունը: Նմանօրինակ համագործակցությունը ենթադրում է, որ Դաշինքի անդամ յուրաքանչյուր պետության նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում ուղղված է ողջ համակարգի դեմ, հետևաբար պատասխան կամ կանխարգելիչ գործողությունների է դիմում ողջ դաշինքը՝ օգտագործելով Դաշինքի տրամադրության տակ առկա ռազմաքաղաքական, ֆինանսատնտեսական և տեխնոլոգիական ողջ ներուժը⁴:

1991թ. ԽՍՀՄ-ը փլուզվեց, որով և

ավարտվեց երկբևեռ հակադրության սառը պատերազմյան դարաշրջանը: Սառը պատերազմի ավարտն ու այն բոլոր վերածնունդները, որ տեղի ունեցան Եվրոպայում, չէին կարող ազդեցություն չունենալ ՆԱՏՕ-ի արտաքին քաղաքական ռազմավարության, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների (ԿԱԵԵ) հետ հարաբերվելու, ինչպես նաև նոր պայմաններում սեփական դերի վերաբերման վրա:

ՆԱՏՕ-ի վերածնունդի գործընթացի սկիզբը դրվեց 1990թ. ամռանը ՆԱՏՕ-ի Խորհրդի լոնդոնյան բարձր մակարդակի հանդիպման ժամանակ, երբ Դաշինքի անդամ պետությունների ղեկավարները, հաշվի առնելով անվտանգության ոլորտում նոր իրողություններն ու Արևելք-Արևմուտք առճակատման ավարտը, ցանկություն հայտնեցին բարեփոխել ՆԱՏՕ-ն, որպեսզի այն վերածվի այնպիսի ինստիտուտի, **«ուր եվրոպացիները, կանադացիներն ու ամերիկացիները ընդհանուր ջանք կգործադրեն ոչ միայն ընդհանուր պաշտպանության ապահովման, այլ նաև Եվրոպայի բոլոր երկրներն իր մեջ ներառող նոր համագործակցության ստեղծման համար»**⁵: Հանդիպման մասնակիցները դիմեցին ԿԱԵԵ-ին ՆԱՏՕ-ի հետ դիվանագիտական կայուն հարաբերություններ հաստատելու առաջարկով, քանի որ նշյալ պետությունների նկատմամբ Դաշինքը հետայսու «նվաճողական և ագրեսիվ» միտումներ չունի:

Լոնդոնյան հռչակագրի դրույթներն իրենց հետագա զարգացումը ստացան 1991թ. հունիսին ՆԱՏՕ-ի անդամ երկրների

⁴Ընդգծենք, որ ՆԱՏՕ-ն իր գործողություններում առաջնորդվում է ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան դրույթներով, սակայն միաժամանակ Դաշինքի հիմնարար պայմանագրում նշվում է, որ «...կանխարգելիչ կամ պատասխան ռազմական գործողությունների ծավալման ժամանակ Դաշինքը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է համարում ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան բանաձևը...»:

⁵Տես՝ Shea J. A., Political Agenda for a Political Alliance Brassey's. Atlantic commentaries N 3, p. 43 1990.

արտգործնախարարների Կոպենհագենում, ապա նույններին Հռոմում տեղի ունեցած բարձր մակարդակի հանդիպումների ժամանակ, երբ հաստատվեց Դաշինքի ռազմավարական նոր հայեցակարգը⁶: Այնտեղ նշվում էր, որ մեծամասշտաբ հարձակմանը հակադարձելու գերխնդիրն այլևս Դաշինքի առաջնահերթ օրակարգում չէ, իսկ առավել իրատեսական վտանգների աղբյուր Դաշինքը համարում է միջէթնիկ հակամարտություններն ու տարածքային վեճերը, հետևաբար հրաժարվում է «առաջադրված պաշտպանության» և «ճկուն արձագանքման» ռազմավարություններից՝ որդեգրելով նոր՝ հակաճգնաժամային ռազմավարություն:

Սրան զուգահեռ Դաշինքը Վարշավյան պայմանագրի կազմակերպության նախկին անդամ պետությունների հետ հարաբերման արդյունավետ ձևաչափ մշակեց՝ ստեղծելով Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը (ՀՀԽ)⁷: Նմանօրինակ կառույցի ստեղծման նպատակն էր, ինչպես նշվում էր Դաշինքի՝ Հռոմում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, «զարգացնել քաղաքականության և անվտանգության հարցերին առնչվող ինստիտուցիոնալ համագործակցությունն ու խորհրդակցությունները»: ՀՀԽ-ի ի հայտ գալը ևս մի քայլ էր Դաշինքի՝ եվրոպական անվտանգության նոր իրողություններին համապատասխանեցվելու գործընթացում: 1991թ. դեկտեմբերի

20-ի ՀՀԽ հիմնադիր նստաշրջանի ժամանակ անդամ-երկրների նախարարները որոշեցին ծրագրեր մշակել՝ աջակցելու գործընկեր երկրներին ինստիտուցիոնալ բնույթի քաղաքական, ռազմական բարեփոխումներ իրականացնելուն: ԱՊՀ 11 երկրները (այդ թվում՝ նաև ՌԴ-ն) ՀՀԽ-ին անդամակցեցին 1991թ. դեկտեմբերին: 1992թ. ՀՀԽ-ին միացան Վրաստանն ու Ալբանիան, իսկ 1997թ. մայիսին, երբ ՀՀԽ-ին փոխարինելու եկավ Եվրատլանտյան գործընկերության խորհուրդը, համագործակցող երկրների թիվը հասավ 22-ի: 1993թ. աշնանից Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում (ԿԱԵԵ) և Արևմուտքում ակտիվացան ՆԱՏՕ-ի՝ դեպի արևելք ընդլայնման վերաբերյալ քննարկումները, սակայն արդեն այդ ժամանակ կարծիքներ հնչեցին ընդլայնման անհնարինության և աննպատակահարմարության վերաբերյալ⁸: ՆԱՏՕ-ի շրջանակներում հավանության չարժանացավ նաև «Բեյքերի հայեցակարգը», որի կենտրոնական գաղափարը Դաշինքը Սան-Ֆրանցիսկոյից մինչև Վլադիվոստոկ ընկած պետությունների միության հիմնական կառույցի վերածելն էր. հայեցակարգը նախատեսում էր ՆԱՏՕ-ի փոլլային ընդլայնում⁹: Արդյունքում՝ 1991թ. Հռոմում կայացած ՆԱՏՕ-ի խորհրդի նստաշրջանում ձեռք բերվեց փոխզիջումային տարբերակ՝ Դաշինքը վերափոխել «անվտանգության նոր կառույցի», որի

⁶Չնայած Դաշինքի հայտարարություններին, «**Քե քաղաքական և անվտանգության միջավայրը եվրոպայում փոփոխվել է, հետևաբար Դաշինքը դրան համապատասխան փոփոխության է ենթարկել ռազմական իր ռազմավարության մի շարք էական դրույթներ**», այնուամենայնիվ չփոփոխվեցին դրույթները կապված՝ «**մոտ ապագայում եվրոպական անվտանգության ճարտարապետության մեջ միջուկային և սովորական զինատեսակների համատեղման տրամաբանության հետ**». Стратегическая концепция НАТО, 1991г., Справочник , НАТО - 1995, Приложение № 9, Брюссель, 1995.

⁷Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդ ստեղծելու առաջարկը կատարվել էր 1991թ. նոյեմբերին Հռոմում բարձր մակարդակի հանդիպման ժամանակ, իսկ խորհրդի առաջին նստաշրջանը տեղի ունեցավ 1991թ. դեկտեմբերին:

⁸Տես՝ "World Policy", New York, 1990, vol.7, N 2, p. 217:

⁹Տես՝ Daniel Vernet, "La France et l'Allemagne". Politique atrangere, 1995, N 4, p. 897:

շրջանակներում ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն, ԵՄ-ը, ԱԵՄ-ն և Եվրոպայի Խորհուրդը կփոխլրացնեն մեկը մյուսին: Այս գործառույթը դրվեց ՀՀ-ի վրա, քանի որ վերջինիս անդամակցում են թե՛ ՆԱՏՕ-ի, թե՛ նախկին Վարշավյան պակտի անդամ երկրները¹⁰:

1993թ. ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ներկայացուցիչները հայտարարեցին, որ ՀՀ-ի ստեղծումն ու գործունեության ուղղվածությունը ՆԱՏՕ-ի օրակարգից հանում է ընդլայնման վերաբերյալ ցանկացած դատողություն: Սակայն հետագայում ընդլայնման վերաբերյալ ամերիկյան փոփոխված մոտեցումը ամբողջությամբ ներկայացվեց ԱՄՆ նախկին նախագահ Ջ. Քարտերի Ազգային անվտանգության գծով խորհրդական Ջ. Բժեզինսկու զեկույցում, ուր մասնավորապես նշվում էր. «ՆԱՏՕ-ի ընդլայնումը նախանշված է հենց Եվրոպայի պատմական զարգացման տրամաբանությամբ, և դրան դիմադրելը անիմաստ ու անօգուտ է, պետք չէ բաց թողնել պատմականորեն ընձեռնված հնարավորությունն Արևելյան և Կենտրոնական Եվրոպաները միացնել «արևմտյան քաղաքակրթությանը»¹¹:

1993թ. մայիսին ԳՖՀ պաշտպանության նախարար Ֆ. Ռյուեն Յյուսիսատլանտյան վեհաժողովի՝ Բեռլինում

կայացած նստաշրջանում հանդես եկավ ԿԱԵԵ-ն ՆԱՏՕ-ի կազմում տեսնելու ցանկությամբ¹²: Այս առթիվ ֆրանսիացի պրոֆեսոր Ժ. Ֆ. Գուիլիդոսը գրում էր. «Չնայած, որ սա ԱՄՆ-ի նախաձեռնությունը չէ, սակայն ՆԱՏՕ-ի ընդլայնման թրթածրարի հիմնական դրդապատճառները պետք է փնտրել Վաշինգտոնի այն քաղաքականության մեջ, որի միջոցով փորձ էր արվում օգտագործել Ռուսաստանի՝ որպես «հակառակորդի» թուլացումը՝ ՆԱՏՕ-ն պահպանելով որպես Եվրոպայում (և ոչ միայն) ԱՄՆ առաջնորդության ապահովման գլխավոր գործիք»¹³:

1993թ. սեպտեմբերի 15-ին ՌԴ նախագահ Բ. Ելցինը ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնին և արևմտյան մյուս առաջնորդներին ուղղված իր նամակում դեմ էր արտահայտվում ՆԱՏՕ-ի կազմում ԿԱԵԵ-ի անդամակցության հնարավորությանը՝ ընդգծելով, որ դա հակասում է Գերմանիայի «հարցի լուծման» վերջնական պայմանագրի շուրջ ձեռք բերված համաձայնություններին, համաձայն որոնց Արևելյան Գերմանիան ռազմաքաղաքական հատուկ կարգավիճակ է ստացել, որը բացառում էր դեպի արևելք ՆԱՏՕ-ի ընդլայնման ցանկացած հնարավորություն: Նամակում հայտնվում է նաև ՆԱՏՕ-ի հետ ԿԱԵԵ-ի

¹⁰ ՀՀ-ի խաղարարը հատուկ խմբի շրջանակներում 1993թ. մշակվեց Աթենական զեկույցը, ուր մասնակից պետությունները ՄԱԿ-ի և ԵԱՀԿ հովանու ներքո որոշեցին խաղարար գործունեության աջակցման մի շարք սկզբունքներ ու չափորոշիչներ: 1994թ. հունվարին հավանության արժանացավ «Բազմազգ օպերատիվ ուժերի (ԲՕՈՒ)» հայեցակարգը, որով նախատեսվում էր գործողությունների իրականացման համար կոալիցիոն ուժեր ձևավորելու հնարավորություն ՆԱՏՕ-ի, Արևմտաեվրոպական միության և Դաշինքի անդամ չհանդիսացող պետությունների մասնակցությամբ: ԲՕՈՒ-ի հայեցակարգի զարգացման առաջընթացը իրողություն դարձավ 1997թ. մադրիդյան հանդիպման ժամանակ և գործարկվեց IFOR և SFOR խաղարարական գործողությունների կոնտեքստում, որը ՆԱՏՕ-ն իրականացրեց Բոսնիայում և Հերցեգովինայում:

¹¹ Տես՝ **А. Коновалов**, К новому разделу Европы, Россия и Североатлантический Альянс, "Независимая газета", 07.12.94:

¹² Տես՝ **John Barowski**, Partnership for Peace and beyond., "International Affairs", vol. 71, N 2, April 1995, pp. 237-238:

¹³ Տես՝ **J. F. Guilhaudus**, Consideration sur l'agrandissement de l'NATO., "Defense nationale", November 1995, pp. 61-62:

անվտանգությունը երաշխավորող պաշտոնական ցանկացած միջոցառումներ ձեռնարկելու ՌԴ-ի պատրաստակամության մասին, որը կչեզոքացնի «անվտանգության վակուումին» առնչվող բոլոր անհանգստությունները: Սակայն այս առումով կարծիքների նշանակալի փոխանակումներ տեղի չունեցավ: 1993թ. հոկտեմբերի 13-ին Պրահայում Բ. Զլինթոնը հանդիպեց Վիշեգրադյան քառյակի (Չեխիա, Սլովակիա, Լեհաստան, Յունգարիա) ղեկավարների հետ, որի ընթացքում նա հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն ընդլայնվելու է, հարցը կայանում է միայն նրանում է, թե ե՞րբ է դա տեղի ունենալու: Այս հայտարարությունն իր ձևով և որակով ՌԴ-ի համար «քաղաքական ապտակ» էր, որը չէր համաձայնեցվել անգամ դաշնակիցների՝ այդ թվում նաև ՆԱՏՕ-ի ընդլայնման գաղափարը այդ շրջանում դեռևս չկիսող Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ:

1994թ. հունվարի 10-11-ին Բրյուսելում կայացած Յուրիսատլանտյան Խորհրդի բարձր մակարդակի հանդիպման ժամանակ Յուրիսատլանտյան դաշինքի և նրա անդամ չհանդիսացող եվրոպական պետությունների միջև համագործակցության ապահովման համար ստեղծվեց «Գործընկերություն հանուն խաղաղության (ԳՀԽ)» ծրագիրը, որը կորդինացվելու էր ՀՀԽ-ի կողմից¹⁴: Ծրագիրն ուղղված էր համատեղ պլանավորման, ռազմական ուսուցման, զորավարությունների ճանապարհով խաղաղարար հնարավորությունների և մի-

ջոցների ընդլայնմանն ու դրանով իսկ գործընկեր-պետությունների զինված ուժերի ու ՆԱՏՕ-ի միջև օպերատիվ համադրելիության բարձրացմանը¹⁵:

Փաստորեն սա Դաշինքի անդամ երկրների հետ հարաբերման նոր ձևաչափ էր, որը հեռանկարում Դաշինքի ընդլայնման հիմքեր էր ստեղծում, սակայն ՆԱՏՕ-ի ընդլայնման կողմնակիցների դրդապատճառները տարբեր էին: ԱՄՆ-ը, նախաձեռնելով այս գործընթացը, այն դիտարկում էր որպես ՆԱՏՕ-ի՝ առանց վերափոխման, պահպանման միջոց: Ըստ ԱՄՆ-ի՝ Դաշինքի վերափոխումը կարող է հանգեցնել նրա թուլացմանն ու անկմանը: ՆԱՏՕ-ի ընդլայնմամբ Վաշինգտոնը նաև հույս ուներ ամրապնդել իր առաջնորդությունը Եվրոպայում: Այս առթիվ Զ. Բեթզինսկին գրում էր, որ. «Առանց ընդլայնման ՆԱՏՕ-ն կմահանա», Դաշինքը կզրկվի «իր գոյության պատմական հիմնավորումից» և դրանով իսկ տեղի կունենա «ամերիկյան առաջնորդության քայքայում»¹⁶:

Փոքր ինչ այլ նպատակներ ունեին ՆԱՏՕ-ի մյուս անդամները: ԳՖՀ-ում, որոշ տատանումներից հետո, ղեկավար շրջաններում գերակայեց պաշտպանության նախարար Ֆ. Ոյուեի դիրքորոշումը, որով ՆԱՏՕ-ի ընդլայնումը դիտարկվում էր ոչ միայն «Միջին Եվրոպայում» Գերմանիայի ազդեցության ուժեղացման տեսանկյունից, այլ նաև՝ որպես Գերմանիայի նկատմամբ վերջնական կանոնակարգման Պայմանագրի 5-րդ կետի շրջանցման տարբերակ¹⁷:

¹⁴Չավելենք, որ 1995թ. ՆԱՏՕ-ն «Միջերկրածովյան երկխոսություն» ծավալեց Միջերկրածովյան տարածաշրջանի 6 երկրների հետ՝ Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, Մարոկո, Թունիս, իսկ 2005թ.-ին երկխոսությանը միացավ նաև Ալժիրը, որը նպատակ ուներ ամրապնդել տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը:

¹⁵Գործունեության այս տեսակները, որոնց թիվը 1998թ.-ին հասավ 2000-ի, հանդես են գալիս որպես գործակցության հնարավոր տարբերակների «ճաշացուցակ», որից երկրները կարող են ընտրել այն միջոցառումները, որ ցանկանում են ներառել Անհատական գործընկերության սեփական ծրագրերում:

¹⁶Տես՝ **Zb. Brzezinski**, NATO - Expand or Die , "The New York Times", 28 December, 1994, p. 15.

¹⁷Համաձայն պայմանագրի 5-րդ կետի՝ Գերմանիայի արևելյան մասում չէին կարող տեղակայվել օտարերկրյա զորամիավորումներ, միջուկային զենք և նրա տեղափոխման միջոցներ:

1995թ. Ֆրանսիան արմատապես փոխեց իր դիրքորոշումը. ՆԱՏՕ-ի կազմում ԿԱԵԵ-ի ինտեգրումից դեպի ընդլայնման գործընթացի արագացում: Ըստ նրանց հաշվարկների՝ դա կդանդաղեցնի այդ երկրների՝ ԵՄ կազմում ինտեգրվելու գործընթացը, որի կողմնակիցն է ԳՖՅ-ը: Ինչ վերաբերվում է ԿԱԵԵ-ի դրդապատճառներին, ապա դրանք հետևյալն են՝

-միավորվել արևմտաեվրոպական արժեքների շուրջ,

- Մոսկվայից իրենց անկախության ամրապնդում,

- հետխորհրդային ողջ տարածաշրջանում ձեռք բերել անվտանգության ու կայունության հիմնավոր երաշխիքներ:

1997թ. Ղյուսիսատլանտյան դաշինքը ընդունեց ԳՅԽ նոր՝ ընդլայնված ծրագիր, որը նպատակաուղղված էր ապահովելու ՆԱՏՕ-ի և գործընկերների միջև համագործակցությունը պաշտպանության և ռազմական բնագավառներում, ներառյալ՝ ճգնաժամերի դեպքում, ինչպես դա տեղի էր ունեցել Դեյտոնի համաձայնագրի կատարումը ապահովող ուժերի և Բոսնիայում ու Չեռնոբիլիում կայունացման ուժերի կազմակերպման դեպքում: Այդ կապակցությամբ 1997թ. մայիսին Սինտրայում ԳՅԽ փոխարեն ստեղծվեց Եվրատլանտյան գործընկերության խորհուրդը (ԵԱԳԽ)¹⁸, որը կոչված էր քաղաքականության, անվտանգության, ճգնաժամերի կարգավորման, խաղաղապահ գործունեության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ իրականացնել բազմ-

մակողմ խորհրդատվություններ: Նման բարեփոխման գլխավոր նպատակն էր նաև ԳՅԽ-ի քաղաքական բաղադրատարրի ամրապնդումը:

«Սառը պատերազմի» ավարտին Եվրոպան արդեն կանգնած չէր ՆԱՏՕ-ի ու Վարշավյան պակտի միջև պատերազմի վտանգի առջև, ուստի 1990-92թթ.-ին սկսվեց ՆԱՏՕ-ի ռազմական կառույցների վերակազմավորումը¹⁹, որպեսզի նրանք համապատասխանեցվեն նոր խնդիրներին՝ կապված հակաճգնաժամային ռազմավարության իրականացման հետ:

Շահագրգռված գործընկերների անդամակցությամբ՝ մի շարք ակտիվ քննարկումներից հետո 1997թ.-ի հուլիսին Մադրիդում կայացած հանդիպման ժամանակ ՆԱՏՕ-ի ղեկավարները հրավիրեցին Յունգարիային, Լեհաստանին ու Չեխիային անդամակցել Դաշինքին: 1999թ. մարտի 12-ին կայացավ երեք նոր անդամների՝ պայմանագրին պաշտոնական անդամակցումը: 1999թ. ապրիլի 24-ին վաշինգտոնյան գագաթաժողովում ողջունեցին երեք նոր անդամներին՝ միաժամանակ ընդունելով թեկնածու երկրների նախապատրաստմանն ուղղված միջոցառումների՝ «ՆԱՏՕ-ին անդամակցելու նախապատրաստման գործողությունների պլան»²⁰ ծրագիրը: Այսպիսով, չնայած ՆԱՏՕ-ի անդամ առանձին երկրներում առկա հոռետեսությանը, 1999թ. Լեհաստանը, Չեխիան ու Յունգարիան դարձան ՆԱՏՕ-ի անդամ:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո

¹⁸1990թ. ՆԱՏՕ-ի զինված ուժերը կազմում էին 5.78 մլն, 1999թ.-ին նրանց թիվը հասավ 4.29 մլն-ի (առանց Յունգարիայի, Լեհաստանի ու Չեխիայի ուժերի, որոնք կազմում են 0.3 մլն): Դաշինքի ցամաքային ուժերը կրճատվեցին 35%-ով (այդ թվում՝ ավելի քան 45%-ը կենտրոնական Եվրոպայում): Ռազմածովային նավատորմը կրճատվեց 30%-ով, Ռազմաօդային ուժերը՝ 40%-ով: Նշյալ ժամանակահատվածում ՆԱՏՕ-ի ռազմական ծախսերը կրճատվեցին 503,9-ից 391,5 մլրդ (Европа: вчера, сегодня, завтра, РАН ИЕ, М., 2003, стр. 624):

¹⁹ Մինչև 1996թ. ՆԱՏՕ-ի դաշնակիցների ռազմական ծախսերը կրճատվեցին 22%-ով, իսկ ռազմական անձնակազմը՝ 24%-ով, սովորական զինատեսակները՝ 36,6%-ով, իսկ ինչ վերաբերվում է միջուկային զինատեսակներին, ապա 1991-93թթ. դրանք կրճատվեցին 80%-ով:

²⁰ Ств` NATO's Membership Action Plan, <http://www.nato.int/docu/facts/2000/nato-map.htm>.

ՆԱՏՕ-ն հայտարարեց, որ դրանք հարվածներ են ոչ միայն ԱՄՆ-ին, այլ ողջ Դաշինքին: Արդի աշխարհի համար սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը որակապես նոր մարտահրավեր էր՝ կապված գործողությունների ընդգրկունության, ահաբեկչական հարվածների բնույթի, ահաբեկչական ակտերն իրականացնող հակառակորդի նոր տիպի և ահաբեկչության նշանակետի ընտրության հետ: Արևմտյան քաղաքակրթությանը նետված մարտահրավերների պայմաններում ժամանակավորապես մոռացության մատնվեցին անդրատլանտյան տարակարծությունները կապված ինչպես Դաշինքի ապագայի, այնպես էլ Դաշինքում ԱՄՆ-ի դերակատարման և նոր մարտահրավերներին ՆԱՏՕ-ի՝ հակադարձման ձևի, տրամաբանության և բնույթի հետ: Սակայն դաշնակիցների հարաբերություններում դրական միտումները երկարատև չէին:

Ռազմական գործողությունները, որ ծավալվեցին 2003թ. մարտի 20-ից հետո ԱՄՆ-ի կողմից Իրաքում և որի արդյունքը եղավ Յուսեյնի վարչակարգի տապալումը, լուրջ տարածայնությունների տեղիք տվեցին ԱՄՆ-ի և մայրցամաքային Եվրոպայի՝ նրա որոշ դաշնակիցների հարաբերություններում: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կոալիցիոն զորքերի ներխուժումը Իրաք հանգեցրեց Դաշինքում ներքին պառակտման. Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը Եվրոպական Միության ցամաքային այն առանցքն էր, որն անգամ տնտեսական և քաղաքական ճնշումների պարագայում աջակցություն չցուցաբերեց միակ գերտերությանը²¹, քանի որ ՆԱՏՕ-ի Եվրոպական դաշնակիցների համար անընդունելի էր ԱՄՆ ձգտումը՝ միակողմանի ուժ կիրառել առանց հաշվի առնելու գործընկերների դիրքորոշումը: Այս

շրջանում ԱՄՆ վերաբերմունքը Եվրոպայի նկատմամբ բարձրաձայնեց ԱՄՆ պաշտպանության նախարար Դ. Ռամսֆելդը՝ նշելով. «Դաշինքը չի որոշում առաքելությունը, այլ առաքելությունն է որոշում դաշինքը»: Այս կերպ Վաշինգտոնը հստակ ընդգծեց, որ հետայսու որոշակի խնդիրների լուծման համար ստեղծվելու են միայն ժամանակավոր դաշինքներ «փոփոխական երկրաչափությամբ», ընդ որում, այնպիսի դաշինքներ, որոնք ոչնչով չեն սահմանափակելու ամերիկյան կողմի գործունեության ազատությունը: Արդյունքում պայքարն ահաբեկչության դեմ մեծ հաշվով վերաճեց ԱՄՆ-ի՝ նոր վճռականությամբ միակողմանի գործունեությանը: Վերոշարադրյալը փաստում է, որ անդրատլանտյան համագործակցությունը, լինելով կուռ և ամուր կառուցակազմ, զերծ չէ տարաբնույթներքին խոչընդոտներից, որոնցից առանցքայինը թերևս այդ հարաբերությունների ոչ համաչափ բնույթն է: Ներկայումս ԱՄՆ-ը, որը հավասարների մեջ առաջինը լինելու խնդիր է լուծում, «իր ստեղծած» կառույցների միջոցով շարունակում է ապահովել Եվրոպական անվտանգության օրակարգը: Միևնույն իրողությունների ներքո Եվրոպան դեռևս շարունակում է սեփական դերի ու ինքնության փնտրտուքը, որի արդյունքում կարող է էական փոփոխությունների ենթարկվել նաև Եվրոպական անվտանգության ապահովման գերակա կառույց հանդիսացող Յուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը: Փոփոխություններ՝ կապված Դաշինքի ընդլայնման հիմքով փոխակերպման հետ, որը ընդլայնելով անվտանգության իր տիրույթը, փորձում է աշխարհում անվտանգության ապահովման նոր նախահարձակ մեխանիզմներ գործարկել:

²¹ Steu` Волохонский Б, Альянс преодолевает разногласия, М., 2003.

**ЛОГИКА РАСШИРЕНИЯ НАТО В
КОНТЕКСТЕ
ТРАНСФОРМАЦИОННЫХ
ПРОЦЕССОВ АЛЬЯНСА**

ԱՐԱ ՏԱԿՅԱՆ

Лектор российско-армянского
(Славянского) университета

Резюме

НАТО является самым мощным и институциональным военнополитическим блоком современности, который имеет четко сформулированные цели и средства их достижения. Цели эти до конца 90-ых годов во многом отражали реалии холодной войны, когда приоритетом была политика «сдерживания». Многое изменилось после распада СССР. Изменился и Альянс. Нужно было адаптироваться в новых условиях и обеспечить безопасность стран-членов в новом мире: мире без советской угрозы. Трансформация стратегической концепции Альянса должна была соответствовать новым реалиям, то есть учитывать, что Альянс должен продвигаться и продвижение это должно, с одной стороны, соответствовать интересам безопасности Альянса, а с другой – потребностям безопасности стран Центральной и Восточной Европы. Первым следствием этой трансформации стало то, что после долгого пути разногласий и консультаций в 1999г. Польша, Чехия и Венгрия стали членами Альянса с вытекающими из этого всеми обстоятельствами.

Этот шаг стал символом того, что НАТО не остановится на достигнутом и трансформация будет продолжаться, хочет того Россия или нет. Трансформация Альянса свидетельствует об одном очень важном обстоятельстве: Альянсу нужно пространство для изменения и переоценки собственной роли в обеспечении уже не только евроатлантической, но и международной безопасности, механизмов сотрудничества, в том числе и с новыми партнерами из бывших советских республик.

THE LOGIC OF NATO'S ENLARGEMENT IN THE PROCESS OF ALLIANCE TRANSFORMATION CONTEXT

ARA SAHAKYAN

Lecturer of Russian-Armenian
(Slavonic) University

Summary

NATO is considered the most powerful and institutional strategic block of modern times, which has its own goals and means of reaching them. These means in many cases reflected the Cold war till the end of 90s, when the priority was the policy of "isolation". A lot of things have changed after the collapse of the USSR. The Alliance has also changed. This was needed to adapt to the new conditions and to provide the members security without the threat of the Soviet Union. The transformation of the Alliance strategic conceptions must be fitted to the new realities, so that it must be taken into account that the Alliance must progress and that progress, on the one hand, must correspond to the Alliance's security and, on the other hand, correspond to Central and Eastern European countries' security demands. The first consequence of that transformation was the fact that after, controversy and long period of consultation, in 1999 Poland, the Czech Republic and Hungary became the members of the Alliance as a result of all these circumstances.

This step became the symbol of the fact, that NATO would never curtail its achievements and transformation would continue whether the Russian Federation approved of it or not. The transformation of the Alliance is a testament to several important circumstances: the Alliance needs territory for evaluating its own role and, not only for the Euro-Atlantic, but a cooperative mechanism in providing international security, as well as with new companions such as the Republics of the former Soviet Union.

**ԴՎՎԻԹ ՎՐՈՒՅՐԻ
ՋԱՄԱՅԱՆ**
Յոգեբանական գիտությունների
թեկնածու

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից աշխարհը աչքի է ընկնում մշակույթների փոխներգործությամբ, ինչպես նաև՝ այդ մշակույթները կրողների միջև հաճախակի հաղորդակցությամբ: Նման պայմաններում գործնական մեծ մշանակություն է ստանում միջմշակութային ընկալումների ուսումնասիրությունը:

Միջէթնիկական ընկալումները հարկավոր է դիտարկել սոցիալական ընկալումների լայն համատեքստում՝ որպես վերջիններիս մի տեսակ:

Սոցիալական ընկալում ասելով, ինչպես հայտնի է, ժամանակակից հոգեբանության ասպարեզում հասկանում են մարդու կողմից այլ մարդու, խմբերի, տարատեսակ սոցիալական երևույթների ընկալումը¹: Սոցիալական ընկալման գործընթացը սկիզբ է առնում, երբ մարդիկ կամ խմբերը մտնում են հաղորդակցության մեջ և փոխներգործում են միմյանց վրա:

Միջմշակութային ընկալումների հետ գործ ունենք բոլոր այն դեպքերում, երբ հաղորդակցության մեջ են մտնում տարբեր մշակույթ կրող անհատներ: Երբ տարբեր մշակույթների ներկայացուցիչներ մտնում են հաղորդակցության մեջ, ապա այդ շփումն ինքնստիմբյան վեր է ածվում այդ մշակույթների շփման՝ ի դեմս տարբեր էթնոֆորների՝ սեփական էթնիկական հանրության մշակույթը կրողների: Այս հանգամանքը իր յուրահատուկ նկարագիրն է հաղորդում միջմշակութային հաղորդակցության գործընթացին:

Կողմերի միջև հաղորդակցության առաջին իսկ վայրկյաններից սկիզբ է առնում փոխադարձ համեմատության գործընթացը:

Ընդ որում, սա կարող է տեղի ունենալ ներակա կերպով, գիտակցության թույլ մասնակցությամբ կամ՝ միանգամայն գիտակցաբար: Այս գործընթացը կարելի է համարել միջմշակութային ընկալման առաջին փուլը: Փոխադարձ համեմատության ընթացքում աչքի են ընկնում ինչպես մշակութային ընդհանրություններն ու նմանությունները, այնպես էլ տարբերությունները: Փոխադարձաբար միմյանց ընկալող կողմերի ներհոգեբանական պլանում ակտիվանում է էթնիկական ինքնագիտակցությունը, սեփական հանրության պատկանելու կամ, այլ կերպ ասած, «մենքի» զգացումը: Սեփական էթնիկական հանրության դիրքերից հանդես գալու հանգամանքը պատճառ է դառնում, որպեսզի հաղորդակցության կողմերի միջև ականա սկիզբ առնի «մենք»-«նրանք» հակադրությունը: Հենց «մենքի» և «նրիչի» դիրքերից էլ ծավալվում է համեմատության գործընթացը:

Կախված մշակութային տարբերությունների կամ նմանությունների չափից՝ փոխադարձ համեմատության արդյունքում հաղորդակցվող կողմերի մոտ կարող է ձևավորվել խորթության կամ ընդհանրականության յուրահատուկ զգացողություն:

Ընդհանրականության զգացողությունը աստիճանաբար կարող է սահուն կերպով վերաճել համակրանքի: Մինչդեռ, որքան ավելի զգալի են երկու մշակույթների միջև տարբերությունները, այնքան ավելի զգալի է խորթությունը միմյանց ընկալող կողմերի միջև: Այստեղ հատկանշականն այն

¹Նալչաջյան Ա. Ա., Յոգեբանության հիմունքներ, Երևան 1997, 167 էջ:

է, որ խորթության զգացողությունը դեռ վառ արտահայտված ազդեսիվ թշնամանք չէ: Խորթության զգացողությունը ընդամենը կարող է լինել ազդեսիվ դիրքորոշման մախադրյալ: Ընդ որում, խորթության զգացումը կարող է վերաճել վառ արտահայտված ազդեսիվ դիրքորոշման այն դեպքում, եթե հաղորդակցվող կողմերի միջև առկա է մաս կենսականորեն կարևոր շահերի բախում: Վերջինիս բացակայության պարագայում խորթության զգացողությունը կարող է վերաճել թույլ արտահայտված ազդեսիվության: Այս դեպքում միմյանց փոխադարձաբար ընկալող կողմերի հոգեբանական ընկալումներում ազդեսիվության տարրն արտանդված է երկրորդ պլան, ինչի պատճառով այն դրսևորվում է ոչ թե բացահայտ հակամարտության տեսքով, այլ՝ անուղղակի եղանակներով:

Ազդեսիայի այդպիսի անուղղակի-քողարկված դրսևորումներից թերևս ամենահետաքրքրականը տարբեր մշակույթ կրողների միջև հոգեբանական տարածության ստեղծումն է, այն է՝ միմյանց հետ շփվելուց խուսափելը, հաղորդակցվել չցանկանալը: Նման դեպքում տարբեր մշակույթ կրողները հաղորդակցվում են միայն ամենամահրաժեշտ դեպքերում, երբ հաղորդակցությունը այս կամ այն պատճառով անխուսափելի է:

Մշակութային ակնհայտ տարբերությունների առկայության դեպքում կողմերը կարող են միմյանց համդեպ ունենալ հակակրանքի զգացում: Այս հույզի առկայության պարագայում կողմերը մույնիսկ միմյանց մարմիններից յուրահատուկ, իրենց համար տհաժ հոտի զգացում են ունենում: Ընդ որում, հատկանշականն այն է, որ այդ զգացողությունը կարող է սուբյեկտիվորեն ծայրահեղ չափազանցված լինել և հենց այդ տարբերությամբ պայմանավորված՝ ավելի սուր ընկալվել, քան իրականում է: Այս պարագայում զզվանքի հույզը պետք է դիտարկել իբրև ազդեսիվ դիրքորոշման մի մաս:

Եթե միևնույն տեղանքում բնակվում են միմյանցից զգալիորեն տարբերվող մշակույթ ներկայացնող խմբեր, ապա խոր-

թությամբ պայմանավորված անուղղակի ազդեսիան կարող է դրսևորվել միմյանց հետ ազգակցական կապերի մեջ չմտնելու՝ ամուսնություններից խուսափելու եղանակով: Այս պայմաններում հարևանությամբ ապրող և իրարից էապես տարբերվող էթնիկ հանրույթների միջև լավագույն դեպքում կարող են հաստատվել փոխաշահավետ տնտեսական հարաբերություններ, սակայն դրանից խորթությունն ու անուղղակի ազդեսիան բնավ չեն մեղմվում: Փոխաշահավետ տնտեսական հարաբերությունների առկայությունը այս դեպքում թույլ չի տալիս, որպեսզի քողարկված, անուղղակի ազդեսիան դառնա բացահայտ, կանխում է էթնիկական խորը թշնամանքի և հակամարտությունների առկայությունը միայն:

Միջմշակութային ընկալումները պայմանավորում են միջմշակութային հաղորդակցության ընթացքը: Չետևաբար, նպատակահարմար է այստեղ թեկուզ հպանցիկ կերպով անդրադառնալ միջմշակութային հաղորդակցության խնդրին:

Դիտարկենք միջմշակութային հաղորդակցությունը վերջինիս տևողության տեսանկյունից: Այդ համատեքստում նպատակահարմար է առանձնացնել միջմշակութային հաղորդակցության *կարճատև, երկարատև և մշտական* տեսակները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն հոգեբանական նկարագիրը: Այսպես, կարճատև միջմշակութային հաղորդակցության օրինակներ են զբոսաշրջությունը, զանազան գործուղումները, կարճատև այցելությունները: Երկարատև միջմշակութային հաղորդակցություն տեղի ունի, օրինակ, աշխատանքային միգրացիայի կամ, ասենք, ուսումնառության նպատակով արտերկիր մեկնելու դեպքում: Իսկ ահա մշտական միջմշակութային հաղորդակցությունը առկա է այն դեպքում, երբ միևնույն տարածքում հարևանությամբ բնակվում են տարբեր էթնիկ հանրույթներ:

Այսպիսով, միջմշակութային հաղորդակցության գործընթացում սկիզբ առնող համեմատությունը, ըստ էության, դիմացինի մասին դիրքորոշման ձևավորման առաջին

քայլը պետք է համարել: Համեմատությանը հաջորդում է դիրքորոշման իմացական կողմի կամ կարծիքի ձևավորումը, ինչը հիմնվում է մշակութային ընդհանրությունների կամ տարբերությունների վրա: Այլ մշակույթի ներկայացուցչին ընկալողի հոգեկան պատկերացումներում ստեղծվում է մի կողմից «ուրիշի», «տարբերի», իսկ մյուս կողմից՝ «մամի», «յուրայինի» մասին պատկերացում: Այս պայմաններում սկսում է գործել ներխմբային առաջնորդության հոգեբանական մեխանիզմը, որի արդյունքում հաճախ ձևավորվում են «լավ» կամ «վատ» գնահատականներ, փակցվում պիտակներ:

Ներխմբային առաջնորդության մեխանիզմի աշխատանքի արդյունքում անձի մեջ ձևավորվում է այն պատկերացումը, որ այն ամենը, ինչ «մենքին»՝ սեփական մշակույթին է պատկանում, լավն է և, ընդհակառակը, այն ամենը, ինչը դուրս է «մենքի» սահմաններից, լավը չէ կամ վատն է: Պետք է հաշվի առնել, որ ներխմբային առաջնորդությունը առավել վառ է դրսևորվում սեփական էթնոսի հետ հոգեբանորեն նույնացած, ուժեղ խմբային ինքնագիտակցություն ունեցող խմբերի մոտ: Նման մարդիկ օտար մշակույթը «գնահատում են» սեփական մշակույթի դիրքերից: Այդ է պատճառը, որ համեմատության գործընթացը ակամա հանգեցնում է գնահատական տալուն կամ պիտակավորմանը: Հետևապես, «օտարի», «ուրիշի» մասին պատկերացումը, որը համեմատության արդյունք է, արագ վերաճում է գնահատականի՝ «լավի» կամ «վատի»: Ընդ որում, գնահատման հիշյալ գործընթացն ունի խորքային ենթագիտակցական հիմքեր: Համեմատող անձը գիտակցում է լոկ իր ենթագիտակցության մեջ արդեն ձևավորված դիրքորոշման արդյունքը, այլ ոչ թե՝ գործընթացը: Այս կապակցությամբ հարկավոր է հաշվի առնել մի հետաքրքրական հանգամանք ևս: Անգամ

էթնիկական մարզինալների մոտ միջմշակութային շփումների ժամանակ հիմնականում նկատվում է թուլացած էթնիկական ինքնագիտակցության ուժգնացում, ակտիվացում: Իսկ եթե այն այնուամենայնիվ չի ուժգնանում, ապա հետևությունը մեկն է. տվյալ անձի օտարումը սեփական էթնիկ հանրույթից բավականին մեծ է, առկա է մարզինալ ինքնագիտակցություն: Սա այն դեպքն է, երբ անձը ծագումնաբանորեն պատկանում է մեկ էթնիկական հանրույթի, սակայն իրեն նույնացնում է մեկ այլ հանրույթի հետ, իրեն համարում է մեկ ուրիշ հանրույթի ներկայացուցիչ՝ ձգտելով դառնալ վերջինիս անդամ: Այստեղ հատկանշականն այն է, որ մարզինալ անձը կարող է համակրանքով համակվել հաղորդակցվող կողմի հանդեպ այն պարագայում, եթե նրա մշակույթը նման է այն հանրույթի մշակույթին, որին անդամագրվել է ձգտում նա:

Կարծիքի ձևավորմանը հաջորդում է դիրքորոշման ձևավորման հաջորդ՝ հուզական վերաբերմունքի առաջացման փուլը: Տարբեր կամ նման, հետևաբար՝ լավը կամ վատը լինելու պատկերացումների հիման վրա առաջանում է կամ համակրանք, կամ հակակրանք:

Այստեղ նպատակահարմար է հատուկ անդրադառնալ միջմշակութային ընկալման գործընթացում առաջացող այնպիսի հույզի, ինչպիսին հետաքրքրությունն է: Հետաքրքրությունն առաջանում է ամեն անգամ, երբ մարդ առնչվում է մի որևէ նորույթի հետ: Միջմշակութային հաղորդակցության համատեքստում հետաքրքրությունն առավելապես ակնհայտ է բոլոր այն դեպքերում, երբ հաղորդակցումը այլ մշակույթի հետ կարճատև է և անբռնազբոս:

Ինչպես գիտենք, հետաքրքրությամբ համակված մարդը ձեռնարկում է կողմնորոշման գործողություններ²: Այսպես օրինակ՝ մարդը կարող է ճանաչողական ակ-

²Նալչաջյան Ա. Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան 1997, 443 էջ:

տիվություն հանդես բերել՝ հետաքրքրվելով օտար մշակույթով և բավականություն ստանալ իր այդ գործունեությունից զբոսաշրջության ժամանակ, երբ կամավոր կերպով «Ուերխուժել է» օտար հանրույթ և «հայտնագործում է» այն: Ջբոսաշրջիկի համար օտար մշակույթը կարող է ընկալվել խորթ, տարօրինակ, անհասկանալի, սակայն բուռն բացասական դիրքորոշում այս դեպքում հազվադեպ է ստեղծվում այն պարզ պատճառով, որ զբոսաշրջիկն իրեն հաշիվ է տալիս, որ իր շփումը օտար մշակույթի հետ ժամանակավոր է, որ նա վերադառնալու է իր համար ընդունելի, սովորական միջավայր: Այս դեպքում օտար մշակույթն ընկալողի մեջ ստեղծվում է դիրքորոշում, որտեղ հուզական բաղադրիչը բնորոշվում է հետաքրքրության ապրումով: Այն չի հասցնում վերաճել որևէ այլ հույզի, որովհետև օտար մշակույթի հետ զբոսաշրջիկի ծանոթությունը շատ արագ ավարտվում է:

Դիրքորոշման ձևավորման վերջին՝ երրորդ բաղադրիչը վարքայինն է, երբ հաղորդակցվող կողմերն արդեն իսկ ունենալով կարծիք և հուզական վերաբերմունք վճռում են, թե ինչպես վարվել: Փոխադարձաբար, ընկալող կողմերի մոտ դիրքորոշման վարքային բաղադրիչը դրսևորվում է կամ համագործակցության այս կամ այն աստիճանով, կամ դրա բացակայությամբ, կամ՝ ագրեսիվությամբ:

Այս համատեքստում նպատակահարմար է անդրադառնալ միջմշակութային հարաբերություններում էթնիկական ագրեսիվության դրսևորումներին: Այսպես, եթե փոխադարձ ընկալումների հետևանքով կողմերի միջև ծագել է թշնամանք, ապա նրանց միջև ագրեսիվությունը կարող է դրսևորվել՝ **ա.** համագործակցության բացակայությամբ, **բ.** արհամարհանքով, **գ.** շփումների բացառումով, **դ.** ծաղրածանակով և անեկդոտներով, **ե.** ֆիզիկական բռնությամբ: Եթե դիրքորոշման հուզական բաղադրիչը բնորոշվում է համակրանքով, ապա կողմերի միջև հաստատվում է ակտիվ համագործակցություն: Այս դեպքում խոսքը հիմնականում փոխադարձաբար համագործակ-

ցության մասին է: Այդուհանդերձ, նույնիսկ համակրանքի առկայության դեպքում առկա են համագործակցության մի շարք մակարդակներ: Այսպես, օրինակ, եթե փոխադարձ մշակութային նմանությունները շատ են, ապա համագործակցությունը կարող է լինել սերտ, իսկ տարամոտություններն ընդունելի: Եվ ընդհակառակը. եթե առկա են միջմշակութային էական տարբերություններ, ապա ամուսնական կապերի մեջ մտնելու հավանականությունը էապես նվազում է և լավագույն դեպքում խոսք կարող է լինել փոխադարձաբար համագործակցության մասին:

Այժմ, երբ մենք պարզեցինք միջմշակութային ընկալումների արդյունքում միմյանց մասին կողմերի դիրքորոշման ձևավորման ընթացքը, նպատակահարմար է անցում կատարել ժամանակակից հայ հանրությունում առկա միջմշակութային ընկալումներին և դիրքորոշումներին:

Միջմշակութային հաղորդակցության խնդիրը հայաստանյան իրականության պարագայում մասնավորեցնելիս վերը նշված գործոններից զատ հարկավոր է հաշվի առնել մեկ այլ հանգամանք ևս. խոսքը Հայաստանի միատարր լինելու մասին է: Այն հանգամանքը, որ Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են, ստեղծում է միջմշակութային ընկալումների ուրույն միջավայր:

Հայաստանյան հանրության միատարր լինելու հանգամանքը եվրոպական կառույցների ներկայացուցիչների կողմից երբեմն սխալ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, հայաստանյան հասարակության միատարր լինելը միանգամայն անհիմն, մակերեսորեն մեկնաբանվում է այլ ազգերի նկատմամբ հայերի անհանդուրժողականությամբ: Արդյունքում, Հայաստանի մոնոէթնիկ լինելը դիտարկվում է իբրև միջէթնիկական անհանդուրժողականության հետևանք, իսկ երբեմն էլ՝ անհանդուրժողականություն ծնող գործոն: Հայաստանի բնակչության միջմշակութային ընկալումների ուսումնասիրությունը և դրա արդյունքների տարածումը

կոչված է ցրելու օտարերկրացիների այս թյուր պատկերացումը:³

Ինչպես վերևում նշել ենք, Հայաստանը աշխարհի ամենամիատարր հանրույթ ունեցող պետություններից է: Այդուհանդերձ, երկրում իրենց ազգային նկարագիրը պահպանած հանրույթներից են եզդիներն ու մոլոկանները: Այստեղ մենք միտումնավոր կերպով զերծ ենք մնում «ազգային փոքրամասնություն» եզրույթը կիրառելուց, քանզի «ժամանակակից գիտություններում, հատկապես սոցիոլոգիայի և սոցիալական հոգեբանության բնագավառներում «փոքրամասնության» մասին խոսելիս նկատի ունեն ոչ այնքան որևէ խմբի քանակական փոքրաթիվությունը (փոքրաքանակ լինելը), որքան նրա ենթակայական դիրքը և համապատասխան դերը տվյալ հասարակության մեջ»⁴: Կարծում ենք, ակնհայտ է, որ հայաստանյան իրականության մեջ խոսել այս կամ այն էթնիկական խմբի ենթակայական դիրքի կամ հայ էթնիկական հանրույթի համեմատ ստորադասված դերի մասին՝ միանգամայն ավելորդ է. դա բացառված է նաև օրենսդրորեն՝ ՀՀ սահմանադրությամբ:

Եզդիների և մոլոկանների էթնիկ հանրույթների յուրահատկությունն այն է, որ նրանք հիմնականում բնակվում են հավաք, մույն բնակավայրերում: Այսպես, մոլոկանների հանրույթը բնակվում է հիմնականում ՀՀ հյուսիսային կամ հյուսիս-արևելյան շրջաններում, կամ առանձին բնակավայրերում, կամ՝ հայաբնակ բնակավայրի առանձին թաղամասերում: Եզդիների դեպքում մենք նկատում ենք մույնը, թերևս այն բացառությամբ, որ նրանք առանձին ըն-

տանիքներով բնակվում են նաև ՀՀ բազմաթիվ բնակավայրերում, հատկապես քաղաքներում՝ ցրված, ինչը մոլոկանների մոտ ավելի քիչ է հանդիպում:

Քանի որ վերը նշված էթնիկ հանրույթները ունեն զգալի էթնոտարբերակիչ հատկություններ, որով տարբերվում են հայ հանրույթից, ապա այս հանրույթների միջև համագործակցությունը սահմանափակվում է տնտեսապես փոխշահավետ հարաբերություններով: Այս հանրույթները բավական չափով ինտեգրված են հայ հասարակության մեջ, քանի որ սեփական լեզվից զատ, տիրապետում են նաև հայերենին, ինչը նրանց զգալիորեն մոտեցնում է հայերին: Այս էթնիկ հանրույթների և հայերի միջև չկա լարվածություն: Կարելի է ասել, որ եզդիների և մոլոկանների ինտեգրացիան հայաստանյան իրականությանը գտնվում է միջին մակարդակի վրա: Թեև այստեղ առկա է մեկուսացած հանրային կյանքի զգալի աստիճան, այդուհանդերձ առկա է նաև բավականին արդյունավետ տնտեսական փոխշահավետ համագործակցություն: Ներգրավված լինելով հիմնականում գյուղատնտեսական և առևտրի ոլորտներում՝ թե՛ եզդիները, թե՛ մոլոկանները հստակորեն նվաճել են իրենց էթնիկական դիրքը և դերը հայ հանրույթում: Էթնիկական դիրք և դեր ասելով պետք է հասկանալ այն կամ գործառույթները, որոնք այս կամ այն էթնիկական խումբը իրականացնում է բազմազգ հանրույթում: Այսպես, որոշ ապրանքատեսակների արտադրությունն ու վաճառքը հստակորեն զուգորդվում են մոլոկան և եզդի ազգաբնակչության հետ:

Եզդիների, մոլոկանների և հայերի միջև ամուսնական կապերը ներհատուկ չեն

³Ա. Նալչաջյան, «Էթնիկական հոգեբանություն», Երևան, 2001, էջ 39:

⁴Ի դեպ, այս հարցը հետաքրքրել է նաև ժամանակակից ազգագրագետներին, որոնք, ինչպես իր «Պատմական ազգագրագիտություն» գրքում նշում է բնագավառի հայտնի մասնագետ Ս. Լուրյեն, համարվում է ազգագրագիտական պարադոքս: Մասնագետների այսպիսի որակման համար հիմք է ծառայել հետևյալ երկու, կարելի է կարծել՝ իրարամերժ իրողությունների համագոյակցումը հայաստանյան իրականության մեջ: Այդ իրողություններն են Հայաստանի գրեթե միատարր լինելու փաստը մի կողմից, և օտարների նկատմամբ հայերի փաստացի հանդուրժողականությունը՝ մյուս կողմից: Այս «պարադոքսը» դեռևս սպասում է իր էթնոհոգեբան հետազոտողին:

մեր իրականությանը: Միջնշակության տարբերությունները պարզապես բացառում են դրանք: Հատկանշականն այն է, որ այս իրավիճակը միանգամայն օրինաչափ է և ձեռնտու հայաստանյան հանրայթի բոլոր կողմերին՝ թե՛ եզրիններին, թե՛ մոլորկաններին և թե՛ հայերին: Կարելի է ասել, որ այս երեք կողմերի միջև հաստատված է մի յուրահատուկ միջնշակության փոխհարաբերությունների բալանս, որը հայաստանյան հանրայթի բնականոն և ներդաշնակ զարգացման և մշակության ու ներքաղաքական կայունության գրավականն է:

Հայաստանյան հասարակության մաս կազմող մյուս էթնիկ միավորները հիմնականում ինտեգրված են հայ հանրություն, ներքնայնացրել են նրա մշակույթը, հիմնականում հայախոս են և չունեն հավաք բնակվող հանրություններ:

Ժամանակակից հայ հանրության բնորոշ մշակության իրողություններից է սփյուռքահայության և հայաստանաբնակ հայերի փոխհարաբերությունները թե՛ արտերկրում, թե՛ Հայաստանում: Պետականության վերականգնումից ի վեր Հայաստանում սփյուռքահայերի որոշակի ներհոսք է նկատվում: Եվ այս դեպքում նույնպես հայաստանաբնակ հայերի և սփյուռքահայերի միջև առկա մշակության տարբերությունները որոշակի խորթություն են ստեղծում միմյանց հանդեպ: Տարբեր էթնիկ հանրություններում սոցիալականացված լինելով՝ նրանք հայաստանյան միջավայրում սոցիալականացված հայերից իսկապես տարբերվում են: Հիշեցնենք, սոցիալականացումը անձի ձևավորման գործընթաց է: Սոցիալականացման արդյունքը տվյալ մշակության բնորոշ արժեքները և նորմերը կրող անձի կայացումն է: Հետևապես, ծագումնաբանորեն հայ մարդիկ, ովքեր սոցիալականացել են տարբեր երկրներում, կրելով հանդերձ հայի ինքնագիտակցություն, այդուհանդերձ, անխուսափելիորեն տարբերվում են միմյանցից: Այս տեսանկյունից

սփյուռքը նույնպես միատարր չէ:

Վերը նշված օրինաչափությունները հոգեբանորեն նպաստավոր մթնոլորտ են ստեղծում հայ էթնոսի տարբեր հատվածների միջև տարատեսակ հակասությունների խորացման համար: Եվ բնավ պատահական չէ, որ հենց այդ տարբերությունները արհեստականորեն ուռճացնելով վերջին տարիներին որոշ ուժերի կողմից սփյուռքահայության և հայաստանյան հայության միջև պառակտում մտցնելու միտում է նկատվում: Սա հատկապես վերաբերում է ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ սփյուռքահայության և հայաստանաբնակ հայության շահերի կարծեցյալ տարբերությանը, թե իբր Եղեռնի ճանաչումը ձեռնտու է սփյուռքահայությանը, թե հենց սփյուռքին է հասնելու նյութական փոխհատուցումը, թե Հայաստանի հայերը Եղեռնի ճանաչումից որևէ օգուտ չունեն: Այս պառակտիչ դիրքորոշման հետևողական տարածումը հարկավոր է զնահատել իբրև ՀՀ դեմ հոգեբանական դիվերսիա:

Հայաստան այցելած սփյուռքահայերի և տեղաբնակ հայերի միջև որոշակի խորթության պահպանումը պայմանավորված է նաև նրանով, որ սփյուռքահայերը Հայաստան են գալիս իբրև զբոսաշրջիկներ: Խորթությունը ուղղակի չի հասցնում հաղթահարվել: Մշտական բնակության համար տեղափոխվածների ինտեգրացիան հայաստանյան հանրություն, թող որ՝ որոշ բարդություններով, բայց այդուհանդերձ աստիճանաբար տեղի է ունենում:

Այս իմաստով կարծում ենք, որ հետազոտողների համար հետաքրքրություն է ներկայացնում անցյալ դարի 40-ական թթ. վերջին և դրան հաջորդած հայրենադարձության, ինչպես նաև Խորհրդային Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրացիայի գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչադյան Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան 1997:
2. Лурье С. В., Историческая этнология. Москва, 1998.
3. Налчаджян А. А., Этнопсихологическая са-

- мозащита и агрессия. Ереван, 2000.
4. Налчаджян А. А., Этническая характерология. Ереван, 2001.
 5. Налчаджян А. А., Агрессивность человека. Москва.: Питер, 2007.
 6. Солдатова Г. У., Психология межэтнической напряженности. М.: Смысл, 1998.
 7. Стефаненко Т. Г., Этнопсихология. М.: «Академический проект», 1999.

**ОСОБЕННОСТИ МЕЖКУЛЬТУРНОЙ
КОММУНИКАЦИИ В УСЛОВИЯХ
АРМЯНСКОЙ
ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ**

ДАВИД ДЖАМАЛЯН

Кандидат психологических наук

Резюме

В статье рассматривается проблема психологических механизмов, определяющих эффективность межкультурной коммуникации. Особое внимание уделено изучению процессов, лежащих в основе межкультурного восприятия. Вышеупомянутые проблемы представлены в контексте армянской этно-культурной среды.

**PECULIARITIES OF INTERCULTURAL
PERCEPTIONS IN CONTEXT
OF ARMENIAN
REALITY**

DAVID DJAMALYAN

Candidate of Science in Psychology

Summary

The article deals with the problem of psychological mechanisms predetermining the efficiency of intercultural communication. Special attention is given to the study of processes embedded in the basis of intercultural perception. The aforementioned problems are considered in the context of the Armenian ethno-cultural milieu.

ԳՈՒՐԳԵՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԵԶԼՈՒՄՅԱՆ

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի
ուսանող

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՅՈՒՐԴՅԱՆԻ ՆԿԱՐԱԳՐԱԾ ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ

Յուրահատուկ մոտեցում է ցուցաբերել Իսրայել Օրու գործունեությանը Հարություն Քյուրդյանը: Հեղինակն իր 1960թ.-ին հրատարակած «Իսրայել Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն»¹ աշխատության մեջ ակնհայտ բացասական երանգներով է ներկայացնում Օրու գործունեությունը:

Այդ գրքի հրատարակումը մի իսկական իրադարձություն էր հայ պատմագրության համար, որովհետև այն ակնհայտորեն և ամբողջությամբ տարբերվում էր Օրու մասին գրված մյուս աշխատություններից, և նոր խոսք ու համարձակ քայլ էր իր ժամանակի համար: Դրսևորելով ազատամիտ և ոչ դոգմատիկ մտածողի և փաստերը վերլուծող, նրանց բովանդակությունը խորքից վեր հանող պատմաբանի ծիրք՝ Քյուրդյանն Իսրայել Օրու գործունեության տարբեր դրվագների իր գնահատականները հենում է անժխտելի փաստերի իր յուրովի մեկնաբանման, իր մտածողության վրա: Այդ մտածողությունը արտահայտվում է նրա մոտեցմամբ այն իրադարձություններին, ժամանակի դեպքերին, որը նա ուսումնասիրում է՝ պահպանելով անաչառությունը: Սակայն պետք է նշել նաև նրա կանխակալ վերաբերմունքը դեպի բոլոր այն իրադարձությունները, գործընթացները, որտեղ Օրին որևէ դերակատարություն է ունեցել: Նախօրոք կարծես անեն ինչ պարզ է: Քանի որ Օրին նրա համար ի սկզբանե խաբեբա, փառասեր, շահամոլի մեկն է, ապա նրա բոլոր գործողությունները դատապարտված են, նրա բոլոր քայլերի տակ նա տեսնում է անձնական շահը: Եվ այս մոտեցումը տարածվում է բոլոր դեպքերի, իրադար-

ձությունների վրա:

Պետք է նշել, որ հեղինակն իր տեսակետն անքննելի, հարյուրտոկոսանոց ճշմարտություն է համարում: Գրում է շատ վստահ տոնով, և ամբողջն ուղղված է ընթերցողին իր տեսակետը համոզելուն:

Հենց գրքի սկզբում էլ հեղինակը նշում է իր նպատակը՝ ճանաչել տալ Օրուն իր արժեքով:

Քյուրդյանի կարծիքով Օրին իր ծննդյան տեղի մասին չի խոսել, որովհետև եթե անցյալը գաղտնի մնար, նա կարող էր իրեն Պռոշյան ներկայացնել, նույնիսկ արքայազուն: Եվ հետաքրքիր հավելում է անում Քյուրդյանը՝ Պռոշյան տոհմը չքացած էր և չէր կարող Օրիին դիմակազերծ անել²:

Հեղինակի համար այս խնդիրը կարևորվում է և՛ որպես Օրիի հերթական խաբեության դրվագ, և՛ որպես հիմք Օրու հետագա գործունեության համար: Այսինքն՝ մեծ նշանակություն ուներ այն փաստը, թե ինչ ծագում ուներ Օրին, որպեսզի նա կարողանար իր գործունեությունը արդյունավետ ծավալել:

Հեղինակը բազմաթիվ փաստեր է բերում, որ Օրին Պռոշյան իշխանական տոհմից չէ³:

Օրիի կենսագրական շրջանը մինչև 1699թ.-ը ներկայացնելիս հեղինակն այն պարուրում է խաբեբայություններով, կեղծիքներով: Օրինակ, հիմնվելով Ստեփանոս Բոշքայի մի նամակի վրա՝ նա գտնում է, որ Օրին Փարիզում փող է կորզել հայ երևելիներից՝ հայ իշխանի որդի ներկայանալով, բայց բացահայտվել է նրա խարդախությունը և Օրին փախել է Փարիզից, հայտնվել Դյուսելդորֆում⁴:

Քյուրդյանի կարծիքով «Դյուսել-

¹Յ. Քիլիտեան, Իսրայել Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն, Վենետիկ, 1960:

²Տես նշվ. աշխ., էջ 22:

³Տես նշվ. աշխ., էջ 22-24:

⁴Տես նշվ. աշխ., էջ 26:

դորձում էլ, ըստ երևույթին, Օրին հայկական ազատագրության գաղափարն էլ յուրացրեց՝ այն շահագործելու համար»³:

Այնուհետև Քյուրդյանը խոսում է այն մասին, թե ինչպես Օրին կարողացավ Յովհան Վիլհելմի արքունիքում հասնել բարձր դիրքի: Կարողացավ իշխանին գրավել Հայաստանի ազատագրության գաղափարով և նամակներ ստանալ նրանից, որոնք ուղղված էին վրաց Գեորգի թագավորին և Հայաստանի իշխաններին ու տերերին: Դա շատ կարևոր էր Օրինի հետագա անելիքների համար:

Այդ գործում, ըստ Քյուրդյանի, նրան օգնել է իշխանի խոստովանահայր Պոտինեն, որին Օրին հավաստիացրել էր հայերի՝ պապականությանը հավատադարձության մասին: Ըստ Քյուրդյանի՝ 1698թ.-ին, այսինքն՝ այդ նամակները ստանալու ժամանակ, Օրին արդեն պլանավորել էր Անգեղակոթի ժողովը: Այնուհետև ներկայացվում է Օրինի ուղեգրությունը, որը Օրին հանձնել էր իշխանին 1699թ.-ի հոկտեմբերի 1-ին՝ վերադարձից հետո: Քյուրդյանն ուղեգրության բովանդակությունը հեքիաթ է համարում և այդ ժամանակահատվածում՝ 1698թ.-ի օգոստոսի 1-ից մինչև 1699թ.-ի սեպտեմբերը, Օրու գտնվելու, գործելու մասին փորձում է անել դատողություններ: Քյուրդյանը չի կասկածում, որ Օրին գնացել է Մոսկվա և այնտեղ է հղացել ցարին դիմելու գաղափարը, ընդ որում, ճանապարհին՝ Լեհաստանում, Քյուրդյանի համոզմամբ, հանդիպել է Մինաս Տիգրանյանին:

Այս ամբողջ գործունեության մեջ Օրին հմտորեն օգտագործում էր Էջմիածնի 1678թ.-ի ժողովը և կաթողիկոսի գնալը Եվրոպա Հայաստանի ազատագրության համար, որին Քյուրդյանը ոչ մի հավատ չի ընծայում: Դրանով Օրին փորձում էր ցույց տալ կաթողիկոսի պապականությանը միանալը:

Այս ընթացքում, ըստ Քյուրդյանի, Օրին կարողացավ իր անձնական կարիքները բավարարել՝ Մոսկվայում ագուլիսից

Թարիղուլից և նրա եղբորից վերցրած միջոցներով:

Վերադարձին նա պայմանավորվել էր հունգարահայերի հետ, որ 15 ձի վաճառեն իրեն, որոնք պետք է նվեր տար իշխանին և Ավստրիայի կայսրին:

Դրանք այն ձիերն էին, որոնք իբր Հայաստանից նվեր էր ուղարկված իշխանին: Հետագայում իշխանի առջև Օրին ստիպված էր բացատրություններ տալ նվերի ուշացման վերաբերյալ: Բայց Օրին կարողացավ ապահովել ձիերի գալը Հունգարիայից: Քյուրդյանը ներկայացնում է այդ ամբողջ պատմությունը՝ իր մանրամասնություններով, փորձում է վեր հանել Օրու խորամանկությունները և ձիավաճառներին խաբելու փորձը, նրանց դժգոհությունները Օրուց⁶:

Օրին պետք է պատասխաններ տաներ իշխանին: Դրա համար էլ պատրաստվեցին 2 նամակներ Անգեղակոթի ժողովի անունից, որոնք ուղղված էին Պֆալցի կուրֆյուրստ Վիլհելմին և Պետրոս Մեծին: Այդ նամակների տակ դրված էին հայ մեղիքների ստորագրությունները: «Բոչքան դեռ 1707թ.-ի ապրիլի 16-ի նամակով գիտեր, թե Անգեղակոթի մեղիքները կամ հայ իշխանները Օրինի կողմից են ստեղծված նամակների մեջ»⁷:

Քյուրդյանը տարբեր տեսակի հակասություններ է վեր հանում այդ երկու նամակների մեջ: Օրինակ, Վիլհելմին ուղղված նամակի մեջ խոսվում է հայերին գերությունից և հերձվածությունից փրկելու մասին, իսկ Պետրոսին ուղղված նամակում դրա մասին խոսք չկա:

Եվս մի հակասություն: Օրին մի նամակից պարզվում է, որ ապրիլի 13-ին հասել է Անգեղակոթ և այնտեղ մնացել 12 օր: Ուրեմն մեկնելու օրը ապրիլի 25-26-ին է եղել, այնինչ նամակը ցարին թվագրված է ապրիլի 29-ին:

Իշխանին ուղղված նամակում Օրին իրեն հետագայում ներկայացնում էր որպես լիազորված անձ Հայաստանի մեղիքների

³Յ. Քիլիստեան, նույն տեղում, էջ 26:

⁶Յ. Քիլիստեան, նշվ. աշխ., էջ 26-32:

⁷Յ. Քիլիստեան, նույն տեղում, էջ 56:

կողմից: Սա ևս որպես մեղադրանք է հնչեցվում հեղինակի կողմից, որի կարծիքով այդտեղ լիազորության հարց չկար:

Քյուրդյանը Մինաս Տիգրանյանի վարդապետությունը ևս կասկածի տակ է դնում: Ըստ նրա՝ նամակների լեզուն և գիրը դա չեն ասում: Տիգրանյանը չի հիշում, թե ումից է ստացել վարդապետական գավազան: Եթե լիներ, կհիշեր, քանի որ դա կարևոր էր գործի համար⁸:

Օրին Դյուսելդորֆ վերադառնալուց հետո իշխանին է ներկայացնում Հայաստանի ազատագրության Պֆալցյան ծրագիրը: Այն բավականին ծաղրական ձևով է ներկայացված Քյուրդյանի գրքում: Պարզապես անհեթեթություն է համարվում այդ ծրագիր կոչվածը⁹:

Այս ամենից հետո Քյուրդյանը ավելի է ծայրահեղացնում իր տեսակետը: Նա սահմուկեցուցիչ է համարում այն, որ մոտիկ շրջանի տարբեր գրողներ ընդունում են այս հեթաթեքները իբրև ազատագրական պատմության կարևոր դարաշրջանի սկիզբ: «Այս տղայական հիմարությունները ընդունվում են իբրև հասուն և գործնական գաղափարներ: Մի ամբողջ գրականություն է նվիրված երկրից երկիր թափառական, անծանոթ ծագումով կեղծարար բախտախնդրին: Նրա մեջ տեսնում են նվիրյալ, ազատատենչ գործչի՝ փոխանակ ձիու գող, ինքնամեծար բախտախնդիր տեսնելու»¹⁰:

Սակայն Իսրայել Օրու ծրագիրը չի իրականանում միջազգային իրադրության մեջ կատարված փոփոխությունների պատճառով:

Պֆալցյան ծրագրի ձախողումից հետո պարզ էր, որ միայն Ռուսաստանը կարող է զբաղվել Հայաստանի ազատագրության հարցով: Օրին իր հույսերը սկսում է կապել ռուսական ցարի հետ:

Այդ նպատակով Օրին դիմում է հերթական կեղծիքին: Քյուրդյանը հա-

վանական է համարում, որ հայ մելիքների կողմից Պետրոսին ուղղված նամակը ստեղծվել է 1700թ.-ի սկզբին, որի խմբագրողը Մինաս վարդապետ Տիգրանյանն է եղել¹¹:

«Տարակույս չի կարող լինել, թե Օրիի թղթերը կեղծող խմբագիրն ու գրիչը Մինաս վարդապետն է: Լեզվական ձևեր, ոճեր, բառերի տառադարձություն, գրի անհերքելի նմանություն, ուղղագրություն: Սրանք անմերժելի կերպով կարող են ապացուցել, որ Մինաս վարդապետի կեղծարարություններն են այս երեք թղթերը¹², սակայն, անտարակույս, Օրիի վարպետ առաջնորդությամբ: Մինաս վարդապետը շարունակեց գրագիրը լինել այս կեղծարարությունների, մինչ Օրին միշտ մնում էր ուղեղը»¹³:

«Օրին, անտարակույս, որոշ չափով վարկաբեկված էր հեռանում Մոսկվա, ուր հույս ուներ իր համար նոր ասպարեզ գտնել»¹⁴:

Սրանով փակվում է Եվրոպայի հետ հույսեր կապելու հայ ազատագրական պայքարի շրջանը:

Ըստ Քյուրդյանի՝ «Օրին նոր բան չի ավելացրել մեր ազատագրական պատմության մեջ, երբ Կենտրոնական Եվրոպան հետաքրքրվել էր ուզում հայկական ազատագրությամբ»¹⁵:

Քյուրդյանի համոզմամբ՝ ռուսական կողմնորոշման գաղափարը Օրիից էլ հին է: Նա բերում է 1562թ.-ից մի դրվագ, երբ Շամախիում մի անգլիացի խորհուրդ է տալիս Սիմոն խանի ներկայացուցիչ հային, որ դիմեն ռուսների օգնությանը, որովհետև քրիստոնյա են: Օրին ո՛չ սաղմնավորողը, ո՛չ էլ զարգացնողը եղավ այդ կողմնորոշման: Օրիի կեղծարարությունները չէին կարող նպաստավոր պայմաններ ստեղծել կամ պատճառ լինել նպաստավոր պայմանների զարգացման՝ հայ-ռուսական հարաբերութ-

⁸Տես՝ Յ. Քիլիտեան, նշվ. աշխ., էջ 44-48:

⁹Տես՝ նշվ. աշխ., էջ 50-53:

¹⁰Յ. Քիլիտեան, նույն տեղում, էջ 53-54:

¹¹Տես՝ Յ. Քիլիտեան, նշվ. աշխ., էջ 56:

¹²Խոսքը գնում է Հովհան Վիլիելմին, Պետրոս Մեծին և Հռոմի պապին ուղղված նամակների մասին:

¹³Յ. Քիլիտեան, նույն տեղում, էջ 57:

¹⁴Նույն տեղում, էջ 66:

¹⁵Նույն տեղում, էջ 76:

յունների համար: Ռուսաստանը, ըստ Քյուրդյանի, մտահոգված չի եղել հայերի ազատագրմամբ, այլ ունեցել է միայն մի նպատակ՝ գրավել հայկական հողերը¹⁶:

Ինչպես տեսնում ենք, այն հարցը, որը խորհրդային պատմագրության մեջ անժխտելի է համարվում և մի ամբողջ գրականություն է նվիրված դրան, Քյուրդյանը մերժում է: Նույնիսկ, եթե որևէ դրական տեղաշարժ եղած լիներ, դժվար թե Քյուրդյանը դա վերագրեր Օրիին, քանի որ Օրին նրա համար պարզապես խաբեբա և արկածախնդիր էր ու այդ շրջադարձի մեջ կտեսներ այլ գործոններ:

Ըստ Քյուրդյանի՝ «ցարական կառավարությանը վերահասու եղավ, թե ինչ արժեք ունեին օրիական հեքիաթները»¹⁷:

«Ցարը նույն ժամանակ չուզեց հուսախաբ անել հայկական որևէ ազատագրական ցանկության, որ իր համար զինվորական կարևորություն ուներ: Այդ պատճառով իսկ իբր թե եռանդով շարունակեց բանակցությունները Օրիի հետ, միայն թե այս անգամ բավականացավ վարիչ և մասնակցող նշանակելով ռուս մի պաշտոնյա և ցարական ծառայության մեջ գտնվող Սպաթարիոս անունով մի հույն թարգման»¹⁸:

Այնուհետև անհրաժեշտություն առաջացավ իմանալ հայկական կողմի վերաբերմունքը Օրու ծրագրերի վերաբերյալ: Այդ պատճառով ռուսական կառավարության նախաձեռնությամբ նամակներ հղվեցին Հայաստան:

Այն նամակները, որոնք ուղղվել էին հայ մելիքներին և էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսներին, մնացել էին անպատասխան: Միայն Եսայի կաթողիկոսն էր պատասխան գրել, որը Քյուրդյանը վավերական է համարում: Բայց այնտեղ նշված չի եղել Օրու և Մինասի անունները և այն հասցեագրված է եղել Աստրախան: Մյուս նամակը, որն իբր գրված էր էջմիածնի աթոռակալ Մինասի կողմից, ըստ Քյուրդյանի, մի կասկածելի բան է պարունակում:

Միրոնը նշում է, որ նամակը տվել է կաթողիկոսին Ս. Գրիգորի վանքում և չի հիշում էջմիածնի կոչումը (Երեք եկեղեցիներ): Այս եղելությունից ելնելով՝ Քյուրդյանը նշում է, որ Միրոնը էջմիածին և Գանձասար չի գնացել: Այդպես է փորձում ապացուցել Օրու և Մինասի կեղծիքը: Սա, ըստ հեղինակի, դուռ բացեց Օրու և Մինասի կողմից կեղծ վավերաթղթեր ստեղծելու: Եվ նրանք իրենց պատրաստած նամակները ուղարկեցին Պետրոս Մեծին և Սպաթարիոսին: Ընդ որում, Պետրոսին ուղղված նամակը ավելի սանձարձակ էր կեղծիքի մեջ:

Ըստ Քյուրդյանի՝ Օրին և Մինասը գիտակցում էին, որ շարունակել թղթեր կեղծելու գործը այլևս կարող է վտանգավոր լինել իրենց համար, ուստի նրանք դիմեցին խորամանկության: Նամակներից մեկի վերջում ասվում է (իբր իշխանների կողմից), որ այլևս չենք կարող թուղթ ուղարկել և լիազորում են Մինասին և Իսրայելին, որ նրանք շարունակեն գործել իրենց անունից¹⁹:

Ավելի ապահով լինելու համար նրանք իրենց լիազորեցին նաև էջմիածնից բերված նամակով, որն իբր գրվել էր աթոռակալ Մինասի կողմից: Նամակի գլխի ձախ մասի վրա դրոշմված է Օրու գործակից Մինաս վարդապետի խիստ ջրախառն մեղանով կնիքը²⁰:

Քյուրդյանը հավանական է համարում, որ Աստրախանում Միրոնը ձեռք է բերել Եսայու օրինագիրը և Մոսկվա բերել:

«Ստիպված ենք եզրակացնել, որ Միրոնը գործակից էր և ծանոթ Օրիի և Մինաս վարդապետի կեղծիքին: Վերջիններիս կարգադրությամբ իբր թե էջմիածին և Գանձասար գնաց, թեև խիստ հավանորեն մնաց Աստրախանում: Այլապես պետք է տեսած լիներ, թե Եսայի կաթողիկոսին և թե Նահապետ կաթողիկոսին: Մոսկվայի համայնքից Օրին անտարակույս կարողացավ Աղվանից կաթողիկոսին ուղղված ամենը թուղթ ձեռք բերել, սակայն, երբ գրաբերը այնտեղ հասավ, կաթողիկոսը

¹⁶Տես՝ **Յ. Քիլիստեան**, նշվ. աշխ., էջ 84-86:

¹⁷**Յ. Քիլիստեան**, նույն տեղում, էջ 89:

¹⁸Նույն տեղում, էջ 89:

¹⁹Տես՝ **Յ. Քիլիստեան**, նշվ. աշխ., էջ 90-99:

²⁰Տես՝ նշվ. աշխ., էջ 103-105:

մեռած էր: Միրոնը այդ թուղթը կարող էր մինչև Աստրախան բերած լիներ և մեկի միջոցով այնտեղից Գանձասար դրկած լիներ: Միրոնը էջմիածնին հանդիպած չէ, որովհետև ռուս դիվանագիտական հարցաքննության ժամանակ սխալվելով՝ Ս. Գրիգորի վանքի մասին էր խոսում՝ փոխանակ էջմիածնի, ուր պետք է հանդիպած լիներ Նահապետ կաթողիկոսին: Միմոռի մահվան պատճառով նրա հաջորդ Եսայի կաթողիկոսը պատասխանում է թղթին, և հասցեագրությունից հայտնի է, որ Աստրախան է ուղարկել թուղթը, թեև այն ուղղված է Աստրախանի և Մոսկվայի համայնքին՝ իբր օրհնության գիր: Այս թուղթը Աստրախանից ետ է բերում Միրոնը և տալիս Օրուն և Մինաս վարդապետին»²¹:

«Հաստատելու համար, որ Միրոնի առաքելությունը կատարելապես կատարված է, մեր կեղծարարները կամա ակամա ձեռք զարկեցին Մինաս աթոռակալի մը թուղթը կեղծելու: Կեղծիքը բնական է քիչ շատ ապահով էր, քանի որ թուղթը կաթողիկոսից չէր և կարելի էր նույնիսկ հետո մեղ մնալու ատեն՝ ասել, թե էջմիածնից այդ թուղթը գրողը, անհավատների վախից, ինքնիրեն ծածկում է»²²:

Քյուրդյանը անդրադառնում է Օրու նյութական վիճակին Ռուսաստանում: Մի նամակի ինչ-որ մի տեղեկության վրա հիմնվելով՝ նա հավանական է համարում, որ Օրին Մոսկվայում զբաղված է եղել ֆրանսիական խմիչքների, քաղցրավենիքների պատրաստմամբ: Հեղինակի կարծիքով՝ ռոճիկի համար էր, որ Օրին 1703թ.-ից գնդապետական աստիճան էր ուզում Գոլովինին ուղարկած նամակներում²³:

Փորձելով Օրուն ներկայացնել որպես հասարակ խաբեբա, ով խաբում է

բոլորին անխտիր, նա բերում է նաև Մինաս վարդապետի նամակագրական դժգոհությունները Օրուց՝ որպես ապացույց, որ նույնիսկ Օրու ամենամոտիկ մարդիկ բողոքում են Օրու գործունեությունից:

Հիմնվելով Օրու և Մինաս վարդապետի նամակագրության վրա, երբ Օրին մեկնել էր Եվրոպա պարսկական դեսպանության նախապատրաստական աշխատանքներ տանելու համար՝ Քյուրդյանը գրում է. «Որոշ է թե վարդապետն անգամ Օրին խաբուիլ կակնկալէ, ինքն ալ կը վախճայ անոր խաբէութենէն, որուն այնքան լաւ ծանօթ է, այնքան առիթներով տեսած է, եւ զարմանքով նկատած անոր յաջողիլը»²⁴:

Ըստ Քյուրդյանի՝ Օրին միշտ նույն ձևն ուներ իրեն արդարացնելու, որ իբր շատ թշնամիներ ունի, որոնք բարբաջանքներ են տարածում, որ չարություն են ցանկանում իրեն: Սա, ըստ Քյուրդյանի, բնական է՝ վտանգը չեզոքացնելու համար²⁵:

Օրին պարսից շահին ուղղված նամակներ ստանալու համար մեկնել էր Եվրոպա:

Նա հանձնարարական է ստանում Հռոմի պապից Դյուսելդորֆում²⁶: Քյուրդյանն առաջինն է այդ վավերաթուղթը ներկայացնում և նշում, որ Կղեմես պապը Օրուն դեսպան չի նշանակել, այլ պարզապես հանձնարարական է տվել նրան²⁷:

Հետագայում Պարսկաստանում Օրին իրեն որպես պապական դեսպան էր ներկայացնում, և հենց դրա դեմ էր ուղղված Քյուրդյանի գրածը:

Քյուրդյանը բերում է նաև ցարի նամակը՝ ուղղված շահին, և գրում, որ այդտեղ ևս դեսպանություն միայն Օրին կարող էր տեսնել²⁸:

Երկար նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո, ի վերջո,

²¹Յ. Քիլիստեան, նույն տեղում, էջ 107:

²²Նույն տեղում, էջ 108:

²³Տես Յ. Քիլիստեան, նշվ. աշխ., էջ 110-114:

²⁴Յ. Քիլիստեան, նույն տեղում, էջ 131-132:

²⁵Տես Յ. Քիլիստեան, նշվ. աշխ., էջ 147:

²⁶Ըստ Քյուրդյանի՝ Կղեմես պապը չէր թողել, որ Օրին գնա Հռոմ և այլ ճանապարհով էր հանձնել հանձնարարականը Օրուն:

²⁷Տես Յ. Քիլիստեան, նշվ. աշխ., էջ 151-153:

²⁸Տես նշվ. աշխ., էջ 160-161:

պարսկական դեսպանության գաղափարն իրագործվում է:

Քյուրդյանը ներկայացնում է Պարսկաստան մեկնող շքախումբը և գրում, որ այն չուներ զրազետ և բանհմաց անդամներ: Ըստ Քյուրդյանի՝ ցուցադրման համար էր դա՝ այդ խառնակույտը: Նրանց մեջ չկային աշխարհագիրներ, տնտեսագետներ, բուսաբաններ, որոնք կարողանային երկիրը քննել, նկարագրել, գիտական կերպով արժեքավորել: Օրիի պնդումները, թե տեղեկությունների համար է գնում Պարսկաստան, չի հաստատվում: Այս խառնուրդ անկրկնելի էր դարձնելու ձեռնարկը: Օրիի համար կարևորը իր փառասիրությունն էր, քան հայկական դատը, նույնիսկ ռուսական²⁹:

Քյուրդյանը գրում է. «Ուրեմն՝ Օրիի և իր շքախմբի խեղկատակությունը դեպի Պարսկաստան մեկնելուն ցարական օգնություն ուներ, սակայն Պարսկաստանից վերադարձին այլևս ոչ մի արժեք չէր ներկայացնում»³⁰:

«Օրիի անարժեք էր այլևս»³¹:

Քյուրդյանը շատ մանրամասն անդրադառնում է Օրու գործունեությանը պարսկական դեսպանության ժամանակահատվածում: Նրա մեջ տեսնում է առևտրականի, անձնական խնդիրներ հետապնդողի, բայց ոչ երբեք Հայաստանի մասին տեղեկություններ հավաքողի, Հայաստանի ազատարարի:

Հայր Ուկեռնի նամակը տարակույս չի թողնում Օրու վտանգավոր նկրտումների և ցուցամոլության մասին պարսկական ուղևորության ժամանակ: Ուստի պապական դիվանագիտությունը ձեռնարկեց Օրիին չեզոքացնելու քայլեր և նամակ գրեց պապի անունից շահին³²:

Պարսկաստանում Օրու գործունե-

ությունը լուսաբանելու համար Քյուրդյանը հենվում է նաև լեհ հոգևորական հայր Կրուզինսկու տեղեկությունների վրա: Հիմնվելով դրանց վրա՝ Քյուրդյանը գրում է, որ Օրին ավելի է խորացնում պարսկահայության մեջ բաժանումը³³:

Բայց «Օրին չկարողացավ խաբել պապական քարոզիչներին և կաթողիկոս Ալեքսանդր Ջուլայեցուն և, ի վերջո, բացահայտ հակակաթոլիկ ընթացք բռնեց»³⁴:

Կաթողիկոս Ալեքսանդր Ջուլայեցին 1709թ.-ին նամակ էր գրել Հռոմի պապին, որտեղ զանգատվում էր Օրիից: Ի պատասխան՝ ստացել էր պապից նամակ 1710թ.-ին: Այն բարենպաստ էր Օրու համար: Սակայն Քյուրդյանը դրան էլ չի հավատում. կասկած է հայտնում, որ դա էլ կարող էր կեղծվել Օրու կողմից, մանավանդ որ այդ նամակի բնագիրը չկա³⁵:

Քյուրդյանն այնպես է ներկայացնում, որ բոլորն անխտիր դժգոհ էին Օրու գործունեությունից Պարսկաստանում:

«Ստիպված պետք է մտածենք, թե Օրիի դեմ ցարի դժգոհությունը կարող էր միայն թույլատրել, որ Աստրախանի կառավարիչը բռնագրավեր Օրիի բերած ձիերն ու ապրանքը»³⁶:

Նաև նահանգապետ Ապրաքսինի 1711թ.-ի նոյեմբերի 7-ի նամակն է քննում Քյուրդյանը, ուր ամբաստանություններ կային Օրու մասին, և Ապրաքսինն իր բռնած դիրքն էր պատճառաբանում: Քյուրդյանը գտնում է, որ դրա պատճառը Օրու գործունեությունն է Պարսկաստանում և այն, որ Պետրոսն այլևս չէր հովանավորում Օրուն³⁷:

Անդրադառնալով Օրիի կրթությանը, հմտություններին՝ այդ ասպարեզներում ևս Քյուրդյանը Օրիի մասին գովեստի խոսքեր չի ասում: Ըստ Քյուրդյանի՝ Օրին չունեի դիվանագիտական հմտություններ³⁸:

²⁹Տես՝ նշվ. աշխ., էջ 166-168:

³⁰**Յ. Քիիրտեան**, նույն տեղում, էջ 168:

³¹Նույն տեղում, էջ 168:

³²Տես՝ **Յ. Քիիրտեան**, նշվ. աշխ., էջ 173-174:

³³Տես՝ նշվ. աշխ., էջ 176-178:

³⁴**Յ. Քիիրտեան**, Կղեմես ԺԱ պապը եի Իսրայել Օրի, «Անահիտ», 1947, հմ 2, էջ 32:

³⁵Տես՝ **Յ. Քիիրտեան**, նշվ. աշխ., էջ 181-184:

³⁶**Յ. Քիիրտեան**, նույն տեղում, էջ 190:

³⁷Տես՝ **Յ. Քիիրտեան**, նշվ. աշխ., էջ 190-191:

³⁸Տես՝ նշվ. աշխ., էջ 76-77:

Պարսկաստանից վերադարձին Օրու մահվան հանգամանքները ևս Քյուրդյանը փորձում է կապել Օրու՝ Պարսկաստանում ծավալած գործունեության հետ, նրա տարատեսակ պարտքերի հետ, թեև այս անգամ առավել կոնկրետ բան չի ասում:

Այսպիսով, գրքի ընթերցումից պարզ է դառնում, որ Քյուրդյանի համար Օրին պարզապես հասարակ խաբեբա և փառասեր արկածախնդրի մեկն է ու հայ ազատագրական պայքարի հետ որևէ առնչություն չունի:

Պետք է նշել, որ ավելի վաղ գրված մի հոդվածում՝ 1947թ.-ին, Քյուրդյանն ավելի մեղմ էր արտահայտվել Օրու մասին:

«Իրավունք ունեն եզրակացնելու արդարապես, որ Օրին հայ ազգային որևէ մարմին չներկայացնող մի արկածախնդիր էր, «հայրենասեր», սակայն արկածախնդիր, որ չի քաշվում այսպանելի միջոցներով ինչ-որ անորոշ «հայրենասիրական» մտադրություններ հետապնդել: Իր նպատակը, զովելի կամ ոչ, անձնական հղացում է, զուրկ ազգին կամ զոմե մի կարևոր մասի հեղինակությունը վայելելու»³⁹:

Վերոնշյալ պարբերությունից երևում է, որ Քյուրդյանը այդ հոդվածում լիովին չի բացառում Օրու կողմից հայրենասիրական ձգտումներ ունենալը:

**ИСРАЭЛЬ ОРИ, ОПИСАННЫЙ
АРУТЮНОМ КЮРДЯНОМ**

ГУРГЕН МЕДЖЛУМЯН

Студент Государственной академии
управления РА

Резюме

После выхода в свет известного произведения Арутюна Кюрдяна не было обращено должного внимания на озвучаемые в нем вопросы. Поэтому остались открытыми ответы на предложенные вопросы (можно считать и так). В армянской истории сведения об Ори считались бесспорными и никогда не оспаривались. В данной статье озвучивается мнение Кюрдяна об Ори, о разных этапах его жизни.

Смысл этой статьи в том, чтобы обратить внимание на мало обсужденные (точнее сказать необсужденные), но интересные и облаченные завесой тайны (в том смысле, что Кюрдян внес интригу в череду событий, которые казались вполне обычными) события. Статья открывает дверь для оценки роли Ори в череде этих событий.

HARUTYUN KYURDIAN'S DESCRIPTION OF ISRAEL ORI

GOURGEN MEJLUMYAN

Student of RA State Management Academy

Summary

After publishing Haroutiun Kurdyan's famous work, proper attention has not paid to the issues included in it. Therefore, it is necessary to answer all those questions. In Armenian history the opinions about Ori have always been considered indisputable.

In the article there is a short description of the author's opinion, the conclusions about different stages of his life, etc.

The aim of the article is to pay attention to less-discussed (in fact, not discussed at all) but interesting events which contain some mystery (as Kyurdian brought some intrigue into events which seemed simple). The article is a way to shed further light on the evaluation of Ori's role.

³⁹Յ. Քիլիստեան, Կղեմես ժԱ պապը եի Իսրայէլ Օրի, «Անահիտ», 1947, հմ 2, էջ 34:

**ՅՈՒՐԻԿ ՎԱՋՎԵՆԻ
ՂՈՒՅԱՆ**

*Պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱՅՍԵՂԱԿԱՆ
ԽՈՌՎԱՐԱՐՆԵՐԻ
ԽԱՂԱԴՆՅՈՒՄԸ
(1920թ.)**

Հայաստանի Հանրապետությունը 1920 թվական մտավ ունենալով լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ: Ներպետական կյանքի կարևոր հարցերից մեկը շարունակում էր մնալ հանրապետության մահմեդական շրջանների խաղաղեցման խնդիրը, որի կարգավորումը դարձավ կառավարության առաջնահերթություններից մեկը:

ՀՀ օրինական իշխանությունը մերժող մահմեդական շրջանների խաղաղեցումը շարունակվեց նաև 1920 թվականին: Հակապետական դիրքորոշմամբ աչքի էր ընկնում Կարսի շրջանը: Տեղի մահմեդականները, անմիջական կապ ունենալով Թուրքիայի հետ, այնտեղից համապատասխան միջոցներ ու զենք ստանալով՝ հրաժարվում էին ընդունել ՀՀ իշխանությունը: Թուրքերի կողմից հրահրվող Ադրբեջանը ոտքի էր հանում Կարսի շրջանի մահմեդական բնակչությանը՝ հարկադրելով հայկական ջոկատներին նրանց նկատմամբ կիրառել ճնշումներ:¹ Մահմեդականների այն մասը, որը թուրքերի ու ադրբեջանցիների դրդումով դեմ էր հանդես գալիս հայկական իշխանությանը, 1920թ. հունվարի 12-ին Ջարուշատի, Աղբաբայի և Չըլդըրի ներկայացուցիչների ժողով է գումարում, որտեղ որոշում է դադարեցնել հայերի հետ առևտրական և ամեն տեսակի հարաբերություններ, արտաքսել հայկական իշ-

խանությունը և կազմել տեղական իշխանություն՝ Ադրբեջանից ստացված դրամով: Ընդունվում են նաև այլ որոշումներ: Մեծ գումարներով Ջարուշատ եկած ադրբեջանցի սպաների ջանքերով սկսված հակահայ հարձակումների արդյունքում Ջարուշատից և մյուս շրջաններից դուրս են քշում հայ պաշտոնյաներին ու միլիցիային: Փաստորեն, Ջարուշատը, Աղբաբան և Չըլդըրը ապստամբում են երկրի օրինական իշխանությունների դեմ: ՀՀ կառավարությունը, բազմաթիվ խաղաղարար միջոցներ ձեռնարկելուց հետո, սպառած համարելով բոլոր միջոցները, օրինականությունը վերականգնելու, դիմում է անհրաժեշտ գործողությունների: Կառավարությունը 1920թ. հունվարին հակապետական դրսևորումներից վերջ տալու նպատակով նախ իրականացնում է բնակչության զինաթափում: Որոշ շրջաններում այն կատարվում է զենքի միջոցով: Ապստամբություն կազմակերպած անձինք ենթարկվում են պատասխանատվության, իսկ նրանց մի մասը փախչում է Վրաստան: Այսպիսով, ՀՀ կառավարությանը հաջողվում է վերականգնել օրինականությունը Կարսի մարզում և տարածաշրջանում: Կառավարության ձեռնարկած միջոցառումների դեպքերի առիթով մեծ աղմուկ բարձրացրեց Ադրբեջանը, որի պաշտոնաթերթ «Ազերբայջանը», անդրադառնալով Կարսի դեպքերին, բողոքում էր

¹Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 391:

մահմեդականների նկատմամբ իրականացված բռնությունների դեմ և դիմում եվրոպային՝ ուշադրություն դարձնելու «Անդրկովկասի այդ փոքր մութ անկյունի վրա»:²

Հայաստանի Հանրապետությունում մահմեդական փոքրամասնությունների հակապետական ելույթների թիկունքում կանգնած էին Թուրքիան ու Ադրբեջանը, որի մասին տեղյակ էին նաև դաշնակից երկրների ներկայացուցիչները: Խնդրի հրատապությունից ելնելով՝ ՀՀ կառավարությունը այն մշտապես պահում էր ուշադրության կենտրոնում: Այսպես, 1920թ. հունվարի 30-ին ՀՀ կառավարության արտահերթ նիստը, որին ներկա էր նաև Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսար Ուորդրոպը, անդրադարձավ նաև Հայաստանում բնակվող մահմեդականների հակապետական, անօրինական ու քայքայիչ գործունեությանը: Մասնավորապես նշվեց, որ անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել Կարսում, Ջանգիբասարում և Հայաստանի մյուս մահմեդական շրջաններում պանիսլամական և հակապետական քարոզչությունը դադարեցնելու համար: Նշվեց, որ այդ ագիտացիային մասնակցում են ինչպես թուրքերը, այնպես էլ ադրբեջանցիները³ (հատկապես վերջին ժամանակները): Կարսի խռովության հետ կապված՝ Ադրբեջանի կառավարությունը ՀՀ ԱԳՆ-ին հղած բողոքի նոտայում հայկական կողմին մեղադրեց հունվարի վերջերին Կարսի շրջանում մի շարք մահմեդական գյուղերի ավերման մեջ:⁴ ՀՀ կառավարության պատասխանում նշվում էր, որ դա իր ներքին գործն է⁵ և հետևանք է մահմեդականների հակապետական դիր-

քորոշման և զենքերը հանձնել հրաժարվելու: Կարսում ՀՀ գործողությունների վերաբերյալ հարց բարձրացվեց Ադրբեջանի պառլամենտի 1920թ. մարտի 8-ի նիստի ընթացքում, որտեղ նշվեց, թե իբր «ՀՀ-ը զենքը հավաքելու պատրվակով կազմակերպել է խաղաղ մահմեդական բնակչության կոտորած»:⁶ Վարչապետ Ուսուբբեկովը, պատասխանելով պատգամավորներին ու բողոքելով ՀՀ դեմ, կոչով դիմեց մեծ տերություններին՝ ՀՀ դեմ միջոցներ ձեռնարկել և պաշտպանել Ադրբեջանին հայերի «ոտնձգություններից»:⁷ Հակահայկական ելույթները զսպելու առաջարկով հանդես եկան խորհրդարանի հայ պատգամավորները, որն առաջ բերեց մեծ աղմուկ: Անգամ առաջարկություն արվեց խորհրդարանից հեռացնել դաշնակցական պատգամավորներին: Սակայն գտնվեցին պատգամավորներ, որոնք կատարվածի մեջ մեղադրեցին Ադրբեջանի կառավարությանը ու նրա վրա դրեցին դեպքերի պատասխանատվությունը: Ադրբեջանի իսկական էությունը բացահայտեցին խորհրդարանի սոցիալիստ (ընկերավարական) պատգամավորները, որոնք կառավարությանը մեղադրեցին Կարսի դեպքերի պատճառ հանդիսանալու, հրահրելու մեջ. «Եթե կառավարությունը անմեղ է, այն ժամանակ ինչացո՞ւ են այն միլիոնները, որոնք ուղարկվում են Հայաստան»:⁸ Այն փաստը, որ Կարսի դեպքերի կազմակերպիչը հանդիսանում էր Ադրբեջանը, հաստատեց նաև 1920թ. փետրվարի 17-ին Կարսում հրավիրված քուրդ և թուրք բնակչության ներկայացուցիչների արտակարգ նիստը, որտեղ շեշտվեց, որ «պատահած ցավալի

²ՀԱԱ, 200, ց. 1, գ. 486, մաս 1, ք. 20, ք. 113:

³Նույն տեղը, ք. 278, ց. 1, գ. 25, ք. 2:

⁴«Մշակ», Թիֆլիս, 1920, 17 փետրվարի:

⁵ՀԱԱ, ք. 200, ց. 1, գ. 427, մաս 1, ք. 81:

⁶«Слово», Тифлис, 1920, 12 марта.

⁷Նույն տեղում:

⁸Վրացյան Ա., նշվ. աշխ.-ը, էջ 392:

դեպքերի ամբողջ պատասխանատվությունը ընկնում է եկվոր խռովարարների վրա»:⁹ Նիստի ներկայացուցիչները երկրի օրինական իշխանությանը խոստացան լինել օրինապահ: Նման որոշումներ ու դիմումներ եղան նաև Չըլդրի և Արդահանի շրջանի մահմեդական փոքրամասնության ներկայացուցիչներից, որոնք նույնպես բողոքում էին Ադրբեջանի գործակալների քայքայիչ գործողությունների դեմ: Հունվարյան խռովությունից հետո էլ իրավիճակը Կարսի շրջանում շարունակեց մնալ լարված: Կարսի, Աղբաբայի, Ջարիշատի, Չըլդրի շրջաններում Ադրբեջանի գործակալները դրամի և քարոզների միջոցով շարունակում էին մահմեդական փոքրամասնությանը գրգռել օրինական իշխանության դեմ: Նպատակը Հայաստանի Հանրապետության դեմ ապստամբեցնելն էր:¹⁰ Իրավիճակը Կարսում կրկին սրվեց 1920 թվականի գարնանը: Կարսի խռովությունները զուգահեռաբար դարաբաղյան իրադարձությունների հետ, երբ Ադրբեջանը իր վերջին գրոհն էր ձեռնարկել արցախահայությանը ծնկի բերելու համար: Ադրբեջանում հակահայկական հիստերիկ ելույթներն ուժեղացնելու նպատակով սկսվեցին կեղծ ու չափազանցեցված լուրեր տարածել Կարսում իրականացվող խաղաղարար գործողությունների վերաբերյալ: Ադրբեջանական մամուլը ապշեցուցիչ տվյալներ էր հայտնում Կարսի մարզի Շորագյալի, Ջարուշատի և Չըլդրի շրջաններում հայկական գործերի գործողությունների մասին:¹¹ Ադրբեջանի ԱԳՆ-ը հանդես եկավ

նաև հայտարարությամբ՝ կապված հայկական ուժերի կողմից Կարսի մարզում իրականացրած «դաժանությունների մասին»:¹² Ըստ այդ հայտարարության՝ մոտ 30.000 մուսուլմաններ, կոտորածներից փրկվելով, ապաստանել են Վրաստանում:¹³ Հայաստանը հայտարարեց, որ Ադրբեջանի կողմից ներկայացված տվյալները հանդիսանում են սուտ և մտածածին՝ նպատակ ունենալով Հայաստանին վարկաբեկելու:¹⁴ Ադրբեջանը փորձում էր ժխտել իր մասնակցությունը ՀՀ ներսում կազմակերպված հակապետական ելույթներին: Դրան հակառակ՝ Չըլդրի շրջանի բնակչության ներկայացուցիչների ստո-շրագրությամբ 1920թ. մարտի 15-ին ՀՀ վարչապետին ուղղված հեռագրում նշվում էր, որ շրջանի հակապետական ելույթները պայմանավորված են եղել դրսից եկած գործակալների գործունեությամբ:¹⁵ Ադրբեջանի գործակալների դեմ 1920թ. ապրիլի 25-ին բողոքի դիմում հղեցին նաև Արդահանի մահմեդական փոքրամասնության ներկայացուցիչները: Կարսի խռովության վերաբերյալ մեծ աղմուկ բարձրացրեց նաև անդրկովկասյան կոնֆերանսին մասնակցող ադրբեջանական պատվիրակությունը, որը երկու հեռագիր էր ստացել Կարսի մարզից և դրանք ներկայացրեց կոնֆերանսին: Երևան-Կարս հայրենակցական միության վարչության կողմից ուղարկված հեռագրերից մեկը հասցեագրված էր Ադրբեջանի պատվիրակության անդամ Աղակին, մյուսը՝ ԱԳ նախարար Խան-Խոյսկուն: Առաջին հեռա-

⁹Նույն տեղում:

¹⁰«Աշխատավոր», Թիֆլիս, 1920, 14 մարտի:

¹¹ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, մաս 2, թ. 104:

¹²Նույն տեղում, թ. 106:

¹³ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.411, մաս 2, թ. 106:

¹⁴Նույն տեղում:

¹⁵Նույն տեղում, գ. 486, մաս 1, թ. 122:

գրում խոսվում էր «Կարսի շրջանում մահմեդականների նկատմամբ շարունակվող ծաղրուծանակի և ձերբակալությունների մասին»:¹⁶ Երկրորդ ներկայացնում էր Չըլդրի շրջանի իրավիճակի մասին:¹⁷ Այս կապակցությամբ ՀՀ ԱԳՆ հայտարարության մեջ ասվում էր, որ Կարսի մարզում իշխում է լրիվ խաղաղություն և կառավարության անունով ստացվել են հեռագրեր տարբեր շրջաններից, ուր մահմեդական բնակչությունը «իր երախտագիտությունն էր արտահայտում դրսի ազիտատորներից իրենց ազատելու համար»:¹⁸

ՀՀ վարչապետի անունով հեռագրեր էին ստացվում նաև Ջանգիբասարի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներից: Նրանք կառավարությանը խնդրում էին իրենց ազատել թուրք-ադրբեջանական գործակալներից, որոնք, իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, բնակչությանը ստիպում էին զենք ձեռք բերել և կանգնել դիրքերում:¹⁹ Նմանատիպ բովանդակությամբ հեռագիր էին ուղարկել նաև Ուլուխանլուի Շորքենդ գյուղի բնակիչները:²⁰ Հարցի կապակցությամբ ՀՀ վարչապետը հարց բարձրացրեց նաև անգլիական հրամանատարության առջև խնդրելով միջոցներ ձեռնարկել թուրք-ադրբեջանական լրտեսներին Հայաստանից հեռացնելու համար: Տալեֆորդը խոստացավ Հասկելի հետ միասին քննարկել հայկական կողմի խնդրանքը:²¹

1920թ. մարտի 19-ին մահմեդական փոքրամասնությունները թուրքական սպանների ղեկավարությամբ ապստամբեցին Բեյլուկ-Վեդիում:

Ապստամբերը սկզբում հաջողության են հասնում: Կառավարական ուժերը հարկադրված են լինում նահանջել՝ տալով զոհեր ու վիրավորներ, սակայն, վերադասավորելով ուժերը, կարողանում են ապստամբներին ետ շարտել: Նույն օրը ետ է մղվում նաև Բոզ-Բուռունի պետական ուժերի վրա ապստամբների կատարած հարձակումը, որով Ալի Մահմեդ գյուղի մոտ ապստամբները փորձում էին անցնել Արաքս գետը: Վեդի-Բասարի մահմեդականների ու հայկական ուժերի միջև բախման հարցը քննարկման առարկա դարձավ Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Սարտիրոս Հարությունյանի ու Ադրբեջանի ԱԳ նախարար Խան-Խոյսկու մարտի 25-ի հանդիպման ժամանակ: Թեև հանդիպման հիմնական առիթը Ղարաբաղում ընթացող դեպքերն էին, սակայն, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ եղավ նաև Վեդի-Բասարի խռովություններին: Խան-Խոյսկին ՀՀ-ին մեղադրեց Կարսի խռովության և Վեդի Բասարի համար՝ այդ շրջանները համարելով Ադրբեջանական: «Այո, մենք էլ այդ շրջանները համարում ենք Ադրբեջանինը և ինչ դուրս կգա, եթե մենք էլ այն բոլոր տեղերը, ուր մեզ չեն ուզում ճանաչել, այդպիսի միջոցների դիմենք»²⁴, - գրույցի ընթացքում ասում է Խան Խոյսկին: Մ. Հարությունյանի այն հարցին, թե՞ ի՞նչ Կարսի շրջանը, նա պատասխանում է «Կարսն էլ չի ճանաչում Հայաստանի կառավարությունը»:²⁵ Հայաստանի Հանրապետության հանդեպ հակապետական ընդգծված դիրքորոշում ուներ նաև Ջանգիբասարի շրջանի մահմեդական փոք-

¹⁶Նույն տեղում, գ. 411, մաս 2, թ. 94:
¹⁷Նույն տեղում:
¹⁸Նույն տեղում, թ. 104:
¹⁹Նույն տեղում:
²⁰Նույն տեղում:
²¹ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 461, թ. 4:
²⁴ՀԱԱ, ֆ. 200, ց.2, գ. 79, թ. 5-6:
²⁵Նույն տեղում:

րամասնությունը: Երևանից ընդամենը երկու կիլոմետրի վրա ընկած Զանգիբասարի շրջանում կենտրոնացած էր 30.000-ից ավելի մահմեդական բնակչություն: Այն Ղամարլուն բաժանում էր Էջմիածնից ու Սուրմալուից և վտանգավոր դարձնում Սուրմալու-Էջմիածին, Ղամարլու-Երևան ու Էջմիածին-Երևան ճանապարհները:²⁶ Հայաստանի կառավարությունը վաղուց տեղեկություններ ուներ, որ Զանգիբասարի շրջանի թաթարներին կազմակերպում և վարժեցնում են թուրք սպաները: Բնակչության մեջ կատարվում էր բռնի գորահավաք, որի նպատակը հայկական գորհամասերի վրա հարձակումներ կատարելն էր:²⁷ ՀՀ կառավարությունը, երկաթուղու գիծը գրահապատ գնացքով ապահովելով, մայրաքաղաքն ու հայկական շրջանները հարձակումներից պաշտպանում էր զորքի ու ոստիկանության միջոցով:²⁸

Հայաստանի կառավարությունը մինչև 1920թ. գարունը ապստամբ շրջանների նկատմամբ հանդուրժողական քաղաքականություն էր վարում, որն օրեցօր դժգոհություն էր առաջ բերում ինչպես ժողովրդի, այնպես էլ իշխող կուսակցության՝ ՀՅԴ շարքերում: Դաշնակցության բյուրոյում մի ուղղություն կար, որը, հենված ժողովրդի զանգվածների վրա, առաջարկում էր դիմել երկրում կարգ ու կանոն հաստատելու վճռական գործողությունների: Նրանց կարծիքով հանրապետության տարածքում ապրող բոլոր քաղաքացիները պետք է ունենան ոչ միայն հավասար իրավունքներ, այլ նաև նրա հանդեպ հավասար պարտավորություններ: Նկատենք, որ մահմեդականների համար՝ քաղաքական պատճառներով զինվորական ծառայու-

յունը պարտադիր չէր, ինչպես պարտադիր չէր նաև մախկին ռուսական կարգերի ժամանակ: Փաստորեն, հայկական բանակում մուսուլմաններ չկային: Այս առումով ուշագրավ է ՆԳ նախարարի 1919թ. փետրվարի 2-ի պաշտոնագիրը՝ ուղղված գավառային կոմիսարներին և միլիցիապետներին, որում նախարարը հատուկ ընդգծում էր, որ «Զինվորական նախարարության հաղորդագրության համաձայն բոլոր ազգությունները, որոնք ապրում են Հայաստանի տարածքում՝ ենթակա են կատարելու իրենց զինապարտային պարտականությունները հայկական բանակի շարքերում, բացառությամբ, իհարկե, մուսուլմանների և ռուսների: Վերապահում էր արվում այն մասին, որ վերջիններս ժամանակավորապես են ազատված՝ մինչև Հայաստանի և Ռուսաստանի միջև փոխհարաբերությունների պարզաբանումը և հստակեցումը»:²⁹

Թաթարները, որոնք ՀՀ ազգաբնակչության մեջ զգալի տոկոս էին կազմում, բացարձակապես չէին կատարում իրենց քաղաքացիական պարտականությունները՝ չվճարելով տուրք և չտալով զորք, ինչպես նաև հրաժարվում էին Հայաստանի իշխանությունը ճանաչելուց: Այդ ներքին անորոշ վիճակը Հայաստանում շարունակվեց մինչև 1920թ. մայիսյան խռովության օրերը, երբ Բյուրո-Կառավարության ստեղծումով հիմք դրվեց Դաշնակցության դիկտատուրային: Կառավարությունն ապստամբությունը ճնշելով, հենվելով ժողովրդի և զորքի մեջ ստեղծված նպաստավոր հոգեբանական վիճակի վրա, ձեռնամուխ եղավ մուսուլմանական ապստամբ շրջանների խաղաղեցմանը:³⁰

²⁶Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Երևան, 1991, էջ 326:

²⁷«Յառաջ», 1920, 23 մարտի:

²⁸Ռուբեն, նշվ. աշխ-ը, էջ 326:

²⁹Վիրաբյան Վ., Հայաստանի առաջին հանրապետության Միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918-1920թթ.), Երևան, 2003, էջ 70:

³⁰ՎԷՄ, 1936, թիվ 5, էջ 58:

Ապստամբ շրջաններից անհանգիստ էր հատկապես Ջանգիբասարը: ՀՀ գոյության հենց սկզբից Ջանգիբասարի շրջանի մահմեդականությունը թշնամական դիրք էր բռնել դեպի Հայոց պետականությունը: Ենթարկվելով թուրք և ադրբեջանցի գործակալների սադրանքներին՝ Ջանգիբասարը ամեն անգամ, երբ Հայաստանը դժվար օրեր էր ապրում, առաջ էր բերում խռովություններ: Հարձակումներ էր կատարում երկաթուղու, զորքի և հարևան հայկական գյուղերի վրա: Երևանում գործող Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչները ըմբոստ Ջանգիբասարին դրամ ու զենք էին մատակարարում, նրան գրգռում հայերի դեմ: Հայաստանի մայրաքաղաքի քթի տակ 15-ից ավելի թուրք գյուղեր «անկախ» վիճակի մեջ էին, չէին ընդունում Հայաստանի իշխանությունը և ձգտում էին Ջանգիբասարը միացնել Ադրբեջանին:³¹ «Ստեղծվել էր մի դրություն, երբ զնացքով երթևեկելն էլ էր վտանգավոր, էլ չենք խոսում անհատ մարդկանց այդ գյուղերով անցնելու մասին: Ոչ մի պաշտոնյա չէր համարձակվում մուտք գործել այդ շրջան, իսկ կառավարությունը երկար ժամանակ հանդուրժում էր դա³²», - գրում է պրոֆեսոր Է. Ջոհրաբյանը: Կառավարության բոլոր խաղաղ քայլերը հանդիպում էին անհաջողության: Տեղի մահմեդականները, որոնք մեծ գործողությունների էին պատրաստվում, 1920թ. հունիսի 16-ին և 17-ին, կրակ բացելով հայկական զինվորների վրա, մի քանիսին սպանում, մի քանիսին էլ վիրավորում են:³³ Հայաստանի կառավարությունը դիմեց խռովարարներին՝ առաջարկելով զինաթափվել և ճանաչել ՀՀ իշխանությունը: Քննության առնելով վերջնագիրը՝ ապստամբները որոշում են չընդունել առաջարկը՝ մինևույն ժամանակ

խրամատներից ուժեղ կրակ են բացելով հայկական զորքի վրա: Կառավարության առաջարկը ընդունում են միայն Ուլուխանլու գյուղի բնակիչները:

Սպառված տեսնելով խռովությունը՝ Ջանգիբասարի հարցը, խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր միջոցները՝ կառավարական ուժերը դիմում են ակտիվ գործողությունների: Հունիսի 18-ին միաժամանակ Երևանի, Էջմիածնի և Էջմիածնի կայարանի կողմից Ջանգիբասարի խռովարարների վրա ընդհանուր գործողություն ձեռնարկելով՝ կառավարական ուժերը մեկ օրում կարգ ու կանոն են հաստատում Ջանգիբասարի գյուղերում: Ապստամբ ուժերը հեռանում են Արաքսի մյուս ափը:

Ջանգիբասարի ապստամբության կապակցությամբ կառավարությունը հանդես է գալիս հատուկ հաղորդագրությամբ՝ տալով ստեղծված իրավիճակի և հայկական զորքերի ձեռնարկած գործողությունների մասին:

Ջանգիբասարի խռովության կապակցությամբ աղմուկ բարձրացրեց արդեն խորհրդային դարձած Ադրբեջանի կառավարությունը, որի անունից ԱԳ ժողովրդական կոմիսար Հուսեյնովը բողոքի նոտա հղեց ՀՀ ԱԳՆ-ին՝ հայկական կողմին մեղադրելով մուսուլման գյուղացիներից Հայաստանը մաքրագործելու մեջ: Այդ առթիվ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը հայտարարեց, որ «Հայկական զորքերը Ջանգիբասարը մաքրեցին, ոչ թե «մուսուլման գյուղերից», ինչպես այդ մասին հաղորդում է պ. Հուսեյնովը, այլ Հայաստանի իշխանությունը ճանաչել չուզող ապստամբներից, որոնք գտնվում էին նրա մայրաքաղաքից 7 վերստի վրա»:³⁴

³¹«Յառաջ», 1920, 24 հունիսի:
³²Ջոհրաբյան Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 86:
³³ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, մաս 2, ք. 338:
³⁴Նույն տեղում, 22 հուլիսի:

Խիստ անհանգիստ վիճակ էր Բեյուք-Վեդիում, որը վերջին մեկ տարվա ընթացքում երկյուղի մեջ էր պահում Գառնի-Բասարի, Ղանարլուի և Նոր-Բայազետի ու Դարալագետազի շրջանների հայ բնակչությանը:³⁵ 1920թ. հուլիսի 10-ից կառավարական ուժերը, երկու օրվա ընթացքում տալով 250 զոհ, զորավար Շելկովնիկովի հրամանատարությամբ աստամբներից գրավում են Բեյուք-Վեդին: Ապստամբների շարքերում մոտ 3000 կռվող կար, 3 թնդանոթ, 9 զնդացիր: Ընդհանուր հրամանատարն էր թուրք սպա Մուստաֆա բեյը:

Երևանի համար գլխացավանք հանդիսացող գլխավոր ապստամբ գյուղը ընդմիջտ խաղաղվեց, որի կապակցությամբ զորավար Շելկովնիկովը կառավարության անունից հայկական զորքերին շնորհավորեց ցուցաբերած հայրենասիրության համար, իսկ «Յառաջ»-ի խմբագրականը գրեց. «Չկա Վեդին: Անպատիժ թողնել Վեդիի ոճրագործներին այդ կնշանակեր գիտակցաբար մահացու հարված տալ մեր անկախ կյանքի գոյության: Վեդին 2 օր տևող կռիվներից հետո հարկադրված եղավ լռել և լռել ընդմիջտ»:³⁶ Շարունակելով հարձակումը՝ հայկական ուժերը հուլիսի 14-ին գրավում են մահ Գայլի Դրունքը,³⁷ որը սահմանաբաժան էր հանդիսանում հին Երևանի գավառի և Շարուրի միջև: Նույն օրը գրավվում է մահ Շարուրի կենտրոն Բաշ-Նորաշենը իր շրջակա գյուղերով: Նախիջևանի ազատագրման հարցն այլևս դժվարություն չէր ներկայացնում, սակայն մի շարք հանգամանքների պատճառով առաջխաղացումը դադարեցվում է: Այս հարցում գլխավոր արգելակող հանդիսացան խորհրդային զորքերը:

Այսպիսով, Հայաստանի տարած-

քում ապրող մահմեդական փոքրամասնությունը ՀՀ կառավարությանը մշտապես պահում էր լարված վիճակի մեջ: Ս. Վրացյանի վկայությամբ. «այս վիճակը ոչ միայն վտանգավոր էր Հայաստանի քաղաքական գոյության համար, այլևս անհնարին կդարձներ գաղթականության հարցի լուծումը, երկրագործության ու արդյունաբերության զարգացումը, ֆինանսների ու առևտրի բարեկարգումը և այլն: Հայաստանի թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական գոյությունը և նույնիսկ հայ ժողովրդի գոյության հարցը կախված էր թուրք-թաթարական բարյացակամությունից կամ քմահաճույքից»:³⁸ Մահմեդականների հակապետական ելույթներն իրենց զգացնել տվեցին ամենուր, ուր կար քիչ թե շատ հոծ բնակչություն: Վերջիններիս հակապետական ելույթները, հայկական իշխանությունների դեմ ապստամբությունները կազմակերպում էին Ադրբեջանն ու Թուրքիան: Մահմեդական շարժումները Հայաստանի Հանրապետության համար լուրջ խնդիրներ հարուցեցին, իսկ դրանց ճնշումը պահանջեց մեծ ջանքեր ու միջոցներ: Հայաստանի կառավարության կողմից ապստամբ շրջանների խաղաղեցումը բխում էր ինչպես հանրապետության տարածաշրջանային աշխարհաքաղաքական, այնպես էլ ազգային-պետական անվտանգության շահերից:

³⁵Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ. (փաստաթղթեր և նյութեր), Երևան, 1993, էջ 248:

³⁶«Յառաջ», 1920, 13 հուլիսի:

³⁷Նախիջևան-Շարուրը, էջ 248:

³⁸Վրացյան Ս., մշված աշխ.-ը, էջ 328:

**УСМИРЕНИЕ МЯТЕЖНЫХ
МУСУЛЬМАНСКИХ ОБЛАСТЕЙ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(1920 год)**

ЮРИК ГУЛЯН

Кандидат исторических наук,
доцент

Резюме

Одним из важных вопросов внутривнутриполитической жизни РА в 1920 году было усмирение мятежных мусульманских областей. За антиправительственными выступлениями мусульман стояли Турция и Азербайджан. Проживающее на территории Армении мусульманское население постоянно держало правительство РА в тревожном состоянии. Антиправительственные выступления проявились везде, где было более или менее смешанное население. Усмирение мятежных областей потребовало от РА больших усилий и средств. Это вытекало как из региональных геополитических интересов республики, так и из интересов национально-государственной безопасности.

**THE APPEASEMENT OF MOSLEM
REBELLIOUS IN REPUBLIC OF ARME-
NIA
(In 1920)**

YURIK GHULYAN

Candidate of Historical Sciences, Assistant
professor

Summary

One of the main problems of the Republic of Armenia's inner-state life of 1920 was the subdual of the rebellious Muslim parts. Turkey and Azerbaijan stood behind the anti-state speeches of the Muslims. RA Government always kept Muslims, who lived in Armenian territory, in an anxious situation. The anti-state speeches of Muslims made themselves felt everywhere where there was relatively dense crowd. The subdual of the rebellious parts took much effort and means. It came both from regional, geographical-political and national-state profits of security.

ՎԱՆԻԿ ԿԱՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Ռուս-հայկական (սլավոնական)
համալսարանի ասպիրանտ*

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը մեծապես կապված է հայ-ռուսական ռազմավարական համագործակցության կայունությունից: Հնարավոր է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումից և աշխարհաքաղաքական որոշակի տեղաշարժերից հետո իրավիճակը փոխվի, բայց հակամարտության պահպանման և ուժերի ներկա դասավորվածության պայմաններում հայ-ռուսական համագործակցությունը մնում է Հայաստանի անվտանգության հիմնական գրավականը: Այս հանգամանքը առավել իրատապ է դարձնում Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականության մեջ ադրբեջանական գործոնի հետազոտման անհրաժեշտությունը, որովհետև Ադրբեջանի աշխարհագրական դիրքը և էներգետիկ պաշարները էականորեն ծանրացնում են նրա կշիռը այն տարածաշրջանային քաղաքական գործընթացներում, որոնց մասնակցում է հյուսիսային հզոր հարևանը:

Մինչ առաջադրված խնդրի ուսումնասիրությանն անցնելը, նշենք կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի ռազմավարական շահերը բնութագրող հետևյալ դրույթները՝ *Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքերի պահպանում և ամրապնդում, տարածաշրջանի հումքային-էներգետիկ պաշարների օգտագործման լայն հնարավորության ապահովում, ռուսական կապիտալի դիրքերի ամրապնդում և ֆինանսա-արդյունաբերական խմբերի գործունեության ընդլայնում, կապի և տրանսպորտի վրա վերահսկողություն:* Հիշյալ դրույթներին պետք է ավելացնել նաև դարաբաղյան հակամարտությունում Ռու-

ՌՈՒՍ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990-2004 թթ.

սաստանի դերը, որն ընդունում են նաև ադրբեջանական ղեկավարները: Անհրաժեշտ ենք համարում արձանագրել նաև մեկ այլ կարևոր փաստ. Ադրբեջանական գործոնի ազդեցությունը Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության վրա միախուսված է ԱՊՀ շրջանակներում Ադրբեջանի արտաքին քաղաքականության հետ, որն անհրաժեշտ է դարձնում դրանց զուգահեռ հետազոտությունը:

ԱՊՀ-ի շրջանակներում հատկապես կարևորվում են ռուս-ադրբեջանական հարաբերությունները: Ռուս-ադրբեջանական հարաբերությունների իրավական հիմքն են կազմում հետևյալ պայմանագրերը՝ 1997թ. հուլիսի 3-ի Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիրը, 2004թ. հունվարի 9-ի Բաքվի հռչակագիրը, 2004թ. փետրվարի 6-ի Մոսկվայի հռչակագիրը, ինչպես նաև մոտ 80 միջպետական և միջկառավարական համաձայնագրեր: Ռուսաստանը պատմականորեն Կովկասը համարում է իր շահերի գոտին: Ունի «հատուկ» հետաքրքրություններ Ադրբեջանի կովկասյան տարածաշրջանում, որոնք ոչ միշտ են համընկնում Ադրբեջանի շահերին: Ադրբեջանական գիտնական Նասիբ Նասիբզադեի կարծիքով՝ հանրապետության աշխարհագրական դիրքը գրավում է Ռուսաստանի ուշադրությունը մի քանի պատճառներով.

1. Վերահսկողություն հաստատելով Ադրբեջանի նկատմամբ՝ Ռուսաստանը կարող է հաստատել իր ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքում, բացի այդ, դա հնարավորություն կտա օգտագործել Ադր-

բեջանի տարածքը որպես ռազմահենարան:

2. Բնական ռեսուրսները հանդիսանում են Ռուսաստանի ուշադրության օբյեկտը. Ռուսաստանը Ադրբեջանին դիտում է որպես մրցակից նավթային արդյունաբերության ոլորտում:

3. Ադրբեջանը ներառելով իր ազդեցության ոլորտում՝ հյուսիսային հարևանը կթուլացնի Թուրքական Հանրապետության և Ադրբեջանի միջև սերտ հարաբերությունների զարգացումը:

4. Ադրբեջանի նկատմամբ վերահսկողությունը թույլ է տալիս նվազեցնել Իրանի ազդեցությունը նախկին խորհրդային մուսուլմանական երկրներում:

5. Ռուսաստանը կարող է փակել իր հարավային սահմանների ճեղքվածքը և հնարավորություն ստանալ ուղիղ կապ հաստատելու Իրանի հետ¹:

Դիվանագիտական հարաբերությունները Ադրբեջանի և Ռուսաստանի միջև հաստատվել են 1992թ. ապրիլի 4-ին, իսկ մի քանի ամիս անց՝ սեպտեմբերի 30-ին, այդ պետությունների կառավարությունները ստորագրել են ազատ առևտրի մասին համաձայնագիր²: Ադրբեջանցի մի շարք քաղաքագետներ նշում են, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ռուսական իշխանությունները վատ էին տրամադրված իրենց պետության նկատմամբ, և իբրև թե դրա պատճառով էին հարաբերությունները սուր բնույթ կրում: Նրանց կարծիքով Ռուսաստանի բացասական դիրքորոշումն է ադրբեջանական արտաքին քաղաքականության որոշ ձախողումների պատճառը:

Անկախության հռչակումից հետո Ադրբեջանի Հանրապետության ղեկավարները՝ Այազ Մութալիբովը, Աբուլֆազ Էլչիբեյը

և Ջեյդար Ալիևը մեծ ուշադրություն էին դարձնում ռուս-ադրբեջանական հարաբերությունների զարգացմանը և իրականացնում էին պաշտոնական և ոչ պաշտոնական այցելություններ դեպի Ռուսաստան: Առավել ակտիվ ռուսամետ քաղաքականություն էր որդեգրել Այազ Մութալիբովը: 1990թ.-ը և 1991թ.-ի 1-ին կեսը անցնում են առանց «հատուկ բախումների», որոնք սպասվում էին Մոսկվայից: Անհրաժեշտ է նշել, որ իրական հետխորհրդային շրջանը սկսվեց 1992թ. գարնանը Ադրբեջանում իշխանության տապալումից հետո³: Այազ Մութալիբովը, որը իշխանության աթոռին մնաց մինչև 1992թ. մարտի 6-ը, վարում էր ճկուն քաղաքականություն Կրեմլի նկատմամբ: Այդ քաղաքականության մեջ չկար լիարժեք հավատարմություն: Շուտով աջակցության փոխարեն Մութալիբովը մեծ հարված է ստանում «ավագ եղբորից» դարաբաղյան խնդրի առնչությամբ: Ռուսաստանը հրաժարվում է օժանդակել Ադրբեջանին հակամարտության կարգավորման ռազմական մեթոդների կիրառման գործում, իսկ հաջողության հասնելու համար Բաքուն ուներ Մոսկվայի աջակցության կարիքը այնքան ժամանակ, քանի դեռ Ռուսաստանը պահպանում էր իր գերիշխանությունը Անդրկովկասում:

Նոր ընտրություններում, որոնք կայացան 1992թ. հունիսին, նախագահ ընտրվեց Ադրբեջանի Ազգային ճակատի առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը: Էլչիբեյը նշում էր, որ Ադրբեջանը չպետք է մտնի ԱՊՀ-ի կազմի մեջ և պետք է ինտեգրվի լեզվական և մշակութային առումով եղբայրական Թուրքիայի հետ⁴: 1991թ. դեկտեմբերին

¹Տես՝ **Полухов Э.**, Основные направления внешнеполитического курса Азербайджанской республики на современном этапе, Центральная Азия и Кавказ N 4(5) 1999, стр.153.

²Տես՝ **Алиев Ф.**, Россия-Азербайджан: возвращение “на круги своя”, Центральная Азия и Кавказ N 3(33) 2004, стр.180.

³Տես՝ **Andrey L. Altstadt**, “Azerbaijan’s Struggle Toward Democracy”, “Conflict, cleavage, and change in Central Asia and the Caucasus” Karen Davisha and Bruce Parrott”Cambridge, 1999. էջ 143.

⁴Տես՝ **Edmund Herzig**, The new Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia, The Royal Institute of International Affairs, 1999, էջ 98.

Ալմա-Աթայի հռչակագիրը ստորագրելուց հետո, որով Ադրբեջանը դառնում էր ԱՊՀ-ի անդամ, Ադրբեջանի խորհրդարանը 1992թ. հոկտեմբերին չվավերացրեց Ադրբեջանի անդամակցությունը: Հետագայում՝ 1993թ. սեպտեմբերին Հեյդար Ալիևը հայտարարեց, որ կմիանա ԱՊՀ-ին՝ առաջ բերելով խորհրդարանում բանավեճեր, և, ի վերջո, վավերացրեց անդամակցությունը⁵:

Ադրբեջանի ինքնուրույնության և ԱՄՆ-ի, Եվրոպայի, Թուրքիայի հետ կապերի ամրապնդման ձգտումը Ռուսաստանի կառավարական շրջանակները դիտում էին որպես երախտամոռության դրսևորում, որպես մարտահրավեր և անմիջական վտանգ ռուսական շահերին: Հետաքրքրություն է առաջացնում այն փաստը, որ իր նախագահության երկու ժամկետներում ՌԴ նախագահ Բորիս Ելցինը այդպես էլ պաշտոնական այցելություն չկատարեց Ադրբեջան: Միայն 1991թ. աշնանը նա Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի հետ՝ ցուցաբերելով միջնորդական նախաձեռնություն հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում, իրականացրեց բլից-այցելություն նորանկախ կովկասյան երկրներ: Ընդամենը մեկ տարում Աբուլֆազ էլչիբեյին հաջողվեց իրականացնել բոլոր, այդ թվում՝ սահմանապահ ռուսական զորքերի դուրսբերումը երկրից: Ռուսական զինված ուժերի դուրսբերումը Ադրբեջանից սկսվեց 1992թ. առաջին կեսին, ինչը նպաստեց ռուս-ադրբեջանական ռազմական և քաղաքական համագործակցության թուլացմանը: Ադրբեջանը Հարավային Կովկասի միակ երկիրն է, որի տարածքից դեռ 1993թ. ամբողջովին դուրս էին բերվել ռուսական զորքերը:

Մոսկվայի համար մեծ նշանակություն ունեւիր ռազմական բազաների տեղակայումը, Ադրբեջանի սահմանների նկատմամբ վերահսկողությունը և հատկապես ուժեղ վերահսկողությունը Ադրբեջանի նավթային պաշարների նկատմամբ: Դա, իհարկե, վտանգում էր Ադրբեջանի անկախությանը: Ի տարբերություն Վրաստանի ու Հայաստանի՝ Ադրբեջանը մերժեց Ռուսաստանի առաջարկությունը սահմանների միացյալ պաշտպանության վերաբերյալ: Ժամանակ առ ժամանակ Ռուսաստանը հիշեցնում էր Ադրբեջանին, որ վատ չէր լինի նրա տարածքում մի քանի ռազմական բազաների տեղակայումը և Իրանի ու Թուրքիայի հետ սահմաններում միասնական ուղեկալների ստեղծումը: Ադրբեջանական բանակի կազմակերպման կառույցում կիրառվում են ոչ թե ռուսական, այլ ՆԱՏՕ-ական չափանիշները: Նախագահական վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյա Վ. Գուլիզադեն հայտարարել է, որ «Ադրբեջանը ցանկանում է հանրապետության տարածքում տեղակայել ՆԱՏՕ-ի բազա՝ ի հակակշիռ Հայաստանում ռուսական բազաների»⁶: Մոսկվային այդպես էլ չհաջողվեց ռազմական մասնակցություն ունենալ Ադրբեջանում:

Չնայած էլչիբեյի հակառուսական քաղաքականությանը՝ նա Ռուսաստանի հետ 1992թ. հոկտեմբերի 12-ին կնքեց ցանկացած կողմի վրա ագրեսիայի դեպքում փոխադարձ օգնության և քաղաքացիների իրավունքների պաշտպանության համաձայնագիր⁷:

Խռովության հետևանքով, որը կազմակերպվեց 1993թ. օգոստոսին գնդապետ Մուրատ Հուսեյնովի կողմից,

⁵Տես՝ Glenn E. Curtis, “Armenia, Azerbaijan and Georgia”, Federal Research Division Library of Congress, 1994, էջ 141:

⁶Տես՝ Мусабеков Расим, Россия-Азербайджан: слова и дела, Центральная Азия и Кавказ, N3(9), 2000, էջ 53:

⁷ Տես՝ Glenn E. Curtis, նշված աշխատությունը, էջ 140:

իշխանության եկավ փորձառու, հանրապետության նախկին կոմունիստական առաջնորդ Գեյդար Ալիևը: Իշխանության գալուց հետո Ալիևը հայտարարեց, որ մտադիր է բարելավել ռուս-ադրբեջանական հարաբերությունները և ձեռնարկեց կոնկրետ քայլեր, վերադարձրեց Ադրբեջանը ԱՊՅ և 1993թ. Ռուսաստանի Դաշնության հետ կնքեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագիրը, որը վերակնքվել է 1997թ⁸:

1996թ. հունիսի 3-ին Կիսլովոդսկում նախագահներ Բ. Ելցինը, Գ. Ալիևը, Է. Շևարժնաձեն, Լ. Տեր-Պետրոսյանը և հյուսիսկովկասյան հանրապետությունների, երկրամասերի ու օկրուգների ղեկավարները նախաձեռնեցին մշակել ընդհանուր ռազմավարություն Կովկասյան տարածաշրջանում: Այդ ժամանակ հենց առաջ քաշվեց թեզ Ռուսաստանի և Անդրկովկասյան հանրապետությունների միջև հատուկ հարաբերությունների վերաբերյալ: Ելցինը հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Ռուսաստանը և Կովկասը հանդիսանում են փոխադարձ շահերի բնական գոտիներ⁹: Դրանից հետևում է, որ խոշոր տերությունը գիտակցում է անկախ հանրապետությունների գոյությունը, որոնց շահերը նույնպես պետք է հաշվի առնել, նույնիսկ, եթե դրանք հակասում են Ռուսաստանի հետապնդած նպատակներին:

Ադրբեջանի և Ռուսաստանի հարաբերությունները բնութագրվում են որպես փոխադարձ անվստահության և շարունակական բախումներով լի հարաբերություններ: Ռուսաստանի մշտական ձգտումը՝ թելադրել իր կամքը հարևաններին և ենթարկեցնել նրանց իր շահերին, Ադրբեջանում ստեղծել են Զյուսիսից սպասվող սպառնալիքի մթնոլորտ: Զյուսիսային հա-

րևանը այնքան խորն է ներթափանցել կովկասյան խնդիրների մեջ, որ Ադրբեջանում Ղարաբաղյան խնդրի ճգնաժամը և նրա կարգավորման փակուղին դիտում են որպես ռուսական իշխանությունների գործողությունների արդյունք:

1995թ-ից սկսած ռուս-ադրբեջանական հարաբերությունների վատթարացման վրա մեծ ազդեցություն ունեցավ ռազմական գործողությունների վերսկսումը Չեչնիայում: Ռուսական կառավարությունը մեղադրեց Ադրբեջանին չեչեն անջատականներին աջակցելու մեջ, սակայն այդպես էլ չներկայացրեց համապատասխան փաստեր: Մեղադրելով Ադրբեջանին՝ 1994-1996թթ.-ին արգելք դրվեց Ադրբեջանի հետ ցամաքային և ծովային կապերին, և նաև սահմանափակվեցին օդային հարաբերությունները: Նույնիսկ Գեյդար Ալիևի հայտարարությունը, որ իր երկիրը միշտ դեմ է դուրս եկել և այժմ էլ հակադրվում է անջատողականությանը, չթուլացրեց լարվածությունը: Ադրբեջանի նախագահը հայտարարեց, որ դատապարտում է ահաբեկչական գործողությունները, որոնք իրականացվել են Ռուսաստանի տարածքում և պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերելու ռուսական կառավարությանը՝ ստուգել ցանկացած կասկածելի օբյեկտ և երևույթ: Ալիևը նաև հիշեցրեց, որ ԱՊՅ պետությունների ղեկավարների նիստերում ինքը ձգտում էր փաստաթղթերի մեջ մտցնել միասնական պայքարի գաղափարն ընդդեմ ահաբեկչության և անջատողականության¹⁰: 1999թ. սեպտեմբերին Բաքու այցելեց Ռուսաստանի ԱԳ նախարար Ի. Իվանովը, որը հանդիպումների ընթացքում արտահայտվեց Ադրբեջանի հետ ավելի սերտ համագործակցության օգտին:

⁸Տես՝ **Мусабеков Р.**, մշված աշխատությունը, էջ 50:

⁹Տես՝ **Полухов Э.**, մշված աշխատությունը, էջ 153:

¹⁰Տես՝ **Мусабеков Р.**, մշված աշխատությունը, էջ 53:

2003թ. հոկտեմբերի 31-ին 41-ամյա Իլիամ Ալիևը դարձավ Ադրբեջանի չորրորդ նախագահը, փոխարինելով իր հորը՝ Յեյդար Ալիևին: Նա դարձավ հետխորհրդային տարածքում ամենաերիտասարդ նախագահը: Իր նախագահության օրոք Յեյդար Ալիևին հաջողվեց երկիրը նախապատրաստել այնպես, որ իշխանությունը իր որդուն հանձնելու համար անհրաժեշտ պաշարները բավական լինեին: Ռուսաստանի համար Ալիև-կրտսերը դեռևս առավել ընդունելի է Ադրբեջանի նախագահի պաշտոնում: Ի. Ալիևի՝ նախագահի պաշտոնին առաջխաղացմանը զուգահեռ՝ Բաքուում աստիճանաբար մերժեցում էր Մոսկվային: Դրա մասին են վկայում Վ. Պուտինի այցը Բաքու, չեչեն ահաբեկիչների հանձնումը, որոնց նախկինում Ադրբեջանի տարածքում չէին «հայտնաբերում»¹¹:

2003թ. հոկտեմբերին Ադրբեջանում տեղի ունեցած նախագահական ընտրություններում Իլիամ Ալիևի հաղթանակը ձեռնտու էր Ռուսաստանին, քանի որ շարունակվելու էր Յեյդար Ալիևի արտաքին քաղաքականությունը, հետևաբար, նաև կայունությունը ռուս-ադրբեջանական հարաբերություններում: Այսպես, ՌԴ Պետդումայի ԱՊՀ գործերով հանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Իգրունովը նշում էր, որ Ալիև-կրտսերի նախագահությունը կնշանակի որոշ կայունություն Ռուսաստանի և Ադրբեջանի հարաբերություններում Ադրբեջանի ներսում ԱՄՆ-ի գերակայող ազդեցության պայմաններում: «Թեև ներկայումս Մոսկվայի ազդեցությունը Բաքվի նկատմամբ այդքան էլ մեծ չէ, - ասել է Իգրունովը - Յեյդար Ալիևին հաջողվեց լավ հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ, որն իր հերթին շահագրգռված է

մնան հարաբերությունների պահպանման մեջ, իսկ Իլիամ Ալիևը հենց այն թեկնածուն է, որը կարող է ապահովել դա»¹²: Իսկ «Թուրան» լրատվական գործակալության վերլուծաբան Թ. Ջուվարլին նշում էր. «Ինչքան իրատեսական լինեն նրանք, ովքեր կզան իշխանության Ադրբեջանում, այնքան ակնհայտ է, որ նրանցից ոչ-ոք չի գնալու Մոսկվայի հետ հարաբերությունների վատացման: Վերջին տարիների ընթացքում դեպի Արևմուտք Ադրբեջանի վերակողմնորոշումից հետո նրա կախվածությունը Ռուսաստանից զգալիորեն նվազել է: Սակայն Արևմուտքը հեռու է, իսկ Ռուսաստանը՝ մոտիկ, և վերջինս առավել շահավետ արտահանման շուկա է հանդիսանում Ադրբեջանի համար»¹³: Իրոք, որոշակիորեն կարելի է գալ այն եզրահանգմանը, որ հետզհետե ռուս-ադրբեջանական հարաբերություններում սկսում է գերակայող դառնալ պրագմատիզմը: Մինչդեռ Ադրբեջանի անկախության առաջին տարիներին Ռուսաստանի հետ հարաբերությունները երկրորդ պլան էին մղվել. ՌԴ-ի մասին խոսում էին, ոչ այլ կերպ, քան «չարիքի կայսրության»¹⁴:

Հատկապես ակտիվորեն է զարգանում երկկողմ հարաբերությունների տնտեսական ոլորտը, ինչն անխուսափելիորեն խթանում է քաղաքական ակտիվ երկխոսությանը: 2004թ. փետրվարի 5-6-ին տեղի ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևի առաջին պաշտոնական այցը Ռուսաստան: Այցելության արդյունքում կողմերի միջև ստորագրվեց «Մոսկովյան Հռչակագիրը» Ադրբեջանի և Ռուսաստանի միջև: Հռչակագրի մեջ երկկողմ հարաբերությունների մակարդակը բնորոշվում է, որպես ռազմավարական համագոր-

¹¹Տես՝ **Смирнов С.**, Азербайджан: эстафета власти, Центральная Азия и Кавказ, 1(31), 2004, էջ 37:

¹²Տես՝ «Независимая газета», 2003:

¹³Տես՝ նույն տեղում:

¹⁴Տես՝ **Чернявский С.И.**, Новый путь Азербайджана, М., 2002, էջ 220:

ծակցություն: Կողմերը համաձայնության են գալիս ամրապնդել երկկողմ ռազմատեխնիկական համագործակցությունը, որը ուղղված չէ երրորդ երկրների դեմ և չի հակասում ՌԴ-ի և Ադրբեջանի միջազգային պարտավորություններին: Հռչակագրում կա մի կարևոր դրույթ, ըստ որի՝ կողմերը չեն մասնակցելու ռազմական, տնտեսական և ֆինանսական բնույթի որևէ գործողությունների կամ միջոցառումների, այդ թվում՝ նաև երրորդ երկրների միջոցով, որն ուղղված կլինի մյուս կողմի դեմ, ինչպես նաև չեն թույլատրելու, որ իրենց տարածքները օգտագործվեն մյուս կողմի նկատմամբ ագրեսիայի կամ այլ բռնի գործողությունների նպատակով: Հռչակագրում նաև արձանագրվում է երկու պետությունների շահագրգռվածությունը երկկողմ առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության զարգացման գործում: Ի. Ալիևի այդ այցի կապակցությամբ Կարնեգիի մոսկովյան կենտրոնի գիտխորհրդի անդամ Ա. Մալաշենկոն նշում է. «Ալիևն ամեն ինչ կանի Ռուսաստանի հետ լավ հարաբերությունները պահպանելու համար: Դա չի նշանակում, որ նա կվերակողմնորոշվի ԱՄՆ-ից դեպի Ռուսաստան: Սակայն Իլիամն իրոք պատրաստ է հաշվի առնել Ռուսաստանի ազգային շահերը»¹⁵:

Երկկողմ հարաբերությունների զարգացման գործում հետզհետե ավելի մեծ դեր է սկսում խաղալ Ռուսաստանի ադրբեջանական համայնքը: 2004թ. հոկտեմբերին Մոսկվայում Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների մասնակցությամբ տեղի ունեցավ Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսի բացումը, որը միավորում է Ռուսաստանի ադրբեջանցիներին: 2005թ. փետրվարի 15-

17-ը տեղի ունեցավ Ի. Ալիևի նոր այցելությունը ՌԴ: Երկու նախագահները հանդիսավոր կերպով բացեցին Ադրբեջանի Տարին Ռուսաստանում: Պետք է նշել, որ 2006 թվականը իր հերթին հայտարարված էր Ռուսաստանի տարի Ադրբեջանում: Իր այցելության նախօրեին «Независимая газета» թերթին տված հարցազրույցում Ալիևը Ռուսաստանի հանդեպ իր ակնկալիքներն արտահայտեց ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում: Նա նշեց, որ Ռուսաստանը Մինսկի խմբի միակ համանախագահ պետությունն է, որը սահման ունի Ադրբեջանի հետ և նույնպես հանդիսանում է կովկասյան պետություն, ինչը զգալիորեն ուժեղացնում է նրա պատասխանատվությունը հակամարտության կարգավորման գործում: Ըստ Ադրբեջանի նախագահի՝ Մինսկի խումբը չպետք է ելնի. «դուք համաձայնության եկեք, իսկ մենք այն կհաստատենք» սկզբունքից, քանի որ, եթե Հայաստանն ու Ադրբեջանը ի վիճակի լինեին ինքնուրույն համաձայնության գալու, ապա վաղուց դա արած կլինեին: Մինչդեռ Ռուսաստանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում փոփոխություն չի կրել: Ռուսաստանը ելնում է նրանից, որ կողմերն իրենք պետք է հասնեն փոխընդունելի կարգավորման, իսկ ինքն իր հերթին պատրաստ է երաշխավորել ապագա խաղաղ համաձայնությունը:

Ինչպես վերը նշվեց, ռուս-ադրբեջանական հարաբերություններում կարևոր դեր է խաղում տնտեսական բաղկացուցիչը¹⁶: Այս ոլորտում երկկողմ համագործակցությունը զարգանում է նույնիսկ ծրագրվածից ավելի արագ տեմպերով: Այսպես, 2004թ. Ի. Ալիևի Ռուսաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ

¹⁵Stu` www.newizv.ru, 05.02.2004
¹⁶Stu` “Независимая газета”, 14.02.2005

պայմանավորվածություն էր ծեռք բերվել կրկնապատկել երկկողմ առևտրաշրջանառության ծավալը, և արդյունքում արդեն 2004թ.-ին այն աճել է 50%-ով՝ հասնելով 800 մլն ԱՄՆ դոլարի: Այդ կապակցությամբ նախագահ Պուտինը հայտարարեց. «Մենք հույս չունեինք, որ ապրանքաշրջանառությունն այդքան արագ կաճի: Մենք նպատակ էինք դրել հասնել նրա կրկնապատկմանը առավել հեռու հեռանկարում, սակայն այժմ այն իրողություն է»¹⁷: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանի ղեկավարության արտաքին քաղաքականությունը Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններում սկսում է տալ իր դրական արդյունքները. 1990-ական թթ. Ռուսաստանի պետական և քաղաքական էլիտայի շրջանակներում Ադրբեջանի հանդեպ ձևավորված բացասական վերաբերմունքը սկսում է տեղի տալ տնտեսական շահին:

Ռուս-ադրբեջանական հարաբերությունների բնույթի վրա անպայմանորեն իր ազդեցությունն է ունենում խոշոր տերությունների մրցակցությունը Կովկասում: Առաջին հերթին դա վերաբերում է ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Թուրքիայի և Իրանի քաղաքականությանը այս տարածաշրջանում: Այսօր շատ ռուս քաղաքագետներ, որոնք կարծես գերի են մնացել նախկին խորհրդային տերության տրամաբանությանը, բացասաբար են ընդունում Հարավային Կովկասի երկրների ձգտումը՝ զարգացնելու հարաբերություններն Արևմուտքի և այլ երկրների հետ: Նրանց կարծիքով ինչ-որ ազդեցության ուժեղացումը տվյալ տարածաշրջանում անմիջականորեն նշանակում է Ռուսաստանի ազդեցության թուլացում: Ռուսաստանի որոշ իշխանական օղակներ չեն ուզում ըմբռնել, որ համագործակցությունից շահում են

բոլորը: Բաքվում գտնում են, որ Մոսկվան կոչված է դառնալու բազմաբևեռ աշխարհակարգի կենտրոններից մեկը: Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի Բաքու պաշտոնական այցի (2001թ. հունվար), Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի պետական ու գործնական այցերի արդյունքում ռուս-ադրբեջանական հարաբերություններում տեղի ունեցավ որակական առաջընթաց, և սկսված է նոր շրջան երկու երկրների ռազմավարական համագործակցության զարգացման մեջ: Կայունությունը և զարգացումը հայր և որդի Ալիևների նախընտրական արշավի հիմնական գաղափարներն էին, որոնք պետք է մնային Ադրբեջանի նոր ղեկավարության քաղաքականության հիմքում¹⁸:

Ռուսաստանի հարաբերությունները իր հարևանների հետ որոշվելու են 21-րդ դարի փոփոխվող աշխարհում երկրի քաղաքական ընտրությամբ: Եթե Ռուսաստանը նախընտրի հակադրվել ղեմնկրատական Եվրոպային, այդ դեպքում ողջ Կովկասը, այդ թվում՝ Ադրբեջանը, կդառնա բախումների և հակադրությունների թատերաբեմ: Սակայն պետք չէ բացառել նաև այն, որ Ռուսաստանը կցանկանա ամրապնդել իր դիրքերը Եվրոպական երկրների շրջանում՝ հավասարակշռելով տակտիկական մրցակցությունը և ռազմավարական համագործակցությունը:

¹⁷ Տես՝ «Независимая газета», 16.02.2003:

¹⁸ Տես՝ **Чепурин А.**, Азербайджан: первые шаги нового президента страны Ильхама Алиева, Центральная Азия и Кавказ, 1(31), 2004, էջ 167:

**РОССИЙСКО -
АЗЕРБАЙДЖАНСКИЕ ОТНОШЕНИЯ
В 1990-2004гг.**

ВАНИК ОГАНИСЯН

Аспирант Российско-армянского
(Славянского) университета

Резюме

Южно-кавказскую политику России можно охарактеризовать следующими положениями: упрочнение гео-политических позиций, сохранение широких возможностей по эксплуатации энергетических ресурсов, упрочнение позиций российского капитала, контроль над коммуникациями. Эти стратегические интересы диктуют российскому руководству держать Азербайджан под своим контролем. Одновременно, прозападная внешняя политика Азербайджана и его стремление устранить Россию от строительства нефтяных и газовых трубопроводов встречает резкое сопротивление Кремля. С другой стороны, российско-армянское стратегическое сотрудничество осложняет российско-азербайджанские отношения. Некоторое улучшение в межгосударственных отношениях наблюдалось при президентстве И. Алиева. В 2004г. была подписана Московская декларация РФ и Азербайджана о двухсторонних отношениях. В декларации было отмечено, что российско-азербайджанские отношения носят стратегический характер.

**RUSSIAN-AZERBAIJANI RELATIONS
IN 1990-2004**

VANIK HOVHANNISYAN

Student in doctoral studies in Russian-Armenian (Slavonic) University

Summary

Russia's policy in the South Caucasian can be characterised by the following features: consolidation of geopolitical positions, conservation of wide possibilities on the exploitation of power resources, consolidation of Russian capital positions and control over communications. These strategic interests dictate to Russian leaders to keep Azerbaijan under their control. At the same time, Azerbaijan's pro-western foreign policy and its trend to exclude Russia from the construction of oil and gas pipelines has met with sharp resistance from the Kremlin. On the other hand, Russian-Armenian strategic cooperation complicates Russian-Azerbaijani relations. Some improvements in international relations took place during the presidency of I. Aliev. In 2004, Moscow's declaration between the Russian Federation and Azerbaijan on bilateral relations was signed. In the declaration it was mentioned that Russian-Azerbaijani relations were of a strategic nature.

ՀԱՍՄԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի գործունեության հիմնական ցուցանիշների փոփոխությունների միտումների և դրանք պայմանավորող գործոնների բացահայտման, արդյունավետության վերլուծության համար վերջին 4 և կես տարիներին համառոտ ուսումնասիրվել և վերլուծվել են՝

- ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ակտիվների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի փոփոխությունների միտումները և դրանք պայմանավորող գործոնները,

- բանկերի ակտիվների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի կառուցվածքը՝ ըստ տարրերի և բանկերի,

- ՀՀ բանկային համակարգի շահույթի և շահութաբերության՝ որպես գործունեության արդյունավետության ցուցանիշների փոփոխությունների միտումները:

2009 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում էին 22 առևտրային բանկեր՝ 383 մասնաճյուղերով: Վերջին տարիներին դրսևորվում են բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը, այդ թվում՝ տնտեսության վարկավորման մակարդակը բնութագրող ցուցանիշների աճի միտումներ: Բավական է նշել, որ 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի ընդհանուր ակտիվների և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հարաբերակցությունը կազմել է 28.0%-ը, իսկ վարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը 16.9%-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 24.3%-ի և 13.0%-ի փոխարեն: Այնուհանդերձ, պետք է արձանագրել, որ հանրապետության բան-

կային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը դեռևս էականորեն ցածր է ինչպես զարգացած, այնպես էլ անցումային շրջանի մի շարք երկրների համեմատան ցուցանիշից: Այսպես, ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2008 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով կազմել է՝ Ռուսաստանի Դաշնությունում՝ 61%, Ղազախստանում՝ 99%, Ուկրաինայում՝ 45%, Իսպանիայում՝ 286%, Շվեյցարիայում՝ 713%, Ավստրիայում՝ 334%, Գերմանիայում՝ 306%, Ֆրանսիայում՝ 382%, Մեծ Բրիտանիայում՝ 285%, ԱՄՆ-ում՝ 215%²:


Բանկերը միմյանցից զգալիորեն տարբերվում են իրենց մեծությամբ՝ այդ թվում, ընդհանուր կապիտալի, ակտիվների և պարտավորությունների ցուցանիշներով: Այսպես, 2009 թվականի հուլիսի 1-ի դրությամբ թվով 7 բանկերի բաժին է ընկնել բանկային համակարգի ակտիվների ընդհանուր ծավալի 63.9%-ը, պարտավորությունների 66.6%-ը, ընդհանուր կապիտալի 55.4 %-ը:

Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները (Գծ. 1), ՀՀ բանկային համակարգի ակտիվները 2004թ. համեմատությամբ ավելացել են ավելի քան երեք անգամ՝ 2008թ. վերջին հատելով մեկ տրիլիոն դրամի սահմանագիծը՝ տարեկան կտրվածքով ապահովելով միջինում 30.5% աճ: 2009 թվականի առաջին երկու եռամսյակների ընթացքում դիտվել են ընդհանուր ակտիվների աճի նվազման միտումներ՝ կազմելով համապատասխանաբար 10.2% և 0.3%, որը հիմնականում պայմանավորված է նախորդ տարում երևան եկած և մեր հանրապետություն համե-

մատարար ուշ մուտք գործած համա- աշխարհային ֆինանսական ճգնաժամով:

երկրների բանկերում:

Հիմնական միջոցներն ավելացել են մրդ դրամ



Գծ. 1. Բանկերի ընդհանուր ակտիվների, վարկերի և պարտատոմսերում ներդրումների դինամիկան

Այդ ճգնաժամի ազդեցությունը զգացվում է հատկապես ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի տվյալներով, երբ բանկային համակարգի ակտիվների աճ գրեթե չի արձանագրվել:

Եթե ակտիվների աճը դիտարկենք բանկերի ռեսուրսների ձևավորման աղբյուրների տեսանկյունից, ապա կարելի է արձանագրել, որ անցած չորս տարիներին ակտիվների ընդհանուր աճի 23.0%-ն ապահովվել է ընդհանուր կապիտալի աճի (370.8%), իսկ 77.0%-ը՝ պարտավորությունների աճի (261%) հաշվին:


Ակտիվների աճի բարձր տեմպերով առանձնանում են հատկապես Արարատ-բանկը (նախորդ 4 տարիներին՝ 560.4%), Յունիբանկը՝ (523.7%), Ակբա-կրեդիտ Ագրիկոլբանկը՝ (507.3%), Ինեկոբանկը՝ (392.0%), Ամերիաբանկը (378.5%), Առեքսիմբանկ-Գազպրոմբանկ խումբը՝ (303.7%), Արդշին-ինվեստբանկը՝ (297.1%): Այս բանկերի ակտիվների տեսակարար կշիռը բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում կազմել է 63.9%:

Ընդհանուր բանկային համակարգի ակտիվների կազմում ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների մնացորդներն ավելացել են 36.8%-ով, այլ բանկերում նոստրո թղթակցային հաշիվների մնացորդները՝ 86%-ով (Աղյուսակ 1): Տարեվերջին թղթակցային հաշիվների 96.2%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում, որոնց 41%-ը ներդրված են եղել ԱՄՆ բանկերում, 38%-ը եվրոպական բանկերում, 11%-ը՝ Ռուսաստանի բանկերում և 9%-ը՝ այլ

2.5%-ով և կիսամյակի վերջում կազմել 53.1 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 20%-ը: ՀՀ բոլոր առևտրային բանկերում հիմնական միջոցների մեծությունը զիջել է ընդհանուր կապիտալի մեծությանը, ինչը վկայում է այն մասին, որ բանկերի հիմնական միջոցները ձեռք չեն բերվել փոխառու միջոցների հաշվին:

Տնտեսությանը տրամադրված վարկերը 2004 թվականի համեմատությամբ ավելացել են ավելի քան 4 անգամ՝ տարեվերջին ապահովելով ընդհանուր ակտիվների աճի մոտ 80%-ը: Պահպանելով նախորդ չորս տարիների միտումները՝ վարկերը, ընդհանուր ակտիվների համեմատությամբ, 2008թ. դարձյալ դրսևորել են առաջանցիկ աճ: Ընդ որում, դրամով վարկային ներդրումներն ավելացել են 50%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները 37.6%-ով, որի արդյունքում դրամային վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 2 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 61.3% (Գծ. 2): Ավելորդ չենք համարում մշել, որ վարկային ներդրումները ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև ամբողջ աշխարհում ապահովում են առևտրային բանկերի տոկոսային եկամուտների զգալի մասը:

Այսպես, վերջին երեք տարիներին ընդհանուր ակտիվներում վարկային ներդրումների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 46.8%, 54.6% և 62.4% (Աղյուսակ 1): Սակայն նույն ժամանակահատվածում դիտվել է ակտիվ-



ՊՁ. 2. Բանկերի ընդհանուր ակտիվների կառուցվածքը

ներում պարտատոմսերի տեսակարար կշռի նվազում՝ 16.2%-ից հասնելով ընդհուպ 7.4%, ինչը վկայում է այն մասին, որ բանկերի համար ավելի նախընտրելի է պարտատոմսերում ներդրումների փոխարինումը վարկային ներդրումներով, քանի որ վերջիններս ապահովում են ավելի մեծ եկամտաբերություն, քան պարտատոմսերը:

Պարտատոմսերում ներդրումների տեսակարար կշռի նվազման միտումները պահպանվեցին ընթացիկ տարվա երկու եռամսյակների ընթացքում՝ գրանցելով մոտ 2.5 տոկոսային կետով անկում: Ինչ վերաբերում է վարկային ներդրումներին, ապա, ի տարբերություն նախորդ տարիների, ընթացիկ տարվա երկու եռամ-

ակտիվների 4.9%-ը (ՊՁ. 1): Արդյունքում պետական պարտատոմսերում ներդրումների ծավալը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում կրճատվել է 9.3%-ով, իսկ տարեսկզբից մոտ 14%-ով՝ ժամանակաշրջանի վերջում կազմելով 69.7 մլրդ դրամ: Պարտատոմսերով գործառնությունների ակտիվությամբ առավել աչքի են ընկել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը, Յունիբանկը, Կոսմոսբանկը, Մելաթբանկը և Ամերիաբանկը, որոնց պարտատոմսերում ներդրումների ծավալը կիսամյակի վերջում կազմել է համապատասխանաբար 8.8, 6.4, 4.5, 4.1 և 3.6 մլրդ դրամ: Ընդ որում, վերոհիշյալ բանկերին բաժին է ընկնում ընդհանուր բան-

Աղյուսակ 1.

Բանկերի ընդհանուր ակտիվների կառուցվածքի փոփոխության միտումները

	31/12/07	30/06/08	31/12/08	30/06/09	Աճ/Նվազում	Աճ/Նվազում	Մլն դրամ Աճ/Նվազում
Կանխիկ դրամ միջոցներ	39,092	43,793	41,827	59,272	12.03%	-4.95%	42.39%
Պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	76,177	70,051	101,000	156,171	-7.19%	-8.16%	-50.16%
Թրջ. հաշիվներ բանկերում	40,824	88,183	75,919	108,134	88.97%	11.38%	42.43%
Պահանջ. բանկ. և այլ ֆին. կազմ. նկ-ից	32,566	35,858	27,433	39,090	10.45%	-23.71%	-12.49%
Պետական արժեթղթեր	112,190	89,448	81,108	89,755	20.27%	9.32%	14.00%
Վարկեր իրավաբ. անձանց	192,424	240,877	289,850	308,740	25.18%	20.25%	8.59%
Վարկեր ֆիզիկ. անձանց	206,255	269,885	309,364	293,302	30.84%	14.27%	-8.13%
Վարկեր բանկի հետ կապ. անձանց և աշխատակից.	10,052	13,885	18,778	18,979	35.94%	37.40%	9.57%
Զիմնակյա միջոցներ	42,535	46,293	51,773	53,052	8.40%	14.31%	2.47%
Լիզինգ, ֆակտորինգ	7,828	9,112	9,795	5,703	19.09%	-3.63%	-11.72%
Այլ անթերթեր	2,706	2,061	3,393	-1,829	-23.82%	61.63%	-15.25%
Այլ ակտիվներ	5,544	5,882	18,244	24,085	2.49%	221.07%	32.01%
Պաշարված ստացվելիք տոկոսներ	4,578	6,116	6,085	7,297	40.17%	-5.01%	18.72%
Ակտիվների հնար. կորուստ. ժամկետային պահուստներ	-7,702	-10,129	-11,995	-18,819	31.52%	17.83%	57.88%
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ	764,459	890,585	1,024,232	1,117,689	16.50%	15.01%	9.12%

սյակներում դրանք նվազել են 5.1 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջում կազմելով ակտիվների 57.3%, միևնույն ժամանակ պարտատոմսերը կազմել են

կային համակարգի պարտատոմսերում ներդրումների ավելի քան 40%-ը: Ուշագրավ է նաև այն, որ երկու բանկի՝ Առեքսիմբանկ-Գազպրոմբանկ խմբի և Պրոկրեդիտբանկի

մոտ այս ակտիվները բացակայում են: Այնուհանդերձ, բանկերի գերակշիռ մասը դեռ շարունակում է պարատոմսերով գործառնություններ իրականացնել, քանի որ դա լուծում է բանկերի համար այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է իրացվելիությունը:

Ակտիվների կառուցվածքում վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի ավելացման հետ մեկտեղ նկատվում է դրանց հնարավոր կորուստների ծածկման պահուստի աճ, որը, սակայն, պայմանավորված է ոչ միայն վարկերի և դեբիտորական պարտքերի ծավալի մեծացմամբ, այլ նաև խնդրահարույց ակտիվների տեսակարար կշռի աճով (Աղյուսակ 2): Այսպես, եթե 2007թ. խնդրահարույց ակտիվների տեսակարար կշռը ընդհանուր ակտիվներում կազմում էր ընդամենը 2.4%՝ կիսամյակային կտրվածքով ավելանալով միջինում 0.8 տոկոսային կետով, ապա ընթացիկ տարում այդ ցուցանիշը գրանցեց ռեկորդային աճ՝ կիսամյակի վերջում կազմելով 8.6%, նախորդ տարվա համեմատ ավելանալով 4.7, իսկ 2007թ-ի համեմատ՝ 6.8 տոկոսային կետով:

Իրական վարկային ներդրումների կազմում վարկավորման հիմնական ծավալը բաժին է ընկել տնտեսության վարկավորմանը՝ ամբողջ վարկային ներդրումների 57% կամ 374.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա ընթացքում ավելացել է ավելի քան կրկնակի անգամ՝ 6%-ոց անկում գրանցելով առաջին կիսամյակի ընթացքում: Միևնույն ժամանակ, ֆիզիկական անձանց վարկավորման ծավալը նախորդ տարվա ընթացքում աճել է 49.5%-ով, կիսամյակի ընթացքում նվազել 8.1%-ով: Նախորդ տարում ֆիզիկական անձանց վարկավորման աճի տեմպերը զիջել են տնտեսության վարկավորման աճի տեմպերին, որը պայմանավորված էր միջազգային ֆինանսական ճգնաժամով, ինչի արդյունքում բանկերն սկսեցին ավելի մեծ զգուշավորություն ցուցաբերել սպառողական, ավտոմեքենաների և հիփոթեքային վարկեր տրամադրելիս: Փոխարենը սկսեցին ակտիվորեն ֆինանսավորել փոքր և միջին բիզնեսը: Տեղին է նաև նշել, որ 2009թ.

առաջին եռամսյակում մանրածախ վարկեր (սպառողական, ավտոմեքենաների և հիփոթեքային վարկեր) տրամադրում էին ընդամենը մի քանի բանկ՝ այն էլ միայն «փորձված» հաճախորդներին:

Տնտեսության վարկավորման ծավալներով առավել ակտիվություն է դիտվել գյուղատնտեսության, արդյունաբերության, շինարարության և սպասարկման ոլորտներում, որտեղ 2009թ. առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է աճ համապատասխանաբար 24.9%, 10.1%, 11.7% և 6%: Սակայն վարկային պորտֆելի գերակշիռ մասը դեռ բաժին է ընկնում հիփոթեքին և ավտովարկավորմանը: Առևտրային բանկերի կողմից սպառողական վարկավորման ծավալը կիսամյակի վերջում կազմել է 187.8 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 28.6%-ը: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում այս ցուցանիշը նվազել է մոտ 18%-ով, որը պայմանավորված է եղել ավտովարկավորման 25% և անշարժ գույքի գրավով վարկավորման 17% նվազմամբ: Սպառողական վարկավորման ծավալների աճ գրանցել է միայն Ամերիաբանկը՝ 15% և Ամելիքբանկը՝ մոտ 4%: Առաջին եռամսյակի ընթացքում սպառողական վարկավորման կազմում գրանցվել է հիփոթեքային վարկավորման ծավալների ընդամենը 0.4% աճ, մինչդեռ ավտովարկավորման ծավալները կրճատվել են 25%-ով:

Տնտեսության վարկավորման հիմնական ծավալն ապահովեցին ՎՏԲ-Հայաստան բանկը 39.9 մլրդ դրամ (ինչը կազմում է իր վարկային պորտֆելի 56.8%-ը), Արդշինհիմվեստբանկը՝ 39.5 մլրդ դրամ (54%), Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը՝ 39.4 մլրդ դրամ (54.2%), Ակբա-Կրեդիտ Ազրիկոլբանկը՝ 27.4 մլրդ (36%) և Կոնվերսբանկը 27.3 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց վարկավորման հիմնական բաժինն ընկել է Ակբա-Կրեդիտ Ազրիկոլբանկին՝ 54.9 մլրդ դրամ (64%), Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը բանկին՝ 34 մլրդ դրամ (45.8%), Արդշինհիմվեստբանկին՝ 33.6 մլրդ դրամ (46%), ՎՏԲ-Հայաստան բանկին՝ 30.3 մլրդ դրամ (43.2%) և վերջապես Յունիբանկին 27.8 մլրդ դրամ

(39.6%):

Իր վարկային պորտֆելում ֆիզիկական անձանց վարկավորման տեսա-

ընդհանուր վարկավորման ծավալի 37%-ը, գյուղատնտեսությունը՝ 17%-ը, սպառողական վարկերը՝ 20%-ը, սննդի արդյու-

Աղյուսակ 2

Բանկերի ընդհանուր ակտիվների կառուցվածքի փոփոխության միտումները

մլն դրամ

	31/12/2007		30/06/2008		31/12/2008		30/06/2009	
	Կուտար, հազ դրամ	Ցես. կշիռ, %	Կուտար, հազ դրամ	Ցես. կշիռ, %	Կուտար, հազ դրամ	Ցես. կշիռ, %	Կուտար, հազ դրամ	Ցես. կշիռ, %
Առանդարտ	488,992	97.85	801,064	98.88	702,555	98.05	890,304	91.39
Ինվոնտ	6,531	1.35	12,719	2.05	22,187	3.07	39,524	5.17
Ոչ ստանդարտ	1,580	0.33	5,331	0.85	3,553	0.49	19,837	2.57
Կասկածելի	3,196	0.67	2,821	0.42	2,821	0.39	6,889	0.87
Անհուսալի	x	x	x	x	x	x	x	x
ԸՆԴՊԱՆԵՐ	480,300	100.00	821,735	100.00	731,418	100.00	784,133	100.00

կարար կշռով առաջատար է Մելաթ բանկը՝ մոտ 74.8%, սակայն պետք է նկատել, որ այն իր վարկային պորտֆելով բանկային համակարգում գրավում է ընդամենը 19-րդ տեղը:


Վերջին տարիներին վարկերի կառուցվածքում ավելացել է երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը մասամբ օժանդակում են երկարաժամկետ վարկերի պահանջարկի բավարարմանը: Կիսամյակի վերջի դրությամբ՝ ՀՀ տարածքում գործող 18 բանկ և 3 վարկային կազմակերպություն սպասարկում էին 10 միջազգային վարկային ծրագրեր, որոնց շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը տարեվերջին աճել են 114%-ով՝ կազմելով 83 մլրդ դրամ: Ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են հանդիսանում առևտուրը՝

նաբերությունը՝ 11%-ը և հիփոթեքային վարկերը՝ 10%-ը:

Ակտիվների կառուցվածքում վերջին երկու եռամսյակներում նկատվում է միջբանկային վարկերի ծավալի աճ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ բանկերը փորձում են փոխօգնության ճանապարհով աջակցել միմյանց և համատեղ ուժերով դուրս գալ ճգնաժամային իրավիճակից: Ընդ որում, միջբանկային վարկավորումը գրավիչ է բանկերի համար այն պատճառով, որ ապահովում է կայուն եկամուտ և համարվում համեմատաբար ցածր ռիսկային:

Գծ. 3-ից երևում է, որ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա ընթացքում աճել են 31%-ով, իսկ երեք տարիների ընթացքում՝ ավելի քան 161%-ով՝ տարեվերջին կազմելով 788.5 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ բանկերի նկատմամբ

մլրդ դրամ



Գծ. 1. Բանկերի ընդհանուր ակտիվների, վարկերի և պարտատոմսերում ներդրումների զինավիակ

ՀԱՍՏԱԿ ՆԱԿԱԿԵՑՄԱՆ

պարտավորությունների (124.5 մլրդ դրամ) և ընդհանուր ավանդների (50.9 մլրդ դրամ) աճի:

Կիսամյակային տվյալներով արձանագրվել է պարտավորությունների 10.1% աճ, ինչը հիմնականում ապահովվել է առաջին եռամսյակի ընթացքում, մինչդեռ երկրորդ եռամսյակում արձանագրվել է պարտավորությունների նվազում՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 17% աճի դիմաց:

Տարեվերջին դրամային պարտա-

համապատասխանաբար՝ 1.17% և 11.72%: Ընդ որում, բանկերի նկատմամբ պահանջների նվազման հիմնական պատճառը թղթակցային մոստրո հաշիվների անկումն է՝ 48.6-ով%:

Բանկային համակարգի պարտավորությունների կառուցվածքում գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներից ներգրավված միջոցներին, որոնք տարեվերջին կազմել են պարտավորությունների 61.05%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով ավելի քան 9 տոկոսային կետով:

Աղյուսակ 3.

Բանկերի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքի փոփոխության միտումները

	31/12/07	30/06/08	31/12/08	30/06/09	ԿՆՆվազում/Նվազում	Նվազում/Նվազում	մլն դրամ
Տպահանջ պարտավորություններ	209 813	188 223	186 816	210 192	-8.81%	-1.27%	12.51%
Պարտավ. բանկերի և այլ ՖԻՆ. կազմ. միջոց.	140 403	168 781	277 187	260 186	20.13%	64.25%	-6.13%
այդ բլում բոք հաշիվներ	7 214	7 040	5 422	5 144	-2.41%	-22.96%	-5.13%
Երկ. անձանց ժառանգ. ավանդ.	130 082	160 370	173 803	205 171	23.28%	8.38%	17.07%
Պարտավ. կառավ. նկատմամբ	19 303	17 795	16 223	28 781	7.81%	8.84%	77.29%
Իրավ. անձ. ժամկետ. ավանդներ	58 619	92 555	86 841	121 285	57.69%	-4.01%	36.52%
Կենտրոնիչ տոկոսներ	4 238	5 607	6 622	8 371	32.31%	18.10%	26.43%
Այլ պարտավորություններ	30 345	59 521	39 060	38 688	96.13%	-31.39%	-8.61%
Ընդհանուր պարտավորություններ	692 882	893 832	788 642	887 964	17.03%	13.66%	10.07%

վորություններն ավելացել են 15.5%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները՝ 51.7%-ով, ինչի արդյունքում դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 6.8 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 44.9%: Առաջին կիսամյակի ընթացքում պահպանվեցին նախորդ տարվա միտումները, ընդ որում գրանցվեց արտարժութային ավանդների էլ ավելի մեծ ներհոսք բանկային համակարգ, որը պայմանավորված է առաջին եռամսյակում ՀՀ դրամի կտրուկ արժեզրկմամբ:

Պարտավորությունների կառուցվածքում առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է ժամկետային ավանդների՝ 26%, ցպահանջ ավանդների՝ 12%, թղթակցային հաշիվների՝ 40% և բանկային ավանդների ու վարկերի մոտ՝ 10% աճ (Աղյուսակ 3): Թղթակցային հաշիվների կառուցվածքում ոչ ռեզիդենտ բանկերում ներգրված միջոցների կեսից ավելին բաժին է ընկել ՌԴ-ում գործող բանկերին:

Այլ պատկեր է երկրորդ եռամսյակի արդյունքում. մասնավորապես, անկում է արձանագրվել հաճախորդների ցպահանջ և բանկային ավանդներում ու վարկերում՝

Ընթացիկ տարում նկատվում է նույն ցուցանիշի աճի միտումներ՝ կիսամյակային կտրվածքով ավելանալով գրեթե հինգ տոկոսային կետով և 30.06.2009թ. դրությամբ կազմելով պարտավորությունների 65.85%-ը: Տարեվերջին դրամային ընդհանուր ծավալը կազմել է 449.5 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան 12.8% աճ, իսկ կիսամյակի վերջում 534.9 մլրդ դրամ՝ առաջին եռամսյակում արձանագրելով 18% աճ և երկրորդ եռամսյակում ընդամենը 0.8%: Ի տարբերություն դրամային ավանդների՝ նախորդ տարիներին ձևավորված առաջանցիկ աճի տեմպի միտումների՝ 2008թ.-ի և ընթացիկ տարում ավանդների աճն ամբողջապես ապահովվել է արտարժութային ավանդների աճի հաշվին՝ 37.6%-ով, այն դեպքում, երբ դրամային ավանդները նվազել են 5.3%-ով:

Նախորդ տարում նկատվել է և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունների նվազում համապատասխանաբար 11.9%-ով և 8.9%-ով: Հատկանշական է, որ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 18.2%-ով, իսկ ֆիզիկական

անձանցը՝ 0.5%-ով: Իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալներն աճել են համապատասխանաբար 51.6% և 33.6% (կիսամյակի ընթացքում՝ 36.5% և 17.1%), իսկ ժամկետային ավանդների քանակը՝ համապատասխանաբար 31.1%-ով և 13.3%-ով, ինչը վկայում է այն մասին, որ դրսևորվել են և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների խոշորացման միտումներ:

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 95% (նախորդ տարի՝ 92.4%): Տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունները նվազել են, ինչի արդյունքում, ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունները նախորդ տարվա համեմատ ավելացել են 14.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 71%:

Տարեվերջի տվյալներով ներգրաված միջոցների 26%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 53%-ը՝ մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ և 21%-ը՝ մեկ տարուց ավելի մարման ժամկետայնությամբ:

Պարտավորությունների կառուցվածքի փոփոխության միտումները վկայում են այն մասին, որ առևտրային բանկերը ֆինանսական ճգնաժամի պայմաններում փորձելով պահպանել վարկավորման տեմպերը, միջոցներ են ներգրավում ոչ միայն ներքին շուկայից, այլ նաև արտաքին աղբյուրներից, այդ թվում՝ միջազգային ֆինանսական ծրագրերից: Ընդ որում, գնալով բանկերն էլ ավելի են ներգրավվում միջազգային ծրագրերում՝ այդպիսով լուծելով «էժան» երկարաժամկետ միջոցների տնօրինելու խնդիրը, ինչը հնարավորություն է տալիս ներգրավել վարկառուներ փոխշահավետ պայմաններով:

2008թ. ընթացքում ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաճախորդների քանակն ավելացել է 8.7%-ով (81.2 հազարով), այդ թվում՝ իրավաբանական

անձ-հաճախորդներինը՝ 13.3%-ով (6 հազարով), իսկ ֆիզիկական անձ-հաճախորդներինը՝ 8.5%-ով (75.2 հազարով): Տարեվերջին ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 963.7 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակ 51.4 հազար:

Նախորդ տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 25.4%-ով և կազմել 1.4 մլն, որի 77%-ը ընթացիկ և 23%-ը ժամկետային հաշիվներ են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 1.7%-ով կամ 17.4 հազարով (հիմնականում իրավաբանական անձանց հաշիվների աճի արդյունքում) և տարեվերջին կազմել է 1,068 հազար: Ժամկետային հաշիվների քանակն ավելացել է 13.6%-ով կամ 7.3 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների աճի) և տարեվերջին կազմել 60.9 հազար: Վերջին տարիներին արձանագրվել են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների և՛ ծավալային, և՛ քանակային աճի կայուն միտումներ, ինչի նպաստել է նաև ավանդների երաշխավորման համակարգի գործունեությունը:

Պարտավորությունների վերլուծությունից երևում է, որ դրանց աճի տեմպերը եղել են ավելի ցածր, քան ակտիվներիը: Դա վկայում է, որ բանկերի ակտիվների աճը պայմանավորված է եղել ոչ այնքան ներգրաված միջոցների, որքան սեփական միջոցների աճով:

Նախորդ տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 37.2%-ով և կազմել 235.4 մլրդ դրամ (Աղյուսակ 4): Ընթացիկ տարում այս ցուցանիշն ավելացել է 5.95%-ով և կիսամյակի վերջում կազմել 249.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 14.67%-ի փոխարեն: Նախորդ տարվա ընդհանուր կապիտալի աճը հիմնականում ապահովվել է բանկային համակարգի շահույթի և կանոնադրական հիմնադրամի աճի հաշվին: 2008թ. կանոնադրական հիմնադրամը համալրել են թվով 11 բանկ՝ 36 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Կանոնադրական հիմնադրամը հիմնականում համալրվել է արտաքին

ՀԱՍՏԻԿ ՆԱԲԱՊԵՏՄԱՆ

աղբյուրներից, որի արդյունքում բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամում ոչ ռեզիդենտների փայաբաժինը տարեսկզբի 58%-ից տարեվերջին կազմել է 68%:

Ընթացիկ տարում ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորված է համակարգում առանձին բանկերի կողմից կանոնադրական կապիտալի համալրմամբ: Երկու եռամսյակների ընթացքում կանո-

կիսամյակային տվյալներով այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 3 մլրդ դրամ:

Այսպիսի կտրուկ անկումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, ինչպես արդեն նշվել է, նախորդ տարում ձևավորված համաշխարհային ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ ոչ միայն ընդհանուր բանկային համակարգի ակտիվների, պարտավորությունների, վարկավորման և ավանդների ծավալների,

Աղյուսակ 4.


Բանկերի ընդհանուր կապիտալի կառուցվածքի փոփոխության միտումները

	մլն դրամ			
	31/12/07	30/06/08	31/12/08	30/06/09
Փաստացի լրացված կանոնադր. հիմնադրամ	118,485	131,859	152,490	167,540
այդ բվիում ոչ ռեզ. փայանամակցություն	69,302	77,811	97,500	107,506
Գլխավոր պահուստ	5,802	6,420	6,458	8,206
Չբաշխված շահույթ (վնաս)	38,893	48,883	55,202	62,880
Զնդհանուր կապիտալ	171,677	198,763	236,890	249,736

նադրական կապիտալ համալրել են երկու բանկ՝ ընդհանուր 12 մլրդ դրամ ծավալով, կրկին ոչ ռեզիդենտ աղբյուրների հաշվին:

Վերջին տարիներին բանկային համակարգն ապահովել է կայուն աճ՝ միջինում ապահովելով տարեկան 18 միլիոն շահույթ (Գժ. 4): Ընդ որում, տարեց տարի բանկային համակարգի շահույթը, պահպանելով նախորդ տարվա արդյունքները, կրկնապատկել է: Ինչ վերաբերում է ընթացիկ տարվան, ապա պատկերը կտրուկ

այլ նաև շահույթի վրա: Երկրորդ՝ ընթացիկ տարվա մարտ ամսվա սկզբին ՀՀ դրամն արժեզրկվեց մոտ քսան տոկոսով, շատ բանկեր վերագնահատման արդյունքում կրեցին մեծ վնասներ, նույնիսկ այն բանկերը, որոնք մինչ այդ միշտ աշխատել էին շահույթով: Չնայած այն բանին, որ որոշ բանկեր նույն այդ վերագնահատման արդյունքում ապահովեցին գերշահույթ, այդուհանդերձ այն չկարողացավ ապահովել նախորդ տարիների շահույթը, որի արդ-




Գժ. 4. Բանկային համակարգի շահույթի փոփոխության միտումները

փոխվել է. բավական է նշել, որ կիսամյակային շահույթը նվազել է զրեթե հինգ անգամ: Ավելի լավ պատկերացնելու համար նշենք, որ եթե նախորդ տարվա կիսամյակային շահույթը միջինում կազմել է մոտ 14 մլրդ դրամ, ապա ընթացիկ տարվա

յունքում կիսամյակի վերջում արձանագրվեց ընդամենը 4 մլրդ դրամ շահույթ:

Նախորդ տարվա ընթացքում շահույթով աշխատել են 19 բանկ, որոնց ընդհանուր շահույթի մեծությունը կազմել է 28.9 մլրդ դրամ:

Բանկերի գործունեության արդյունավետության գնահատման համար շատ համակարգը, ըստ հիմնական ցուցանիշների, անցած չորս տարիներին զար-



Պճ. 5. Հահութաբերության ցուցանիշների փոփոխության միտումները

կարևոր է նաև անդրադառնալ շահութաբերությունը գնահատող ցուցանիշների՝ շահութաբերությունը ըստ կապիտալի (ROE) և շահութաբերությունը ըստ ակտիվների (ROA) վերլուծությանը:

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել են՝ հիմնականում պայմանավորված ցպահանջ պարտավորությունների և տոկոսային մարժայի նվազմամբ: Բանկային համակարգի շահութաբերությունը ըստ ակտիվների կազմել է 3%, իսկ ըստ կապիտալի՝ 13.4%, 2007թ. համապատասխանաբար 3.4% և 14.8%-ի դիմաց: Ընթացիկ տարվա համար արձանագրվել է ROA և ROE ցուցանիշների անկում՝ համապատասխանաբար 3 և 14 տոկոսային կետով: Այս երևույթը կարելի է ռեկորդային համարել նախորդ տարիների համեմատ: Այն պայմանավորված է ինչպես շահույթի, այնպես էլ կապիտալի ընթացիկ տարում գրանցված ցածր մակարդակով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ բանկային

զացել է բարձր տեմպերով: Սկսած 2008 թվականից, բանկերի գործունեությունը բնութագրող ցուցանիշները դրսևորել են առավելապես անկման միտումներ, որոնք, մեր կարծիքով պայմանավորված են հանրապետության բանկային համակարգի վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1.«ԱՐՄԻՆՖՈ» տեղեկատվական գործակալություն՝ «Հայաստանի առևտրային բանկերի ռեյթինգները» 31/12/08 N57 10/02/09:
- 2.«ԱՐՄԻՆՖՈ» տեղեկատվական գործակալություն՝ «Հայաստանի առևտրային բանկերի ռեյթինգները» 30/06/09 N59 14/08/09:
3. ՀՀ ԿԲ Բանբեր, 2008թ.:
4. ՀՀ ԿԲ Բանբեր 2009թ. երկրորդ եռամսյակ:

**ТЕНДЕНЦИИ ИЗМЕНЕНИЯ
ПОКАЗАТЕЛЕЙ БАНКОВСКОЙ
СИСТЕМЫ РА ЗА ПОСЛЕДНИЕ
ГОДЫ**

АСМИК НАГАПЕТЯН

Аспирант Армянского
государственного экономического
университета

Резюме

Целью статьи является выявление тенденций изменений основных показателей деятельности банковской системы Республики Армения и обуславливающих их факторов, анализ эффективности этой системы за последние годы. С этой целью изучены и анализированы:

- тенденции изменений активов, обязательств и общего капитала коммерческих банков, действующих на территории РА, и обуславливающих их факторов;
- структура активов, обязательств и общего капитала по элементам и коммерческим банкам;
- тенденции изменения прибыли и рентабельности как показателей эффективности деятельности банковской системы РА.

Результаты анализа показывают, что банковская система РА по основным показателям за последние четыре года развивалась высокими темпами. Однако, начиная с 2008 года, показатели, характеризующие деятельность банков, проявили преимущественно тенденции убывания, что, на наш взгляд, обусловлено отрицательным влиянием мирового финансово-экономического кризиса на банковскую систему РА.

**TRENDS OF CHANGES IN THE
BANKING SYSTEM INDICATORS
OF THE REPUBLIC
OF ARMENIA**

HASMIK NAHAPETYAN

Student in doctoral studies in Armenian
State Economic
University

Summary

The goal of the article is to reveal the trends of changes of the principal indicators in the banking system of the Republic of Armenia during recent years and the factors underlying such changes, as well as to analyse the efficiency of the system. Therefore, the following points were considered and analysed:

- trends of changes of assets, liabilities and total capital of commercial banks of Armenia;
- structure of assets, breakdown of liabilities and total capital, and commercial banks;
- trends of changes of profit and profitability of the banking system of Armenia, as indicators of efficiency.

The results of the analysis prove that, in the course of the last four years, the banking system of Armenia developed rapidly. Still, starting from 2008, the banking system indicators had a declining tendency, which, in our opinion, is caused by the adverse influence of the world financial crisis on the banking system of the Republic.

**ԳՈՒՐԳԵՆ ԱՐԱՄԱՅԻՄԻ
ՄԵԶԼՈՒՄՅԱՆ**

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի
ուսանող

«Որոգայթ փառաց» երկասիրութ-
յունը հայոց մեջ դեռ լիովին գնահատված
և պարզաբանված չէ: Մնում են բազում
հարցեր, թե արդյոք դա իրոք սահ-
մանադրություն էր, թե ոչ, թե արդյոք դա
կարող էր ընդհանրապես իրագործվել
իրական Հայաստանում և այլն: Երբեմն
«Որոգայթ փառաց»-ը նույնացվում է գե-
ղարվեստական ստեղծագործության հետ և
մոռացվում, որ հեղինակները բոլորովին էլ
այդպիսի խնդիր իրենց առջև դրված չեն
ունեցել:

«Որոգայթ փառացը» հրատարակ-
վել է Մադրասում 1789թ. և Թբիլիսիում
1913թ.-ին ու վերջերս նաև Երևանում՝
2002թ.-ին: Գիրքն ունի նաև ծանոթա-
գրությունների բաժին, որը շատ է օգնում
դժվար հասկանալի մասերի մեկնաբանման
համար: Քիչ հրատարակվելու պատճառով
նաև այն մնում է ոչ հաճախ ընթերցված,
մանավանդ, եթե հաշվի առնենք, որ
Թիֆլիսի հրատարակության մեջ կան
բազմաթիվ վրիպումներ և բառերի բաց-
թողումներ:

18-րդ դարի երկրորդ կեսից
հայկական գաղթօջախներում ձևավորվում
է հայ լուսավորական փիլիսոփայությունը,
որի ակնավոր ներկայացուցիչներից էին
Յնդկաստանի Մադրաս քաղաքում ստեղծ-
ված խմբակի անդամները՝ Հովսեփ Էմինը
(1736-1809), Մովսես Բաղրամյանը (ծն. և
մահ. թթ. անհտ.), Շ. Շահամիրյանը (1732-
1797), հայ առաջին պարբերականի՝
«Ազդարար»-ի հիմնադիր Հարություն Շնա-
վոնյանը (մահացել է 1824թ.) և ուրիշներ:

**«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ» ԳԻՐՔԸ
ՈՐՊԵՍ 18-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ
ՄԱԴՐԱՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄՊԱՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄ
ԱՊԱԳԱ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Նրանք Մադրասում 1771թ. հիմնում են
տպարան և հրատարակում «Նոր տետրակ
որ կոչի յորդորակ», «Տետրակ որ կոչի
նշավակ» և «Որոգայթ փառաց» աշխա-
տությունները, որոնք իրենց բովան-
դակությամբ, առաջադրված խնդիրներով
նոր երևույթ էին հայ փիլիսոփայության և
իրավաբանական մտքի պատմության
մեջ¹:

Հայ իրականության մեջ լուսա-
վորականությունը առավելապես դրսևորվել
է որպես գաղափարական շարժում:
Կարելի է ասել, որ հայ իրականության
մեջ եվրոպական լուսավորականության
գաղափարները ազգայնացվել ու
հարմարեցվել են տեղական պայմաններին:
Օրինակ, եվրոպական լուսավորակա-
նության կողմից հռչակված մարդու բնա-
կան իրավունքների, ըստ բանականության
պահանջների ապրելու գաղափարները
հայոց մեջ մեկնաբանվեցին որպես հայ
ժողովրդի ինքնուրույն և ազատ ապրելու
իրավունքի պաշտպանության գաղափար:
Ի տարբերություն եվրոպական լուսավո-
րականության, որտեղ շեշտը դրվում էր
անհատականության զարգացման վրա,
հայ լուսավորականության մեջ ավելի
ուժեղ էր դրսևորվում ազգային ընդ-
հանրության գաղափարը: Այսինքն՝ խոսքը
վերաբերում էր ոչ միայն անհատի, այլև
ամբողջ ազգի ազատագրության խնդրին²:

Հայ լուսավորիչների փիլիսո-
փայության մեջ կենտրոնականը «բնական
օրենք» և «բնական իրավունք» հասկա-
ցությունների վերլուծությունն է: Հասա-

¹Սեյրան Զաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2005, էջ 239:
²Նույն տեղում, էջ 240:

րակությունը բնության նման ունի իր զարգացման բնական օրենքները, որոնց պետք է հետևեն մարդիկ, ըստ այդ օրենքների և բնական իրավունքների կազմակերպեն իրենց գործունեությունը: Սարդիկ պետք է գործեն բնության օրենքներին համապատասխան: Բոլոր մարդիկ ծնվում են ազատ, ուստի ոչ ոք իրավունք չունի մարդուց խլելու նրա ազատությունը: «Մարդկային կյանքում ամենամոռալիքը, գրում է Շահամիր Շահամիրյանը, - մարդու կողմից մարդու ստրկացման փաստն է»: Պաշտպանելով «բնական իրավունքի» տեսությունը՝ հայ լուսավորիչներն առաջադրում են այն միտքը, որ յուրաքանչյուր ժողովուրդ պետք է տեր կանգնի իր բնական իրավունքներին, եթե դրանք խախտված են: Այս իմաստով նրանք դատապարտում են կրավորականությունը, հարմարվողականությունը, կոչ անում ընդվզել հակաօրինական, բռնակալական, անհատի և ժողովրդի իրավունքներն ոտնահարող իշխանությունների դեմ³:

Սադրասի քաղաքական խմբակի կարևոր հրատարակություններից է «Որոգայթ Փառաց» երկասիրությունը: Գիրքը բաղկացած է 2 մասից՝ ներածությունից, այսինքն՝ պատմական-տեսական մասից և Հայաստանի ապագա հանրապետության սահմանադրության նախագծից: Գրքի տիտղոսաթերթին, որպես հրատարակության թվական, նշված է 1773 թվականը, իսկ որպես հեղինակ՝ Հակոբ Շահամիրյանի անուն ազգանունը: Պարզված է, որ գրքի պատմական-տեսական մասը գրվել է 1773թ.-ին, իսկ բուն սահմանադրությունը՝ 1780-ական թթ. կեսերին: Ամբողջ գիրքը տպագրվել է 1788 -1789թթ. ընթացքում: Գրքի իսկական հեղինակը Շ. Շահամիրյանն է, թեև դրա ստեղծմանն իրենց մասնակցությունն են բերել նաև Հ. Էմինն ու Մ. Բաղրամյանը, իսկ մինչև

1774թ.՝ մահը, նաև Հակոբ Շահամիրյանը: Շ. Շահամիրյանը գիրքն ամբողջովին վերագրել է իր վաղամեռիկ որդուն՝ նրա հիշատակն անմահացնելու համար⁴:

«Որոգայթ փառացի» հեղինակն աշխատության վերջում նշում է, որ «Որոգայթ փառացը» մեր ծախսով տպագրվեց միայն 110 հատ, որից յուրաքանչյուրի գինը կազմում էր 10 ոսկի, որին համապատասխանում էր 40 ռուփին, որ պետք է հատկացվեր տնանկներին և աղքատներին⁵: Քիչ թվով տպագրությունը առիթ է տալիս մտածելու, որ հեղինակը մեծ հույսեր չի կապել դրա մեծ պահանջարկի հետ և այդ պատճառով էլ այդ թվով է հրատարակվել: Այսպես է մտածում նաև Լեոն⁶:

Եթե «Նոր տետրակը» կոչված էր Հայաստանի ազատագրության գործին, ապա «Որոգայթ փառացը» ապագա ազատագրված Հայաստանի այն ուղեցույցն էր, որով պետք է առաջնորդվեին պետությունը և նրա քաղաքացիները:

«Որոգայթ փառացի» վրա, ինչպես նշվեց, մեծ ազդեցություն են գործել եվրոպական լուսավորականության գաղափարները:

«Երբ հեղինակն ապացուցում է միապետության միապետության վնասակարությունը, պահանջում է, որ ամբողջ ժողովուրդը լինի իր երկրի օրենսդիրը, մենք այդ տողերի ետևում տեսնում ենք Ջոն Լոկին: Երբ նա գրում է, որ բարեկարգության պետության հիմքն ու խարիսխը կայուն օրենքն է, մենք ըմբռնում ենք ամբողջ դատողություններ, որոնք Մոնտեսքյոի «Օրինաց ոգին» անմահ գրքի ազդեցության տակ են կազմվել⁷:

«Որոգայթ փառացը» իրավաճանաչողական և գիտամեթոդաբանական առումով յուրովի ընդհանրացնում է նաև Հովհաննես Օձնեցու, Հովհաննես Սար-

³Սեյրան Զաքարյան, նշվ. աշխ., էջ 241:

⁴Խմբ. Հր. Ռ. Սիմոնյան, Հայոց պատմություն. ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000, էջ 145:

⁵Տես՝ Շահամիր Շահամիրյան, խմբ. Գառնիկ Սաֆարյան, Որոգայթ Փառաց, Երևան, 2002, էջ 239:

⁶Լեո, Երկերի ժողովածու, հտ 5, Երևան, 1986, էջ 546:

⁷Լեո, նշվ. աշխ., էջ 533-534:

կավագի, Դավիթ Ավավկաորդու, Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի և հայ հասարակական-իրավական մտքի էլի շատ ու շատ երախտավորների բեղմնավոր գործունեության արդյունքները:

Շահամիրյանի առաջին աշխատանքը չէ «Որոգայթ փառացը»: Դեռ 1778թ. Շահամիր Շահամիրյանը Վենետիկի Մխիթարյանների տպարանում լույս է ընծայում Հայաստանի և մասամբ հայ գաղթավայրերի քարտեզը: Քարտեզը ճշգրիտ պատկերացումներ էր տալիս Հայաստանի բնակավայրերի, լեռների, լճերի, դաշտավայրերի, սահմանների վերաբերյալ: Այն շրջափակված էր ազգային հերոսների՝ Հայկի, Արամի, Տիգրան Մեծի և Տրդատ 3-րդի նկարներով: Նրա զարդերը դրոշմեր, զենքեր և երաժշտական գործիքներ են, որոնք խորհրդանշում են ապստամբություն, զինված պայքար և խաղաղ կյանք: Քարտեզը նպաստելու էր հայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանը և նրան ոգեշնչելու էր ազատագրական պայքարում⁸:

Իսկ «Նոր տետրակում», որն ավելի վաղ էր հրատարակվել, այսպիսի միտք էր արտահայտվում. «Պետականությունը, որ կորցրել ենք մեր անկարգության, անգիտության ու ծուլության պատճառով, վերստին վերականգնելու ենք խոհեմությամբ ու արիությամբ: Դա հնարավոր է, եթե բոլոր հայերը մի սիրտ, մի հոգի և մի կամք դառնան ու միաբանվեն»⁹:

«Որոգայթ փառացի» վերնագիրը տարակուսանքների տեղիք է տալիս: Հեղինակը նշում է, որ այդպես է անվանվել, որպեսզի կալանքի ենթարկվի ամեն անկարգ գործ, այսինքն՝ սա նրանց համար որոգայթ է, ովքեր պետք է անօրինական գործողություններ կատարեն: Աշխատույթ-

յան մեջ մի քանի անգամ նույնպես նշվում է այդ մասին:

«Որոգայթ փառացը» պետք է ըմբռնել և որպես փառասիրության կամ փառատենչության թակարդ, կամայական ու բռնակալ մարդկանց՝ ուրիշների վրա իշխելու ցանկությունները սամծահարող օրենսգիրք ու սահմանադրություն»¹⁰:

Սակայն պետք է ասել, որ վերնագրի նման մեկնաբանությունը թույլ է տալիս ասելու, որ այն չի համապատասխանում իրական բովանդակությանը, որովհետև ավելի շատ խոսվում է ոչ թե այն մասին, թե ինչ պետք է չանել, որովհետև համապատասխան պատիժ կլինի, այլ այն մասին, թե ինչ պետք է անել:

Հեղինակը ներածության մեջ տալիս է մի փոքր ինքնակենսագրական: «Թորգոմի ազգից հայորդիների մեջ փոքրավորներից մեկն եմ, Նախիջևան գավառից, որ աշխարհի հյուսիսային կողմից 42-րդ աստիճանի վրա է, բարձրագահ Մասիս լեռան ստորոտում, իսկ այժմ, մեր Տեր փրկիչ Քրիստոսի 1773 տարում, գտնվում եմ Կորմանդել օվկիանոսի ափին, նավահանգիստ Մադրաս քաղաքում»¹¹:

Սա վերաբերում էր Հակոբ Շահամիրյանին, իսկ Շահամիր Շահամիրյանը Մադրաս էր եկել Նոր Ջուղայից, զբաղվել դերձակությամբ, ապա՝ առևտրով:

«Որոգայթ փառացը» սկսվում է ընթերցողին ուղղված խոսքով: Հեղինակն աղաչում է սրբերին, որ նրանք բարեխոս լինեն Աստծուն, որ ների իշխանների, ժողովրդի և մեր նախնիների մեղքերն ու հանցանքները, որ իր շնորհն ու իմաստությունը թափի հայ ազգի հոգու վրա, որպեսզի ի վիճակի լինենք հավատարիմ մնալ մեր իրավունքին ու արդար օրենքներին և ազատորեն կարողանանք

⁸Պ. Ռ. Սիմոնյան, նշվ աշխ, էջ 144:

⁹Նույն տեղում, էջ 143-144:

¹⁰Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 248:

¹¹Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 71:

պաշտել Աստծուն, կարողանանք բարեվայելուչ կառավարել մեր երկիրը:

Արդեն սկզբում պարզ է դառնում, թե հեղինակն ում վրա է հույս դնում՝ Աստծո վրա, առանց որի հնարավոր չէ հասնել հաջողության:

Նա ասում է, որ ինքն անձնական ցանկությունն չունի որևէ փառքի և իշխանության, այլ միայն սիրով կապված է իր ազգի և երկրի հետ:

Խնդրում է ընթերցողից, որ այս գիրքը ձեռք բերելով՝ գոնե թող 3 անգամ ընթերցի սկզբից մինչև վերջ, իսկ եթե չհասկանա, ընտրի մի հասկացողի և հարցնի¹²:

Հայաստանի գովաբանությունը մեծ դեր է կատարում աշխատության մեջ: Սա ընդգծված միտում ունի՝ ապացուցել մարդկանց, որ իրենք պետք է պայքարեն ընտրյալ հայրենիքի համար, որն Աստծո հատուկ ողորմածությունն է վայելում: Դա պետք է ոգեշնչեր պայքարող մարտիկներին:

Նա ասում է, որ արևի ներքո եղած երկրներից լավագույնը, ամենաքաղցրը և պատվականագույնը Արարատյան երկիրն է: Այնուհետև մի քանի օրինակներ է բերում իր ասածը հաստատելու համար՝ ներկայացնելով Նոյի, Հայկի, Աբգարի և քրիստոնեության ընդունման պատմությունները և զարմանալի չի համարում, որ հայոց երկրի թագավորության կորստից 400 տարի հետո, հայն ամեն տեսակ զրկանք է կրելով, այնուամենայնիվ պահպանել է իր հավատը: Այս օրինակներից բխեցնում է, որ Արարատյան աշխարհը վայելում է Արարչի շնորհը, սերը և ողորմածությունը: Խոսվում է նաև հայերի հյուրընկալության սովորության մասին և հավաստում, որ այն Աստծո կողմից ավանդվել է միայն հայերին:

Դրանից հետո մի փոքր պատմական ակնարկ է տրվում: Ըստ

հեղինակի՝ մեկը մեծավոր և մյուսը փոքրավոր չպիտի լինի, այլ բոլորը հայոց երկրում պետք է թագավոր լինեն:

Չնայած անկախության կորուստը մեր իշխանների և մեր մեղքով է եղել, սակայն նշվում է. «Մենք պարտավոր ենք մերել մեր նախնիների բարեսրտությունը և չարագործությունները»¹³:

Բազում տեղեր մատնանշվում է հայոց մեղքերի մասին և ընդգծվում դրանք ուղղելու մասին: Այդ իմաստով նա նմանվում է Արիստակես Լաստիվերցուն, սակայն կա էական տարբերություն: Լաստիվերցին այն կարծիքին էր, որ հայերը մեղավոր ժողովուրդ են և բացառում էր ուղղվելը, իսկ «Որոգայթ փառացի» հեղինակը կարծես թե այդ մեղքի գաղափարը հորինել էր՝ նախկինում կատարած սխալներից խուսափելու համար:

Ընդհանրապես «Որոգայթ փառացը» մի աշխատություն է, որը կարելի է անվանել իրավունքի վրա հիմնված և առանց դրա ամեն հաջողություն բացառելու աշխատություն: Նույնիսկ կարելի է ասել, որ մի փոքր էլ կարծես չափազանցվել է օրենքի նշանակությունը: Բոլորը, ովքեր ապրում են օրենքով, կարող են հաջողության հասնել, իսկ հակառակ դեպքում հաջողությունը բացառվում է: Իհարկե, օրենքները կարևոր դեր են կատարում, սակայն ոչ միայն: Նշենք, որ բացատրել միայն օրենքների բացակայությամբ հայոց պետականության անկումը, սխալ է: Չնայած չկային համակարգված օրենքներ հայոց պետության մեջ, սակայն կային սովորութային իրավունք, կային որոշակի բարոյական պահանջներ: Բացի այդ, Կիլիկյան թագավորությունը, որն ուներ այդ ժամանակի համար առաջավոր օրենքներ, մույնպես կործանվեց:

Թե ինչպես կարելի է, որ ամեն մարդ թագավոր լինի իր երկրում, ինչը հեղինակի մոտ անընդհատ արծարծվող

¹²Տես՝ **Շահամիր Շահամիրյան**, *Ուշվ. աշխ.*, էջ 16:
¹³Տես՝ *Ուշվ. աշխ.*, էջ 12-13:

գաղափար է, նշվում է. «Իսկ ինչպես կարող է միմիայն մի մարդ թագավոր լինել անբողջ ազգի և ազատ ժողովրդի վրա»¹⁴:

«Որոգայթ փառացի» ներածության մեջ բազմիցս ընդգծվում է օրենքի իշխանության գաղափարը և անընդհատ նշվում է, որ ոչ ոք չպետք է իշխի ոչ մեկի վրա, բացի օրենքներից: Հիմնավորվում է նաև, թե ինչու են պետք օրենքները:

Շահամիրյանն ասում է. «Եթե կամենում եք ազատ լինել, հավասար կերպով թագավորել ձեր երկրում, ազատորեն տեր լինել ձեր ստացվածքին, պատվի արժանանալ ձեր առաքիլության համար, սրբել անօրինության կեղտերը և մաքրել ձեր խղճմտանքը, անհրաժեշտ է, որ ձեզ համար շինեք իմաստության տներ, ըստ Սողոմոնի խոսքի՝ ձեզ համար կանգնեցնեք սյուներ խորհրդականներով և ձեր բանական հոգու զորությամբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության համաձայն, ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից: Ինչ որ դուք կազմեք, այն էլ պիտի իշխի ու թագավորի ձեր գործերի վրա, որպեսզի որևէ մեկը ճանապարհ չգտնի տնօրինություն կատարելու, իսկ օրինախախտն էլ՝ գանգատվելու իր պատժի համար, չէ որ իր կատարածի վճիռն ինքն է կտրել՝ ըստ իր կամքի ու ցանկության, ինքն անձամբ ազատորեն թագավոր լինելով՝ օրենքներ է սահմանել և հրաման տվել թագավորելու իր վրա, ինքն իրեն պարտավորեցրել, հնազանդ դարձրել իր օրենքներին՝ համբերելով և ընդունելով իր գործերի հատուցումը՝ թե պատիվ և թե պատիժ՝ ըստ իր օրենքների»¹⁵:

Ընդհանուր առմամբ, ներածու-

յունը համեմված է փիլիսոփայական մտքերով և Աստվածաշնչի որոշ մասերի մեկնաբանությամբ:

Շահամիրյանն ասում է, որ «Պետք է ջանալ ու պահպանել պատիվը մեր հոգու զորության, որը մեզ է ավանդվել Տիրոջ և Արարչի փչմամբ, որպեսզի մեր կյանքը վարենք իբրև բանական և արժանապատիվ մարդ: Պետք է մեզ համար ընտրենք վարք, կարգ ու կանոն՝ մեր կյանքի ընթացքի համար և մեր փոփոխական բնությունը լծորդենք անշարժ օրենքին, որպեսզի ըստ մեր բնության խառնվածքի կյանքում ժամանակ առ ժամանակ մեր միտքը հակում հանդես բերի դեպի անբան անասուններին հատուկ արարքները, մեր օրենքի շղթաներն ու կապանքները կապկպեն ու սաստեն մեր բնությունը և օրենքով դատապարտեն, որ ամենքս էլ արժանավայել կերպով հաստատուն մնանք մեր կարգ ու սահմանին և օրենքին, ինչ որ ընտրել ենք մեր բնության հասուն շրջանում»: (Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 24): «Ոչ մի գործ երբեք չի կարող ընթանալ իր ուղիղ ճանապարհով, եթե ըստ օրենքի չլինի»¹⁶:

Օրենքը, գրում է Շահամիրյանը, մեր եկեղեցին է, տիրակալը և թագավորը¹⁷:

Արեգակի ներքո, երկրի երեսին կամ ծովում չկա ոչ մի բան, ինչ էլ ուզում է լինի, որ շարժվի, մինչև որ չունենա սահմաններ և օրենքներ¹⁸:

Հայ լուսավորիչները հանդգնած են, որ մեզ անհրաժեշտ է ջանք թափել ընտրելու լավագույն օրենքներ, որ անխախտելի օրենքը մեր աշխարհը կլցնի մարդկանցով, կերջանկացնի մեզ, կմղի բարի գործերի¹⁹:

Հեղինակը նշում է. «Ինձ այսպես է թվում, որ անկարգության պատճառով

¹⁴Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 14:

¹⁵Նույն տեղում, էջ 14-15:

¹⁶Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 28:

¹⁷Նույն տեղում, էջ 28:

¹⁸Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 29:

¹⁹Սեյրան Ջաբարյան, նշվ. աշխ., էջ 241-242:

բազմիցս այնքան շատ վնաս ու ավերածություն է հասցվել հայոց ազգին, աշխարհին ու բնակիչներին, որ վնասի որչափությունը ոչ ոք չի կարող գրչի շարադրանքով նկարագրել»²⁰:

Ըստ հեղինակի՝ երբ ուրիշ ազգերը ծանոթանան մեր ազատությանն ու կարգուկանոնին, այլևս ճանապարհ չեն գտնի հայոց մեջ մտցնելու իրենց նենգ ու անհանգստացնող մարդկանց, երբ, ըստ հեղինակի, Հայաստանի համար վնասն առավել մեծ է եղել Հայաստանյայց դավաճությունը հայազգի ուրացողների և այլոց դավաճություններն ընդունողների ջանքերով, քան Հայաստանի թշնամիների ու բարբարոս բռնավորների պատճառով²¹:

Անցյալի մեղքերի պատճառով էր հեղինակը բացատրում հայոց պետականության կորուստը և այն վիճակը, որն այժմ տիրում է Հայաստանում, երբ օտարները Հայաստանում անում են այն ամենը, ինչ ուզում են:

Նա քննադատում է հայ թագավորներին և իշխաններին, որոնք անիրավ դարձան և գոռոզությամբ ու ինքնահաճությամբ վարելով իրենց իշխանությունը՝ սխալ ճանապարհով ընթացան և կորցրին հայոց աշխարհի փառքը, սերունդներին մատնեցին գերության, իսկ երկիրը ժառանգություն թողեցին ուրիշ ազգերի: Բայց այնուհետև ասվում է, որ Աստծո օգնությամբ հայոց զավառները պետք է լցվեն նորից բարեպաշտ սերունդներով:

Ընդհանրապես Աստծուն մատնանշելը և Աստվածաշնչից օրինակներ բերելը զորքում սովորական է:

«Պողոս առաքյալն է մեզ սովորեցնում, թե բոլոր խոսքերի համար Սուրբ գրքի վկայությունները պետք է լինեն: Նախ Տերն իր բերանով խոսեց իմաստության մասին՝ ասելով, թե երբ

որևէ մարդ տուն է շինում, պետք է հիմքը դնի վեմի վրա և հեղեղած ջրերն այն չեն կարողանա քանդել»²²:

Շատ տեղերում մատնանշվում է, որ Աստված մարդուն ստեղծել է և նրան տվել բանականություն կամ բնություն, որի վրա միայն Աստված կարող է իշխել, իսկ երկրի վրա ոչ ոք չի կարող նրա վրա իշխել:

Չնայած հայերը թողել էին, որ իրենց բանականության վրա իշխեն, բայց ասվում է. «Հնազանդված ժողովուրդները նույնն են, ինչ և իրենց թագավորները, որովհետև ամենքն էլ համահավասար խաբված են: Հետևաբար, նա բանական բնությամբ մարդու համար թագավոր չէ, եթե ոչ հովիվ՝ անբան կենդանիների վրա»²³:

Իսկ իշխանները, որոնք գիտակցելով էին դրան գնացել, պախարակվում էին:

Սակայն դրանով ամեն ինչ կորած չէր համարվում: Ըստ Շահամիրյանի՝ Արարիչը ներել է հայերի մեղքերը ու հանցանքները և ժամանակ է տվել ուղղելու համար²⁴:

Եվ հետևում է հեղինակի եզրակացությունը, որը բխում է նրա նախորդ մտքերից: «Սրանից հետևում է, որ մեկ մարդու ձեռքը չի կարող իշխանություն տրվել, այլ պետք է մեզ իշխի օրենքը և ոչ թե մի ինքնակալ իշխան, և բոլորը պետք է ենթարկվեն միայն օրենքներին, որը բարություն է բերում ընդհանուրին»:

Օրենքի գործադրողները չպետք է իշխեն, այլ նրանք միայն օրենքի կատարողներ են և պետք է նրանց արժանին մատուցել, իսկ օրենքը խախտելու համար՝ պատժել: Նրանք չեն կարող ոչ մի բանով առավելություն ունենալ մյուսների նկատմամբ: Նրանց առավելությունը միայն իրենց պաշտոնով հավատարմորեն ծա-

²⁰ Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 31:
²¹ Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 33:
²² Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 23:
²³ Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 26:
²⁴ Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 18:

ռայելն է հանուն իրենց ազգի²⁵:

«Ով որ ձեր մեջ մեծ լինի, թող նա դառնա սպասավոր»,-նշում է Շահամիրյանը²⁶:

Ըստ հեղինակի՝ հայոց ազգը պետք է ներկայանա իբրև մի կամք, մի խորհուրդ, մի ներգործություն, մի պատիվ և մի պատիժ: Ամենքը պետք է միմյանցից գոհ լինեն:

Ասվում է, որ ոչ ոք չպետք է իրավունք ունենա մտքում ձգտում ունենալ, որ թագավոր դառնա մարդու բանական բնության վրա, որը մեծ մեղք է, որովհետև մարդու բանական բնության վրա թագավորելը միմիայն Աստծու գործն է: Դա մեծ մեղք է և կարող է բերել պատժի: Ի տարբերություն դրանց՝ օրենքով թագավորողները թույլ են տալիս իրենց կոչել թագավոր, թագավորական պատվի արժանացնել, բայց լավ գիտակցում են, որ իրենց ժողովուրդների գլուխներից մի մազ անգամ չեն կարող սև դարձնել կամ սպիտակ: Այդ պատճառով չպետք է թողնել, որ որևէ իշխան բարբարոսաբար թագավոր դառնա հայ ժողովրդի, Հայաստան երկրի, բանական բնության վրա, բացի Տեր Աստծուց:

«Անասուններն էլ չունեն իրենց մեջ մեկը, որ ինքնակալ և ինքնական հրամայող լիներ նրանց վրա, ուրեմն որքան անոթ է մեր բանականության համար լինել հնազանդ մի մարդու, որ մեր նմանությունն ու մեր բանականությունն ունի, որ ինքնական հրամայող է դառնում մեզ վրա»²⁷:

«Չպետք է կատարեինք այն սխալները, որը մեկ անգամ պատժի էր բերել Աստծո կողմից: Իսկ դա չկատարելու համար պետք էր, որ միայն օրենքը իշխեր մեզ և ոչ թե մարդու կամայականությունը»:

Ներածության մեջ բազում հերո-

սական օրինակներ են բերվում՝ հայ ժողովրդին ոգեշնչելու համար:

«Ներկայումս լսում ենք նոր բռնկման մասին, թե Վաշինգտոն անունով մեկը՝ բրիտանական ազգից, ծնված մեծբրիտանացիների հսկողության տակ գտնվող Ամերիկայում, ընդվզելով տերերին և բազմաքանակ զորք հավաքելով Ամերիկայի հասարակ ժողովրդից՝ ջանում է ու չարչարվում ձեռք բերել ազատություն և չենթարկվել որևէ մեկին: Թեպետ դեռ չի երևում, թե վերջը ինչ է լինելու, բայց ամերիկացիների սրտի ցանկությունը բնական է մարդու բնությանը, քանզի երկրի երեսին մարդուն տրված բարիքների մեջ ավելի քաղցր ոչինչ չկա, քան ազատությունը»²⁸:

Բացի այդ, հեղինակի վրա մեծ ազդեցություն էր թողել հանրապետական Հռոմը և նա ցանկալի էր համարում, որ Հռոմի պատմությունը հայերեն թարգմանվի և մաղթում էր, որ այդ հռչակավոր հանրապետության ոգին իջնի հայերի վրա, բացի, իհարկե, հռոմեական կրոնից:

«Որոգայթի» երկրորդ մասը ազատագրված Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կառուցվածքի ծրագիրն է, սահմանադրության նախագիծը: Սահմանադրության նախագիծը, որ ունի 521 հոդված, ներկայացնում է ապագա Հայաստանի պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը, նրանց իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Առանձին հոդվածներ են նվիրված տնտեսության, ֆինանսների, լուսավորության, առողջապահության, դատարանների, ընտրությունների, զինված ուժերի կազմակերպման հարցերին և այլն:

Շահամիրյանի ծրագրում կան թե՛ սահմանադրական դրույթներ, թե՛ քրեական

²⁵Տես՝ նշվ. աշխ., էջ 36:

²⁶Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 28:

²⁷Լեո, նշվ. աշխ., էջ 538:

²⁸Շահամիր Շահամիրյան, նշվ. աշխ., էջ 72:

և քաղաքացիական օրենքներ:

Շահամիրյանը չի կարողացել մի հայտնի սխեմայով դասավորել իր օրենքները: Ընդամենը 521 հոդված է նա խմբագրել, և դրանք խառնված են, վայրիվերո. երևում է, որ հեղինակը ինչ-որ գտել է կամ ինչ-որ հիշել է, իսկույն գրել է՝ չմտածելով կարգի և հետևողակա-

նության մասին: Խառն են և հայացքները²⁹:

Եվ այնուամենայնիվ «Որոգայթ Փառացը» մի անմահ ու անզուգական հուշարձան է հայ իրավական մտքի պատմության մեջ:

**КНИГА “ВОРОГАЙТ ПАРАЦ” КАК
ОТРАЖЕНИЕ ОЖИДАНИЙ
АРМЯНСКОЙ ОБЩИНЫ
МАДРАСА КОНЦА 18 ВЕКА О
БУДУЩЕЙ ОСВОБОЖДЕННОЙ
АРМЕНИИ**

ГУРГЕН МЕДЖЛУМЯН

Студент Государственной академии
управления РА

Резюме

“Ворогайт Парац” занимает важное место в армянской действительности и как значимый юридический документ, и как система взглядов просветителей армянской освободительной борьбы о будущей освобожденной Армении.

В статье дано общее описание, цели, пути достижения этих целей, предлагаемые “Ворогайт Парац”-ем.

Главным образом обращено внимание на мнения авторов относительно того или иного вопроса.

Цель статьи состоит не в том, чтобы рассмотреть “Ворогайт Парац” как чисто юридический документ, а обрати внимание на причины и окружающую среду его создания, на предрасположения авторов, которые недостаточно были обсуждены.

**“VOROGAYT PARATS” BOOK AS A
REFLECTION OF THE EXPECTA-
TIONS OF MADRAS’S ARMENIAN
COMMUNITY AT THE END OF THE
18TH CENTURY REGARDING A FU-
TURE FREE ARMENIA**

GOURGEN MEJLUMYAN

Student of RA State
Management Academy

Summary

“Vorogayt Parats” has its important place in Armenian reality both as a juridical and important document as the imagination of those devoted to the Armenian struggle for freedom, for a future, free Armenia.

The common description, aims, and ways of reaching the aims of the work are given in the report.

Mainly the opinions of the authors about this or that question are examined.

The aim of the report is not to consider ‘Vorogayt Parats’ as just a juridical document, but to pay attention to the creation of its environment, reasons, the authors’ inclinations, which have been very little discussed.

²⁹ Լեոն, 62վ. աշխ., էջ 539:

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՀՈՊԱԿԾԱՆՈՐ ՄՆՈՒՄԱՆ ԱՆՐԳՄ

«Վասն արդարութեան» հանդեսում տպագրության համար ներկայացվող գիտական հոդվածները՝ խմբագրությանը հանձնվում են էլ. փոստի, տեղեկակրիչի (flesh), խտասկավառակի կամ պնակիտի միջոցով, ունենում են՝

- համապատասխան ամփոփումներ, երկու լեզվով, էջի 1/3 չափով,
- գրականության ցանկ,
- անհրաժեշտ հղում-ծանոթագրություններ, (տողատակում):

-խմբագրությանն են ներկայացվում՝ հնարավորինս զերծ համակարգչային մուտքագրման սխալներից,

-գրաֆիկական ֆայլերը (նկարներ, գրաֆիկական օբյեկտներ և այլն) ունենում են նվազագույնը 300 ժբ կետային խտություն,

-«և» կցագիրը ներկայացվում է մեկ գրանիշով՝ և (եւ-ի փոխարեն),

-նյութերը ներկայացվում են Arial Armenian (հայերեն), Arial LatRus (ռուսերեն) տառատեսակներով:

Հոդվածները կից ունենում են անհրաժեշտ տվյալներ հեղինակ(ներ)ի մասին, այդ թվում՝ հեռախոսահամար, էլ. փոստի հասցե:

Հեղինակի անուն, ազգանուն, հայրանունը և պաշտոնը երեք լեզուներով:

Հեղինակի նկարը՝ նվազագույնը 300 ժբ կետային խտությամբ:

ՀՈՊԱԿԾՆԵՐԻ ԸՍՏՐՈՒՅՈՒՄ ԱՆՐԳՄ

«Վասն արդարութեան» հանդեսի խմբագրությունում ստացված հոդվածների նախնական ընտրությունը կատարում է հանդեսի գլխավոր խմբագիրը, այնուհետև հոդվածը հնարավոր միջոցներով ուղարկվում է հանդեսի գիտական խմբագրական խորհրդի համապատասխան անդամ(ներ)ին՝ գրախոսության:

Տպագրվում են դրական գրախոսության արժանացած հոդվածները:

Գրախոսության համար խմբագրությունը կարող է դիմել նաև այլ՝ ոչ խմբագրական խորհրդի անդամ մասնագետի: Ընդունելի են նաև հոդվածի հեղինակի ուղարկած՝ իր հոդվածին վերաբերող գրախոսություններ, եթե վերջիններիս հեղինակը գիտությունների դոկտոր կամ թեկնածու է:

Գիտությունների դոկտորների հոդվածները կարող են չգրախոսվել:

Հոդվածի տպագրությունը կարող է մերժվել նաև հոդվածի ոչ պատշաճ գրագիտության պատճառով:

«Վասն արդարութեան» իրավական գիտամեթոդական հանդեսում հոդված տպագրել ցանկացող հոդվածագիրներն այնուհետև պետք է ստորագրեն ներքոբերյալ հայտարարությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՅՈՒՄ

Սույնով հավաստում եմ, որ «.....» (գրվում է հոդվածի վերնագիրը) հոդվածի հեղինակը ես եմ, այն համացանցային կայքէջերից վերցված և/կամ որևէ այլ լեզվից կատարված թարգմանություն չէ: Հոդվածում արտահայտված մտքերը և ամբողջ շարադրանքն իմն են, իսկ այլ հեղինակների աշխատանքներից վերցված բոլոր մտքերը և մեջբերումները կատարված են համապատասխան աղբյուրների պատշաճ հղումներով: Ես հայտարարում եմ, որ ծանոթ եմ հեղինակային իրավունքի պաշտպանության վերաբերյալ ազգային և միջազգային օրենքներին և տեղյակ եմ դրանց խախտումների համար նախատեսված պատասխանատվության մասին:

Հոդվածագիր՝ ստորագրություն